





Ա.

ԴՐԵԴՈՐ ԵՐՃՐՈՒՄ

ԵՎ ՆՐԱ

ՅԱՎԱՐ ՁԻՆԴ ՏԵՐԻԱԾ

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՆԵԱՆ  
ԱՌԴՅՈՎ

(1865—1890 թ.)

Աշխատասիրեց

Ա. Ե Ր Ի Ջ Ե Մ Ա Ն Տ



ԹԻՖԼԻՍ

ԷՊՐԵՍ Ա. Ե Ր Ի Ջ Ե Մ Ա Ն Տ  
Խորհրդական և մարզական գործարք ամենամասնաւոր գործարք է:

1890

Дозволено цензуромъ, Тифлисъ, 1890 г. 12-го марта

Тип. "Ароръ" Т. Я. Назарьянъ, узол. Головинъ пр. и Барят. ул.

# ՄՊՏՄԵԳՐՈՒԹԻՒՆ

## Գլուխ Ա.

Գեղրգ Արծրունու ցեղի ժազման Խմեղիր—Տոհմական ծառը ԽVI դարից  
Մինչեւ Անդրկան:—Ռուսաց տևած արտօնութիւնը այդ ցեղին:—Գեղրգ առա  
Արծրունու կիանըը Թիֆլիսում:—Ներսէն Աշոտարակեցու բարկամութիւ-  
նը:—Երևանի Արծրունի:

1813 թւականն էր և Թիֆլիսը, իր կրած հարւած-  
ներից լետոյ, դեռ ոտքի չէր կանգնել ու տիսուր տեսարան էր  
ներկայացնում: Չընալելով որ Ռուսները մօտ տասնեւերկու-  
տարի տիրապետում էին Վրաստանում, երկիրս տակաւին շուն-  
չի չէր գալիս: 1795 թւին Աղա-Մահմէդ-Խանը Թիֆլիսը վլա-  
տակ և անմարդաբնակ դարձեց: Բնակիչների մի մասը այն  
ժամանակ ջարդեցաւ տեղնուտեղը, միւսը գերի տարւեցաւ  
և հազիւ թէ քաղաքացոց երրորդ մասը ազատւեցաւ՝ ապաս-  
տան գտնելով Վրաստանի լեռնաբնակ գիւղերում: Բայց ամեն  
ինչ քարուքանդ անելուց և մոխիր դարձնելուց լետոյ հազիւ  
թէ գերիներով և աւարներով ծանրաբեռնւած Պարսիկները  
հեռացան Վրաց սահմաններից, որ փախած քաղաքացիք շտա-  
պեցին դառնալ Թիֆլիս՝ ոմանք իրանց արիւնակիցների գիւղե-  
ները ժողովելու և թաղելու, ոմանք իրանց հանգած օջախ-  
ների վրայ նորից ծուխ բարձրացնելու և ոմանք իրանց  
գերիների ազատութեան համար ժողովարարութիւն անելու:  
Դժբախտ եղաւ և այդ վերադառնողների վիճակը, որովհետեւ  
հետագայ 1797 թւին սկսեց քաղաքիս մէջ ժանտախտը  
(չումա), ապա հետևեց սարսափելի սովը և Թիֆլիսը նորից  
դատարկւեցաւ:

1801 թւի փետրւարին բացւեց արտօղ Ռուսաց վարչութիւնը և բնակիչները, ապագալ անդորրութեան վրայ վստահանալով, կրկին սկսեցին ժողովւիլ և շինուիլ, այսպէս որ երկու տարուանից յատու Թիֆլիսում կար մօտ 3000 տուն բնակիչ, 85 բազազի խանութ, 63 մանրում ծախող, 310 արհեստաւոր, 76 մթերավաճառ և 40 գինէվաճառ։ Նինութիւնների և խանութների պահանջը շատ մեծ էր, իսկ շինողները—սակաւ՝ թէ աղքատութեան և թէ թանգութեան ու գրամի բացակայութեան պատճառով. քաղաքումս ոչ մի ճարտարապետ կար, իսկ որմնադիրներ հազիւ տասը հոգի էին հաշւում<sup>1)</sup>։ Արդարիսի գրութեան մէջ քաղաքը նորանոր աղէտների ենթարկեցաւ։ 1802 թւի նորմըների 17-ին սարսափելի հրդեհը ալլեց բազագիւանան և Արաց Սիօն եկեղեցու շուրջ բարոքը։ Վնասը այնքան մեծ էր, որ Թիֆլիսեցիք երկար ժամանակ այս անցքը համարում էին իրեւ մի գարեզլուխ և իրանց ծննդեան տարիքը լիշեալ թւականով էին որոշում։ Եկաւ 1803 թւի ամառը և ժանտախտը նորից սկսեց Թիֆլիսում ջարդը՝ ուտեւց մօտ մի տարի։ Այնուհետև երկար ժամանակ պարտելով երկրիս զանազան գաւառներում, 1811 թւի սկզբին ժանտախտը կրկին անգամ հասաւ Թիֆլիս։ Քաղաքացիք, տագնապի մէջ ժողովեցին իրանց կալքը եկեղեցիների մէջ և իրանք փախան։ Թիֆլիսը անմարդացաւ. խանութները փակ էին, գօրծերը գաղարած, շրջակալից հետ յարաքերութիւնները կտրւեցան, սովը սաստկացաւ։ Աշնան գէմ հիւանդութիւնը մեղմացաւ և տէրութիւնից կազմած մասնաժողովը պարտականութիւն ունէր փախած թիֆլիսեցիներին վերադարձնել իրանց քաղաքը։ Ժանտախտին հետևեց 1812 թւի սովը և Թիֆլիսը բարի օր չէր տեսնում։

Ահա արդարիսի անմխիթար գրութեան մէջ էր Կովկասի մալրաքաղաքը, երբ 1813 թւին ներկարացաւ երկրիս կառա-

1) Акты Кав. Арх. Ком., т. II, докум. 94.

վարչապետ զենքերալ Բարիշչեւին մի վանեցի պատւելի հալ և ցանկութիւն լայտնեց գաղթել զերդաստանով գալ Թիֆլիս և դառնալ Արևաց Հպատակ։ Դա վանեցի Գէորգ աղա Երան-Արծրունին էր, որ իր խելքով, ազգեցութիւնով և Հարստութիւնով նշանաւոր էր ամբողջ Տաճկա-Հայաստանում։ Մեզ Համար մուժ է մնում, թէ Բնը դրդեց Գէորգ աղային կատարել մի այդպիսի մեծ քայլ՝ Սամանցոց բռնութիւնն էր արդեօք, անձնական որ և է անբաւականութիւն, թէ մի ուրիշ պատճառ<sup>2)</sup>։ Բայց և այնպէս, այդ պատճառները շատ ծանրակշիռ պիտի լինէին, քանի որ նա, իրան Արծրունեաց թագաւորների պայտագոտ և ժառանգ Համարելով, այսօր բարի կամքով թողնում էր Արծրունեաց աշխարհը, իր հայրենիքը, նախնեաց շիրմաները, ազգականներին, մեծամեծ անշարժ կալւածները և, վերջապէս, իր մտերիմ հալ ժողովուրդը, որից իշխանական լարդ և պատիւ էր վայելում, — և այդպիսի անձը, գրեթէ ամեն ինչ թողած, ընդունում է Հպատակութիւն ուրիշ տէրութեան։ Գժւար է նմանապէս առել, թէ Բնը ստիպեց Գէորգ աղային իր նշանաւոր Հարստութիւնով գալ բնակւել Թիֆլիս քաղաքում, որի այն ժամանակաւ աղքատ և աննախանձելի վիճակը բաւականաչափ նկարագրեցաւ վերելու Սակայն, որքան աննպաստ Համարէր Գէորգ աղայի Թիֆլիս գաղթելը լատկապէս իր անձի Համար, այնքան օգտաւէտ Համարեցաւ այդ բանը քաղաքոցոց և տէրութեան աչքում։ Հեռատես Բարիշչեւ կառավարչապետը, տե-

2) Գէորգ Արծրունին իր «Կարաստան Խրատուց» գրքի մէջ իր մասին ոտանաւորով գրում է՝

«Էր ինձ նեղութիւն փորձանք բազմագին,

«Ի հայրենիս իմ ընդ իս անցք անցին,

«Զինչ (?! օգուտ էր ինձ սիրել զհարենին,

«Ցումպէսո վատնել գքանքար չնորհին։

Բայց թէ ինչ էր այդ վորձանքը, կամ ինչի մէջ էր կայտնում կըած նեղութիւնը — լաւոնի շէ։

գեկանալով Արծրունու ծագման, հարստութեան և անձնական յատկութիւնների մասին, առաջարկեց Գէորգ աղալին իր հովանաւորութիւնը և աջակցութիւնը: Եւ ահա 1813 թւին Գէորգ աղա Երան-Արծրունին, իր գերդաստանով հանդերձ, տեղափոխւցաւ Վանից Թիֆլիս: Բայց գալով մի անձանօթերկիր, ուր ոչ իրան են ճանաչում, ոչ ինքը ալլոց, ուր անձնական յատկութիւններից գերազանց էր գաստում տոհմական ծագումը, և ուր, ուրեմն, լայն ասպարէզ էր բացվում յենւիլ անցեալ փառաց վրայ, մանաւանդ որ արդ փառաւոր անցեալն էլ կար,—Գէորգ աղան պարտք համարեց ապահուել իր սերունդի համար իրանց տոհմական ծագման արտօնութիւնները: Այս նպատակով, ինչպէս երեւում է հետագայ գրութիւններից, Գէորգ աղան շինած է իր տոհմագրութիւնը, որ վաւերացրել են Հայոց բարձրաստիճան հոգևորականք և աշխարհականք, որպէս Վասպուրական աշխարհում, նոյնպէս և Ս. Էջմիածնում: Արդ տոհմագրութեան ուռերէն թարգմանութիւնը, որ բաւականին մութն է և տգեղ, ներկայացւած է գեներալ Ռաֆշէւին 1814 թւականին: Զունենալով հայ ընազիրը, ստիպած ենք յառաջ բերել ալստեղ ալդ գրութիւնը ուռերէնից նորէն հայերէնի վերածելով բառ առ բառ, թէև գրանով գրածի իմաստն աւելի ևս մըթնանում է:

„Տոհմագրութիւնն Արծրունու ցայի:—1 նոկտեմբերի  
1814 յժի:“

•Որովհետեւ ամենքին ցանկալի է տեղեկութիւն ունենալ իր ցեղի սկզբնական ծագման մասին, և արդէն շատերը ջանք գործ գնելով յաջողած են հասնել ալդ նպատակին, որպէս և մեր ազգի մէջ, Հայոց թագաւորութեան ժամանակ, այդ հոգատարութիւնը միշտ եղել է ու յիսիայն թագաւորութեան ընկներուց իտու ալզալիսի ձբդ-

տումն արհամարւել է, — վասնորոյ ես, ներքոյ ստորագրեալս, խօնարհաբար խնդրում եմ՝ բարեկրօն հոգեորականութիւնից և մեր հայրենի երկրի՝ Վասպուրական աշխարհի Վան, ալսինքն Նամիրամակերտ, քաղաքի աշխարհական հայերի ազնիւ դասից, և առհասարակ ամենից, որոց լայտնի է իմ ծագումը, թող իրանց ստորագրութեամբ վկայեն ալս թղթի վրայ, թէ հետագալ իմ տոհմագրութիւնը ճիշդ է:

Երբ Վասպուրականում թագաւորում էր Արծրունեաց տոհմը, որի մասին լիշտում են Մովսէս Խորենացին և միւս հայ պատմաբանները, նոյն Արծրունեաց տոհմից Սեննահերիմ (Սենեքերիմ) թագաւորը գնաց Սերաստիա և ալս նահանգի փոխարէն տւեց Յունաց արքալին (Վասիլ կալսեր) Վասպուրական աշխարհը: Ապա երբ Սեննահերիմի որդիքը (Ատովմ և Արուսահլ) զրկւելով Սերաստիալից, վերադարձան կրկին իրանց հայրենիքը, — Վասպուրական, ապրեցին ալստեղ մի փոքր ժամանակ ու լետոյ գաղթեցին Ոստան քաղաքը: Վերջապէս Սկիւթացոց արշաւանքի ժամանակ ընտակւեցան Աղթամարալ կղզում, ուր և կալին քանի մի ժամանակ, որպէս լայտնի է ալս Աղթամարալ Հայոց Ս. Խաչ վանքի արձանագրութիւններից: Օտարազգիների անդադար արշաւանքների պատճառով ընկաւ ալս տիրող հայազն իշխանների, իմ նախնեաց, կարողութիւննը և նրանք սերունդէ սերունդ մնալով նոյն կղզու վրայ թէև կրում էին զանազան թշուառութիւններ և ըստութիւններ, զրկւելով իրանց ըոլոր կալքից՝ գիւղերից, կալւածներից և մնացած կարողութիւնից, ըալց իշխանական կոչումը հաստատ մնաց մեր տոհմի մէջ, որպէս ալդ լայտնի է և ամենքին:

3) Ալս գրութիւնն աւելի հասկանալի անելու համար՝ աւելորդ չել լինի կարձագէն լիշտնել այստեղ Արծրունեաց թագաւորական

Բայց թողնենք քաջ Արծրունեաց նախկին հռչակաւոր իշխանական աստիճանը, որ Վասպուրական աշխարհումն է, և անցնենք նոյն երկրում պատահած նորագոյն կարգադրութիւններին: 1534 թւին, երբ Տաճկաց սուլթանը տիրապետեց Վասպուրականում Վան քաղաքը, ուր ընակ-

տոհմի մասին մեր ազգային պատմութեան մէջ եղած հետագայ տեղեկութիւնները: Ըստ պատմական աւանդութեան, որպէս լիշում են թէ Ս. Գիրքը (Նսայի գլ. 1. է. 38) և թէ մեր պատմիչները, փրկարական թւականից մօտ եօթնուկէս դար առաջ, Ասորեստանի Սենեքերին թագաւորի որդիքը՝ Ադրամելէք և Սարասար (Սանասար), սպանելով իրանց հօրը, փախում գալիս են Հայաստան, ուր և ընդունում են ու բնակութիւն են հաստատում: Սանասարից յառաջցել են Սանասունք կամ Սասունք ցեղը, իսկ Ադրամելէքից՝ Արծրունիք և Գնունիք, թէ ինչպէս է ծագել և կամ ինչ կընչանալիէ Արծրունի կոչումը՝ իսկապէս յայտնի չէ և Խորենացու ու Թովմա Արծրունու կարծիքները այդ մասին տարբեր են: Խորենացու ասելով Արծրունի կընչանալիէ «առծիւ ունի», որովհետեւ այդ տոհմի նախարարները մեր Արշակունեաց թագաւորների որս գնացած ժամանակ, նրանց առաջը արծիւ էին տանում: Խոկ Թովմա Արծրունու առաջ բերած երեք տեսակ կարծիքներից մէկն էլ այն է, որ իրը թէ Վաղարշակ թագաւորը այդ տոհմի նախարարներից մէկին «ծուռ քիթ» ունենալու պատճառով կոչել է «արծունզն» (Ճռքիթ): Այսպէս թէ այնպէս, բայց Արծրունեաց ցեղը Արշակունեաց հարատութեան ժամանակ մեր առաջնակարգ նշանաւոր նախարարութիւններից մէկն էր համարում: նա արծիւ էր կրում արքայի առաջ ոչ միայն որարդութեան, այլև պատերազմական և միւս հանդէսների ժամանակ, և համարում էր միշտ «արծէկիթ», որ ասիսացոց սովորութեամբ մի առանձին պատիւ էր Այդ ցեղից, որ հայ պատմիչների բերանում «հոյակապ, երեկի և ականաւոր տոհմ» է անւանում, յառաջ են եկած շատ մեծամեծ մարդկի, որոնք առաջնակարգ դեր են խաղացել Հայոց ազգի սկանութեան մէջ, Սակայն և այն պէտք է ասել որ Արծրունեաց ցեղի ձգտումները Հ-րորդ դարում շատ նպաստեցին մեր Բագրատունեաց նորաբողբոջ թագաւորութեան նւազելուն և սրա անկմանը: Հազիւ մի 45 տարի էր անցել, որ Աշոտ Ա. Բագրատունու ձեռքով Հայք Երակալ կողմերը տիրապետութիւն էին

ւում էին Արծրունեաց տոհմի իշխանները, որի մասին լիշտում է այնտեղի տարեգրութիւնների մէջ, այն ժամանակ տեղիս ալլադաւան(?) բնակիչներին և Հայկազեան իշխաններից ոմանք (Արծրունեաց) շնորհեց իրաւունք ստանալ քաղաքիս եկամուտների մի մասը և ազատ լինել հարկերից: Դշմանների (Արծրունեաց) ալս արտօնութիւնների իրա-

հաստատել, որ Արծրունեաց ցեղից՝ Գագիկ իշխանն էլ, ինչուս Բագրատունեաց և օտար ազգերին ուրախացնելու համար, ինքը իրան 908 թւին անկախ Արծրունեաց՝ թագաւոր հռչակեց Վասպուրական աշխարհում: Թողնելով ար նորածագ թագաւորութեան պատմութիւնը, լիշենք միայն, որ Գագիկ Արծրունի արքային մօտ 937 թւին ժառանգեց նրա որդի Դերենիկը, ապա 953 թւին սորա եղբայր Արուսահլ-Համազասպը, իսկ 972 թւին—Արուսահլի որդի Աշոտ-Սահակը, որ թագաւորեց 14 տարի Յետոյ գահ նստեց նրա եղբայր Գուրգէն-Խաչիկը և թագաւոր մեաց 32 տարի: Վերջ ամենայնի թագաւորեց վերոլիշեալների եղբայր Սինեքերիմ-Ցովհանձուր, Այս Սինեքերիմը, որ վեցնորդն էր Արծրունեաց թագաւորների շառաւիզում, մօտ 1021 թւականին, վախենալով այն օրերում երեցած Մոնղոլների կամ Թաթարների ասպատակութիւններից և տեսնելով իր տիրապետութեան թույլութիւնը, մանաւանդ որ Բագրատունեաց Անին էլ արգէն ընկած էր, ինքնայօժար կամքով ծախեց Բիւզանդացոց Վասիլ կայսեր վրայ իր հայրենական Վասպուրական աշխարհը մօտ 4400 գիւղերով, 72 բերդերով և 10 քաղաքով, բայց երկրիս մօտ 1000 հատ եկեղեցիքը, որոնցից 115ը մեծ և հըսացակաւոր վանքեր էին, չոտարացքեց, այլ երանց եկամուտներով հաստատեց Հայոց հոգեւորականութեան վրայ, իրու և իւր նախնեաց անմահ արդեանց անմահ լիշտատիկ: Վասպուրականի փոխարէն Սինեքերիմ թագաւորը ստացաւ Յովներից փոքր Ասիայի Սեբաստիա քաղաքը իր շրջակայքով, 1021 թւին Արծրունեաց տոհմապետ Սինեքերիմը, իր ընտանիքով, ազգականների մեծ մասով և մօտ 100,000 ժողովուրդով գաղթեց Վասպուրականից և եկաւ բնակեցաւ Սեբաստիա իրու: Յունաց հպատակ մէ կալւածատէր իշխան Բայց մէկը Սինեքերիմ արքայի ազգականներից Հեղենիկ կամ Խեղենեկ անունով չգնաց Սեբաստիա և հաստատ մնաց Վանայ ծովի մօտ գտնւող երեելի Ամիսկ ամուր բերդի մէջ և յետոյ ինքը երան

ւունքը մինչև հիմա էլ մնում է այնտեղ (Վան) հաստատ։  
Եւ արագէս ահա իմ նախնի Երան Արծրունին կոչում  
էր „Շիհայի-Խօջաշի“ (քերդի եկամուտների ընկեր)։ ալս  
կոչումը պատկանում էր (Վանալ) եկամուտների մի մասը  
ստացողին,և մենք, որպէս նրա սերունդ, մինչև հիմա էլ  
վայելում էինք նոյն իրաւունքը։

Թագաւոր անւանեց, Սրա ժառանգները շարունակում էին Արծրու-  
նի թագաւորների ախտղոս կրելը, թէի նրանց գործերը պատմութիւնը  
մեզ չէ աւանդում, Գրտենք միայն որ մօտ 1121 թւականին վախ-  
ճանեց Արգգլմինչ Արծրունի թագաւորը, որ Յոյներից արոտո-կուրոպա-  
լատ ախտղոսն էր վայելում, ապա 1199 թւին նոյն տոհմից լիչում է  
Խեղինիկ երկրորդը և մի հարիւր տարւանից էլ յետոյ Խեղենիկ եր-  
րորդը, ու այդպատով նրանց պայտպատութիւնը հասնում է մինչև XV  
դարու սկիզբը և լրում, Եւ այդպէս Վասպուրականում Արծրունիք  
թագաւորական կոչումը պահում էին և այն ժամանակ, երբ Կիլի-  
կիայում վերացել էր Հայոց թագաւորութիւնը։

Կայ և մի այլ, թէև շատ թերի, տեղեկութիւն, որ Սենեքերի-  
մի սերունդները մի 50 կամ 60 տարւանից յնտոյ Սերաստիակից  
դուրս քշեցան և կրկին վերադարձան իրանց հարսենի Վասպու-  
րականը տիրելու, բայց գրանցից մեզ յայտնի են միայն Ասովմ և  
Արուսահլ Արծրունի թագաւորանգ եղրայինները Ստկայն հաստատ  
է, որ Կիլիկիայի մեր Խոռորդինեան տոհմը առաջ է եկած Արծրունիաց  
և Բագրատունեաց խնամութիւններ և Սենեքերիմ արքայի սերունդ-  
ներեց մի ճիւղն էլ Սերաստիակից անցել գնացել է Կիլիկիա։

Ահա կարճօրէն այն բոլոր տեղեկութիւնները, որ մեզ աւան-  
դում է Հայոց պատմութիւնը Արծրունեաց տոհմի մասին Գալով  
Գէորգ աղա Արծրունու վերաբերեալ վկայականին, չենք կարող չնկա-  
տել, թէ քանի որ պատմական գրաւոր հաստատ տեղեկութիւններ և ալլն)  
վկան, որ կարելի մինչը անհերքելի կերպով արդարիս մի նշանաւոր  
ազգի տոհմական ծագումը կասպել և հասցնել մինչև մեր օրերը—  
դժւար է լուծել Գէորգ աղայի Արծրունեաց արքայական պայտպա-  
տութիւնն խնդիրը, Այդ վկայականը ներկայանում է մեզ յիւած  
իրանց տոհմական աւանդութիւնների վրայ, որ թէև ունի իր կշիռ,  
բայց գեռ բաւական չէ մի հաստատ վճիռ կայացնելու համար Գա-

- Խոկ մեր տոհմաբանութիւնը սկսում է Երան Արծրունուց, որից ծնեցին Յ ուստի և Զ դռւստր, այն է՝  
1530 թւի Երանից ծնեցին՝ Միքայիլ, Բօջան, Գաւիլիթ  
և երկու դստերք՝ Կատարինէ և Սանդուխտ:
- 1558 թւի Միքայիլից—Երեմիա և Հայկ:
- 1580 թւի Երեմիալից—Զաքարիա և Մարիամ:
- 1603 թւի Զաքարիալից ծնեցին Թովմա և Ահարոն. իւ-  
տու այն ժամանակաւ Ճահարաժամից ոչ ոք  
մնաց կենդանի մեր նախնիներից, բացի Միքայիլի  
թռութ՝ Հայկի որդիին, որ նմանապէս կոչվում էր  
Հայկ—Այս Հայկից 1559 թւին ծնեց Բոմա(?),  
իսկ 1605 թւին Բոմալից ծնեց Մարիամ (Մալ-  
իսաւ?):
- 1628 թւի Մարիամից ծնեց Գէորգը:
- 1649 թւի Գէորգից Միքայիլը:

---

Իով Երջանկալիշատակ Նվիրեմ կաթողիկոսի և Էջմիածնի եպիսկոպոս-  
ների ներկայ զարուս սկզբներում տաճ վկալութեանը, պէտք է ա-  
սել, որ, որքան յայտնի է, Ս. Աթուում չկան որևէ հայ Եջբաննե-  
րի տոհմագրութիւնները անցեալ գարերի վերաբերութեամբ և ու-  
րեմն նրանց գիտեցածն էլ ավտոի հիմնէր բերանացի աւանդութիւն-  
ների վրայ, որ գարձեալ պատմական անժիտելի փաստ չի կարող հա-  
մարւել Ալյապէս է նայել այս գործի վրայ և Ռուսաց տէրութիւնը.

Աւելորդ չէ ասել, որ սուն բաղդին ենթարկել են և հայ իշ-  
խանական այն բոլոր պայազանները, որոնք Վրաց տէրութեան ժա-  
մանակ զլացել են հշտութեամբ ձեռք բերել իշխանական տիտ-  
ղոսը Բայց երբ Ռուսաց տէրութեամբ սկսում է Կովկասում,  
շատերը (Գեղամեանները և այլք) ձգում են հաստատել տաէ ի-  
րանց իշխանական ծագումը և Ս. Էջմիածնի գահակալները աշխա-  
տում են օգնել նրանց իրանց վկալականներով, մինչև որ տէրութեան  
ուշագրութիւնը գարձնուում է այս իրողութեան վրայ, և Ներսէս  
Ե-ը, իր առաջնորդութեան ժամանակ, Թիֆլիսից մի առջու նա-  
մակով զգուշացնում է Էջմիածնեցց այլքո չտալ արդաքս վկալա-  
կանները

- 1672 թւի Միքանից—Երեմիա, Եղիսաբէթ և Զաքարիա:
- 1693 թւի Երեմիայից—Միքանը:
- 1727 թւի Միքանից՝ Երեմիա, Վարդ, Խաթուն և Յովհան 1728 թւականին:
- 1771 թւի Երեմիայից՝ Գէորգը—ես, իսկ ինձանից յետոյ իմ քոյլ Նողակաթը և եղբայրս—Հակովը (Յակոբ?):
- 1793 թւին ինձանից—Գէորգից—ծնեց Մարիամը, իսկ 1804 թւին ինձանից, Գէորգից, ծնեց Երեմիան:
- Սրա տակը ստորագրեց՝ Գէորգ, Երեմիայի որդի,
- Երանե Արժրուածիւ<sup>4)</sup>

Խնդիր ասացինք, ար գրութեան վրայ ստորագրել են ոչ միայն Վասպուրականի բարձրաստիճան հոգեորական և աշխարհական անձինք, այլև Եփրեմ կաթողիկոսը և այն ժամանակաւ Սինօդ կամ Հոգևոր ժողով կազմող եպիսկոպոսները: Գրանք բոլորեքեանք վկարում են եղել, որ գրութեան մէջ լիշւած բոլոր պատմական իրողութիւնները և տոհմարանութիւնը ճիշտ են: Ներկայացնելով այդ վկարականը Շտիշէւին, Գէորգ աղան ինդրում է, որ Ռուսաց տէրութիւնը հաստատէ նրան ժառանգական ազնւութեան մէջ և շնորհէ իշխանական տիտղոս: Կառավարչապետ Շտիշէւը, որ արդէն ցոյց էր տալիս Արծրունուն իր հովանաւորութիւնը, պատշաճաւոր միջնորդութեամբ զիմեց Պետերուրդի բարձրագոյն իշխանութեան: Այնտեղ „Գերողիան“ անւանեալ ատեանում, ուր սովորաբար քննւում են ազնւական տոհմերի ծագման խնդիրները, այն եղբակացութեանը եկան, որ ռուսական օքէնքների համաձայն սլահանջւում է, որպէսզի ազնւականութեան տակացուցանող վկարականները տրւած լինին միմիայն տէրութիւններից, իսկ հոգևորականների և աշխարհականների վկարութիւնները կարող են ինկատի առնելի իրքեւ երկրորդական նշանակու-

թիւն ունեցող գրութիւններ։ Եւ որովհետև Արծրունին չէ ներկալացրել մի ալբախի վկայական Օսմանեան տէրութիւնից, որի հպատակն էր նա, վասնորոյ լոկ հոգևորականների վկայութեամբ։ Նա չի կարող ընդունւիլ Ռուսաց ազնւական։ Ահա ալբախի բացառական մտքով կառավարչական Սենաթը մարտի 18-ին 1816 թւականի պատասխանեց Ռուսականին և որա միջնորդութիւնը թողեց անկատար<sup>5)</sup>, Բայց ինդրի անլաջող ելքը երկու պատճառ ուներ։ Մէկը՝ որ Ռուսականի առաջուց չէր բացատրած։ Գերողիա, առեանին, թէ Արծրունու համար անկարելի էր ձեռք բերել իր իշխանական ծագման վկայագիրը Օսմանեան տէրութիւնից, որովհետև այս մահմետական պետութիւնը սկզբունքով չէ ճանաչում ոչինչ ժառանգական ազնւութիւն և Տաճկաստանում առհմտական արտօնութիւնները անընդունելի են։ Երկրորդը՝ որ Ռուսականի միջամտութիւնը սկսւեցաւ այն միջոցին, երբ նրա բարեխօսութիւնը մեծ կշիռ չէր կարող ունենալ Պետերբուրգում, ուր

5) Ճիշդ նորի ժամանակներում Աշուարքանի նահանգապետն էր դեմեց կառավարչապետ Ռուսականի՝ խնդընքով լուծել իր տարակուանքը Աշուարքանում գտնուող այն Հայերի մասին, որոնք իրանց ազնւական են համարում։ Արանք, գրում է նոր, կըթնելով Էջմիածնի վաներից՝ կաթողիկոսի և հոգեորականների ստորագրութեամբ տւած վկայականներին՝ թէ նրանք տեղ են և գիտեն, որ այս ինչ մարդու նախնիքը Հայոց թափաւորութեան ժամանակ նախարարական և աղնւական ցեղեց են եղել, պահանջում են իրանց էլ աղնւական ճանաչել։ Ռուսական պատասխանում է նահանգապետին, որ նմանօրինակ մի գործ է և Արծրունու առհմէ խնդիրը, որի մանրամասնութիւնները պատուիլուց յևսու, նա յարտնում է թէ կառավարչական Սենաթը արդէն հրամանագրել է իրան մերժել Արծրունու իշխանական և աղնւական ծագման խնդիրը։ Այս պատճառով Ռուսական հրամայում է նահանգապետին՝ չընդունել Աշուարքանի Հայերից Էջմիածնի տւած վկայագրերը նրանց աղնւական ծագման մասին (ԱԿՏ Կավ. Արք. Կոմ., թ. V, ծույն 1041).

արդէն մտածում էին մի աւելի լաջող լաջորդ գտնել կովկասով կառավարելու համար:

Բայց Գէորգ աղան չվհատեց իրերի այսպիսի ելքից, Երմոլավի նշանակութիւնը Ռտիշչէւի փոխարէն մի բարեպատեհ տոհմի համարւեցաւ նորից լարուցանել Արծրունեաց տոհմական իրաւունքների խնդիրը: Եւ ահա կառավարչապետ Երմոլովը 1820 թւի լունիսի 8-ին իր ամենահպատակօրէն զեկուցումով գեմում է թագաւոր կարեր՝ այսպէս,

„Տաճկահպատակ եղող, Վան քաղաքի բնակիչ Գէորգ Երանեան Արծրունին, իմ նախորդ զեներալ Ռտիշչէւի թոլլուութեամբ, իր ամբողջ գերդաստանով արտասահմանից գաղթեց Թիֆլիս և երգումն ընդունեց լինել մշտապէս հպատակ Չերդ Կալեկարական Մեծութեան:

Այս գաղթականը նոյն ժամանակ ներկայացրեց արտեղի վարչութեանը վկայականներ Հայոց՝ պատրիարք Եփրեմից, Եջմիածնի Սրբազն Սինոդոսից և Վան քաղաքի հոգևորական և աշխարհական անձանց հասարակութիւնից: Այդ վկայականները հաւաստիացնում էին, որ նա, Երանեանը, ծագում է Հայոց Արծրունեաց իշխաններից, որոնք Հայաստանում Վասպուրական աշխարհի տէր էին և թէ այդ երկիրը 1534 թւականին Օսմանցոց ձեռքով նւաճելուց իհոսոյ՝ նրա հաւին Երան Արծրունուն շնորհած են հիւսար-եօլլաշի կոչումը և նոյն աշխարհի եկամուտների մի մասը, որ և ստանում էր նա (Գէորգը) մինչեւ վերտրնակութիւններովը մէջ: Այս պատճառով՝ իմ նախորդ զեներալ Ռտիշչէւը, արտասահմանից ստացած տեղեկութիւններովը իմացած լինելով այն առանձին լարգանքների մասին, որ վախեռում էր Արծրունին իր հայրենիքում և այն ազդեցութեան մասին, որ ունէր նա Վասպատանին դբացի Տաճկական Վան աշխարհի Հայերի վրա, ներկայացրեց լիշեալ վկայականները այն ժամանակաւ Արտաքին գործոց նախարարու-

թիւնը կառավարող գաղտնի խորհրդական Աէլգէմէլըին,  
միջնորդելով, որ նրանց (վկարականների) հիմունքի վրայ  
խնդրուի Զերդ Կալսերական Մեծութեան ամենաաղորմա-  
ծաբար հաստատումն նրա (Գէորգի) ռուսական ազնւա-  
կանի իրաւուքների մէջ, Բայց կառավարչական Սենաթի հրա-  
մանագրով, որ կարացած է 1816 թւի մարտի 18-ին,  
Երանեանին ալդ բանի մէջ բաց է աււած այն պատ-  
ճառով որ ռուսական ազնւականի իրաւունքները և ար-  
տօնութիւնները ստանալու համար պիտի ներկայացւին  
թագաւորներից շնորհւած հրովարտակներ և դրագներ:

Իսկ յալտնի է որ Հայաստանում, որ այնքան լեղա-  
փոխութիւնների և աւերումների է ենթարկւել, չէին  
կարող պահպանել Հայոց թագաւորներից շնորհած գրա-  
ւոր վկայագրեր: Մինչև անգամ նոյն իսկ արքայից տա-  
պանաքարերը, արձանները և միւս լիշտակինները գրեթէ  
բոլորովին անհետացել են. իսկ Սսմանցոց տէրութեան  
մէջ ամեննեին չկալ սովորութիւն շնորհել ումը և իցէ  
ազնւականութեան գրւագներ և հրովարտակներ: Սակայն  
կարծիք չկալ, թէ Հայաստանում, որ արժմ Տաճկաց տի-  
րապետութեան տակ է գտնւում, կարող են լինել տիրող  
և ուրիշ՝ հնումն երևելի եղած ցեղերի պատգատներ,  
որոնց հաշւում հաւանական է կարծել և Արծրունուն:  
Այս աւելի ևս հաստատում է նրանով, որ նա թողած  
է հայրենիքում իր սեփական դիւդերը և եկամուտները,  
Վանալ բերդի մի մասով հանդերձ, որ շնորհած է Օս-  
մանցոց տէրութիւնը նրա ցեղին ժառանգարար, երևի,  
որպէս հաւանական է ենթագրել, այն պատճառով, որ  
նրա նախնիքն են եղել նոյն բերդի շինողներն ու տէրը:

Արժմ Զերդ Կալսերական Մեծութեան այս նոր հպա-  
տակը երկրորդ անգամ ներկայացրեց ինձ խնդրագիր, որի  
մէջ բացատրում է նա, թէ զոհելով հայրենի աշխարհը  
և իր բոլոր անշարժ կարածները, միմիայն ցանկալով

անձնատուր լինել Ոուսիալին և յուսալով խաղաղ կեանք վա-  
յելել Զերդ Կայսերական Մեծութեան արդարագատ օրէնք-  
ների տակ, մնում է ալժմ անարգւած, Հաւասսարացրած  
լինելով ստորին դասի մարդկանց հետ: Այս պատճառով,  
իմ կողմից անկարող լինելով չյարգել ալդ աստիճանի  
համոզեցուցիչ ճշմարտութիւնը, ես ինկատի առաջ նմա-  
նապէս նրա տէրութեանը ցոյց տւած ջերմեռանդ ա-  
ջակցութիւնը Թիֆլիս քաղաքը լաւագոյն շինութիւն-  
ներով զարգարելու գործում: Ես ինկատի առաջ նոյնպէս  
նրա Հոլլանդիայում նշանաւոր գումարով առած պատ-  
ւականագոյն հայերէն տպարանը, որ ալժմ ընծափեց ար-  
տեղ կառուցանուող Հարց ուսումնարանին: Նմանօրինակ  
աչքի առաջ ունենալով նրա առեւտրական յարաբերու-  
թիւնները Եւրոպալի բոլոր մալրաքաղաքների հետ, ուր  
ինքն էլ անձամբ եղած է, ինչպէս նաև և այն զգալի  
օգուածը երկրիս համար, եթէ մեծամեծ գումարների տէր  
անձինք վստահանալով մեր տէրութեանը սկսին Պարս-  
կաստանից և Տաճկաստանից գաղթել գալ Վրաստան,—ա-  
հա այս բոլորը աչքի առաջ ունենալով, ես ինձ պարտք  
համարեցի հասցնելով ամենայն ինչ Զերդ Կայսերական  
Մեծութեան ունկնդրութեանը, ամենահպատակօրէն խըն-  
դրել Զերդ ողորմած բարեհաճութիւնը Գէորգ Երանեան  
Արծրունուն Ոուսաց ազնւականի իրաւունքների մէջ հաս-  
տատելու մասին նոյն իսկ այն վկայականների հիման  
վրայ, որ Գերոլդիան ինքն էլ բաւարար էր համարելու,  
եթէ շնորհւած լինէին թագաւորների հրավարտակներով,  
որպիսի սովորութիւն Տաճկաստանում չկայ: Ապա եթէ  
այս (իմ ինգիրս) անհամապատասխան համարւի ազնւա-  
կանութեան մասին եղած բարձրագոյն կանոնադրութիւն-  
ների հետ—այն ժամանակ գոնէ՝ թողնելով նրան իր  
հայրենիքում վալելած հէսայի-եօլյաշիի տիտղոսը, շնոր-  
հել նրա որդոց առանձին արտօնութիւն ազնւականների

իրաւունքով մտնել Զերդ Կալսերական Մեծութեան ծառարութիւն։ Ալդալիսի արդարագատութիւնը և ողորմած քաջալերութիւնը այս արդարեւ օգտակար մարդուն, անտարակոյս, կարող է շարժառիթ լինել Պարսկաստանի և Տաճկաստանի ուրիշ դրամատէր անձանց ևս Զերդ Կալսերական Մեծութեան հովանաւորութիւնը և հպատակութիւնը փնտրելու։ Վասնզի նոյն իսկ անցեալ 1818 թւականին, իմ Վրաստանից բացակալ եղած ժամանակ, եկած են այստեղ Կ. Պոլսից երկու անձինք, որպէս երեսփոխաններ այնտեղի քանի մի ամենահարուստ հայ ընտանիքների, որպէսզի տեղեկանան թէ կարելք է արդեօք և ինչ օգուտ կարող են ունենալ վերագաղթելով Վրաստան։ սակայն տեսնելով իրանց հայրենակցի, նոյն իսկ այս Արծրունու, օրինակը և յատնի լինելը, թէ ինչ արտօնութիւններ կարող են ունենալ նրանք այստեղ, փոխեցին իրանց մտադրութիւնը և յետ գնացին, ոչինչ առաջարկութիւն անգամ չանելով մեր տէրութեանը։ Ահա այս սպատճառով և այս բանի համար համարձակում եմ ինդրել Զերդ Կալսերական Մեծութեան Բարձրագոյն բարեհաճութիւնը, որ Պարսկաստանից և Տաճկաստանից գուրս եկող Հայերին, որոնք կամ արդէն եկած, քնակւում են Վրաստանում և կամ կըգան այսուհետեւ, և որոնք հետերնին կունենան մելիքի, խանի, բէզի, աղալարի և կամ որևէից նշանաւոր պաշտօնատարի տիտղոսութեան ու նշանաւոր ծագման վկայագիր, ալդալիսիների մասին թոյլ տրւէր Վրաստանի Ազնւականաց ժողովին (Թէպուտատսկօէ Սօբրանիէ) քննել այդ վկայագրերը, և եթէ խիստ քննութիւնից յետոյ դրանք ընդունելի համարւին և ոչինչ կասկածի տեղիք չտան, այն ժամանակ ներկալացնեին Գերողիքիա լիշեալ գաղթողներին ազնւականութեան իրաւունքների մէջ հաստատելու համար<sup>(6)</sup>։

Երմոլովի ալս զեկուցման հետևանքն այն եղաւ, որ Աղքա-  
սանդր II կայսրը 1820 թւականի սեպտեմբերի 8-ին Վար-  
շաւալից հրամանագրեց կառավարչական Սենաթին հաստատել  
Արծրունուն ժառանգական ազնւականութեան աստիճանի մէջ  
և տալ նրան ալս մասին հրովարտակ:

Գէորգ աղա Արծրունին ծնել է Վան քաղաքում 1771  
թւին Երեմիակի և Զալիմ օրիորդի ամուսնութիւնից: Որքան  
լին ենք, նա սկզբում ձգտում է եղել կուսակրօն գառնալ և  
մտնել Ա. Աղթամարտ վանքը, բայց ծնողների համաձայնու-  
թիւնը չստանալով մօտ քսան տարեկան հասակում պսակւել է  
Եղիսարէթ Յակոբեանի հետ և 1793 թւին Մարիամ անու-  
նով դուստրն է ունեցել:<sup>\*)</sup> Թէ մինչեւ ամուսնալը և թէ ա-  
մուսնութիւնից յետոյ Գէորգը առանձին սէր է ցոյց տալիս  
ընթերցանութեան և երազում է եղել Աղթամարում բանալ  
սուսանայաց (տպարան) և վանքի միաբանութիւնը գարձնել  
մի ուսումնական ընկերութիւն: Սակայն արդ բանին արգելք  
է լինում նրա առևտրական զբաղմունքը: Իր հօր՝ Երեմիակի  
նախ ծերանալու, ապա մահւան պատճառով, Գէորգը ստիպ-  
ւած է լինում բոլորովին իր վրայ առնել իրանց առևտրական  
գործերի շարունակութիւնը, և ապրանքների նշանաւոր քար-  
ւաններով պլորտում է այնուհետև. Փոքր-Ասիակի զիստաւոր  
քաղաքներում, անցնում է Պոլիս, այնտեղից հարաւային Եւրո-  
պա և ապա կրկին վերադառնում է Վան: 1813 թւին Գէորգը  
Հին-Բարագէդով գալիս է Էջմիածին և ալստեղից անցնում  
Թիֆլիս: Մահմետական աշխարհների մէջ երկար պտղտելուց  
յետոյ, քրիստոնեալ տէրութեան հովանաւորութիւնը նրա հա-  
մար հրապուրիչ է երեւում և ահա Գէորգ աղան մտքումը  
դնում է բոլորովին գաղթել գալ Թիֆլիս Վրաստանի մայրա-  
քաղաքը՝ որ, ինչպէս վերևը ցոյց տւինք, աղքատութեան և  
թշւառութեան էր հասել այդ միջոցում, զրկախառն ընդու-

<sup>\*)</sup> Այս Մարիամը մարդու է գնացել Երևանցի Սարգիս Սահա-  
սարեանցին, սրանց որդին է՝ բարոնի պլ. Մկրտիչ Սահասարեանը:

նեց Հարուստ Արծրունուն և սրա ոսկիները մեծ համբաւ ստացան քաղաքիս մէջ: Թիֆլիսեցիք, որ ըստ հինաւուրց սուրութեան, միշտ բարձրից էին նարում օտարերկրացի Հայերի վրայ և ծաղրում ու արհամարում դրանց տեսակ-տեսակ ածականներ տալով, Արծրունու վերաբերութեամբ միշտ պատկառանքով էին խօսում և „Գեղորգ աղոյա“ անւանում: Չնայելով, որ ալժմ մօտ 60 տարի է անցել նրա մահւանից յետոյ, Գեղորգ աղայի անունը մինչև այսօր էլ յարտնի է թէ Թիֆլիսի և թէ միւս տեղերի Հայ Հասարակութեանը և միշտ յարգանքով է լիշւում: Նոյն իսկ սկզբից նա ցոյց է տւել իրան „աղա“ բառիս բուն նշանակութեամբ: Նրա թէ խօսարում, թէ շարժւածքում և թէ գործերում, որպէս պատմում են ականատես մարդիկ, ամեն ըանի մէջ աղայութիւն կար: Խնքը միջակ հասակի տէր մարդ էր և մինչև 1817 թւի արտասահման գնալը կապտագոյն մահուդից կարած փարաջայի տեսակ զգեստ ունէր հագած, որի տակից կրում էր ուրզայի շալից լայն գօտի: Թիֆլիսի փողոցներում գնալիս՝ ետևից միշտ գնում էին երկու վանցի ծառաներ, իսկ նրա ձիով մանգալու ժամանակ ալդ ծառաները հետեւում էին պարսնին նրա աջ ու ձախ կողմից, ապա մի երրորդ ծառալ գնում էր առաջից՝ ձիութանկագին զարգերով պաճուճւած գլուխը բռնած: Նրա փողոցով անցած ժամանակ ամենքը ոտքի էին կանգնում և ձեռքերը կուրծքին տանելով ողջունում: իսկ Գեղորգ աղան ձեռքը ճակատին էր դնում Օսմանցոց ձեռով սալամ՝ տալով: Խնքը խոժու, բայց խելօք պատկեր ունէր: Մեծ և կեռ քժի վրայ՝ թանձը և գէպի ճակատը բարձրանող ունքերը մի լայն կամար էին կապում: Երեսին ժափիս շատ քիչ էր երեւում, բայց երեցած ժպիտն էլ միշտ հեղնական էր լինում: Քիչ էր խօսում և շատ մտածում, բայց խօսածի մէջ միշտ խելք ու խրատ կար: Սակայն, որպէս Թիֆլիսեցիք ասում են, „իշ սասածի մայրդ էր“ և ինչ որ մէկ անգամ մաքումը գնէր, էլ ոչ ոքի չլսելով, անսպատճառ պիտի կատարէր: Խորամանկութիւն չու-

նէր և սուտը չէր սիրիլ Ընկերութիւններից և խնճոլքներից փախչում էր և անգործ մարդկանց հետ զւարճախօսութիւն անելու սովորութիւն չունէր Համոզմունքների մէջ հաստատ էր և միշտ աշխատում էր նախ փորձել, ապա մօտենալ, իսկ ում որ մէկ անգամ չսիրեց, այլ ևս մօտ չէր թողնիլ և երբէք չէր մոռանալ նրա արած սխալը Օգնել սիրում էր և ձեռքը առատ էր, բայց օգնածից իտու լուրջ հաշիւ էր պահանջում ու ինքն իրան սաստիկ բարկանում էր, երբ իրան խարւած էր տեսնում: Նրա մեծ պակասութիւնը այն էր, որ շատ ինքնահաւան էր և չէր սիրում հականառութիւն, բայց ասածը ասած էր և գործը միշտ ստածի կատարումն էր:

Ահա արտպէս են նկարագրում Գէորգ Արծրունուն նրան տեսնող և ծանօթ եղած անձինք, որոնց թիւը ալժմ շատ սակաւ է: Բերենք ալժմ մեզ աւանդած քանի մի անցքեր Գէորգ աղալի կեանքից Թիֆլիսում:

Գէորգ աղան բոլորովին նոր էր եկել Թիֆլիս և ամենեւին չէր ճանաչում քաղաքը, բայց նրա հարստութեան հըուշակը արագութեամբ տարածւել էր քաղաքացոց մէջ: Գարնան մի պատւական օր էր և Օրթաճալալի բաղերը կանաչած: Բաղանիսների փողոցում, գարալների գոռանը նստած էին նորաշէն եկեղեցու քահանաներից երկուսը և զւարճախօսութիւն էին անում ու ցաւում, որ քեսատութեան պատճառով չեն կարող քէֆ անել Օրթաճալում: Ալդ միջոցում տէրտէրները տեսնում են, որ հարուստ Գէորգ աղան եկաւ մտաւ Բէհրուդենց բաղանիքը լողանալու: Նրանց մէջ իսկոյն միտք է ծագում ալդ „խամ կռօլից“ „խարջլուխ“ կորզել, և ահա տէրտէրները նմանապէս մտնում են բաղանիք լողանալու: Ալն ժանանակ բաղանիքում առանձին խոցեր չկալին և ամենքը միասին լողանում էին հասարակաց ընդարձակ աւազանում: Լողանալու ժամանակ քահանաները ծանօթութիւն են զցում Գէորգ աղալի հետ և լալտնում, որ ալդ բաղանիքը պատկանում է նրանցից մէկին և թէ ուզում է աժան ծախել, բայց առնող չէ զտնում:

Գէորգ աղան, արգէն հաւանած լինելով ջրի մեզմոթիւնը, պատրաստութիւն է յարտնում առնելու և տեղնուտեղը, աւազանի մէջ սակարկութիւն է լինում, Քաղանիսից դուքս գալու միջոցին քահանաները ստանում են քէհ, տասը ոսկի, իսկ վաճառման թուղթը պիտի գրվի միւս օրը, երբ Գէորգ աղան կըրերէ հետը բաղանիս՝ վճռած գումարը, Քահանաները բաղանիսից գնում են Օրթաճալա: Միւս օրը նշանակած ժամին գալիս է բաղանիս Գէորգ աղան, հետը բերած լինելով բոլոր գումարը, և այստեղ միայն իմանալով որ բաղանիքը պատկանում է ոչ թէ այն տէրտէրներին, այլ Բէհրուղեան տոհմին. այլևս ոչինչ չխօսելով, լուռումունջ գնում է իր գործին և ոչ ոքի չէ գանգատում: Սակայն տէրտէրների օյինի, համբաւը տարածւում է և հասնում Բէհրուղեանց մելիք Դարչինի ականջը, որ շատ վշտանալով իր եկեղեցու (Նորաշէնը Բէհրուղեաններին էր պատկանում) քահանաների ալդակիսի վարմունքից օտարականի հետ, ինքը վերադարձնում է Արծրունուց կորզած գումարը և ներումն խնդրում. իսկ տէրտէրները վերադառնում են քաղաք բոլոր ոսկիները ծախսելուց լետու:

Լսելով իր թէ Արծրունին անբաւ ոսկի ունի, ով որ միայն փողի պէտք ունէր, դիմում էր Գէորգ աղալին. ծանօթի և անծանօթի տալիս էր նա փողը առանց մուրհակի, բայց նախ մանրամասնաբար հարցնում էր պարապմունքը և թէ ինչ չէ առաջացել պարտք առնելու կարօտը, և ապա վերջը մի խրատ էր կարդում թէ պարտքը գործը քանդող է և ոչ շինող:

Մի օր եկել էին Գէորգ աղալից փող փոխ առնելու մի հայ և մի վրացի իշխան: Հալը ինսդրում էր 30 ոսկի, վրացին՝ 20: Գէորգ աղան իր խրատները կարգալուց լետու, տեսց հալին 20 ոսկի, իսկ վրացուն 30: Երկուսն էլ կարծեցին թէ Արծրունին սխալեց և շփոթեց մէկի խնդրածը միւսի հետ: — Ես չսխալեցի, բացատրեց քմքածիծաղը երեսին Գէորգ աղան, հրամանքդ հայ ես և 30 ոսկու կարևորութիւն ունիս,

բայց քանի որ պարտքը վատ բան է, կը յօւսամ և հաւատացած եմ որ երբ հայրաբար վարւիս ոսկիների հետ—30-ի կարօտ կարող պիտի լինիս 20-ով ծածկել: Խսկ ալս գիւրջին (վրացին), շարունակեց նա, կը կարձէ թէ 20 ոսկով պիտի կատարէ իր գործը, բայց ես 30 կառաջարկեմ, առաջուց գիտենալով՝ որ սայն էլ չի բառեր . . .

Երմոլով կառավարչապետը Թիֆլիս մտնելով՝ գտաւ սրան քարուքանդ: Նրա սկզբնական և գլխաւոր զբաղմունքներից մէկը եղաւ շինել Թիֆլիսը:

Արժմեան Շտաբը, փոխարքայական տունը, Օրդենանահաւուզը, Պակրովսկի անւանեալ զինուորանոցը, Նաւթլոււզի հիւանդանոցը, փոխարքայի տան մօտ երբեմն եղած և ալժմ վերցրած Արսէնալը, Վրաց Հոգեոր Սեմինարիան և մի քանի ուրիշ շինութիւններ—բոլորն էլ սկաւած և գլուխ են ըերած Երմոլովի շնորհով: Հասկանալի է, թէ որքան համակրութիւն պիտի վայելէր կառավարչապետից ամեն մի անհատի ձեռնարկութիւն, որ նմանապէս ծառայելու էր Թիֆլիսի վեր աշխութեան և գեղեցկութեան: Եթէ մի կողմը թողնենք Հաւուշտրեանների, Քեթխուղեանների, Զոլախ-Բարսեղի, Քեհրուղեանների, Շաղինեանների և ուրիշների ու մասնաւոր մանրմունք շինութիւնները, Երմոլովի ժամանակ ամենանշաւոր և մինչեւ այժմս նշանակութիւն ունեցող մասնաւոր ձեռնարկութիւնները եղած են Արծրունու քարվանսարան Սիօնի մօտ մի կողմից, և ներսիսեան գոլրանոցի շինութիւնը իր խանութներով—միւս կողմից: Երկուսն էլ իր ժամանակին մեծ գումարներ են կլանել առանց տէրութեան որևէ օժանդակութեան, և երկուսն էլ քաղաքիս գեղեցկացնող ամենանշանաւոր շինութիւններն են համարւել գոնէ մինչեւ դարսւա լիսունական թւականները: Թէ օտարազգի և թէ Քուսաց աշխարհագրութեան ձեռնարկներում անգամ (տես Արսէնէլի աշխարհագրութեան ձեռնարկը, 22-րորդ տաղագրութիւն 1851 թ.) Թիֆլիսի վրայ խօսելիս սրա նշանաւոր շինութիւնների մէջ գրեթէ առաջի տեղն են

բռնում Ներսիսեան գողրանոցի շինուածքը և Գէորգ աղայի քարվանսարան, ուր, իդէալ և ասել, քաղաքու խնջութք տւեց 1851 թւին թագաժառանգ Ալէքսանդր Նիկոլայէվիչին (յետոյ Կալոր Աղէքսանդր II):

Խօսք չկալ, որ Գէորգ աղա Արծրունուն Թիֆլիսը ճանաչեց և լիշտակը անմոռաց պահեց մասամբ լիշեալ քարվանսարայի շինութեան պատճառով: Ասենք այն, ինչ որ զիտենք ալդ մասին: Արծրունին ժամանեց Թիֆլիս իր 42 տարեկան հասակում, մօտ 20 տարի պտղտած լինելով վաճառականութիւնով զանազան երկիրներ: Ինչ էր բերած հետք, և որքան էր բերած—մեզ յարտնի չէ, բայց որպէս ասացինք, նրա հարստութեան հռչակը մեծ էր և, Թիֆլիսցիների ասերով, նրա սոկիների քանակութիւնը անմիտ: Վերափոխւելով այստեղ, թոյլ, բարի, թէև հեռատես, բահչէւի ժամանակ, Արծրունին անկարող եղաւ որևէ նշանաւոր գործ սկսել Թիֆլիսում: Նրա սուր աչքը նկատեց միայն, որ քաղաքիս բոլոր առևտրական գործերը իհնուց անտի կեդրոնանում են եղել այժմեան մէրդանից մինչև Սիօն Վ. բաց եկեղեցին: Ալդ տարածութեան մէջ, նոյն իսկ Սիօն եկեղեցու կողքին, հարաւային կողմից գտնուած էր ալն ժամանակ մի ընդարձակ գետին, որ լի էր, 1802 թւին պատահած հրդեհից լւտոյ, զանազան վլատակներով:

Ալդտեղ մի ժամանակ եղել է Թիֆլիսում նստող Վ. բաց, Թիֆլիսի, անւանեալ միտրոպոլիտի քարվանսարան, բայց ալժմ ծախտում էր իբրև անպիտան և եկամուտ չտուող աւերակ: Արծրունին առաւ լիշեալ կալւածը և մտքումը դրեց շինել մի հռչակաւոր խան (քարվանսարայ): Գէորգ աղան սկսեց շինութիւնը 1815 թւին, առանց ճարտարապետի, և իր յօրինած նախագծով: Պատմում են, որ երկու անգամ կուր գետը տարել է ջրի կողմից բարձրացրած պատը, բայց Արծրունին, չվհատելով, երբորդ անգամն է սկսել գետից բուրգեր բարձրացնել և այնուհետև, մինչև արար էլ, կուրն անկարող է եղել վնասել շինութեանը: Թիֆլիսեցիք զարմացած մնացել էին Գէորգ

աղալի ։ ինքնասածութեան, վրայ և նրա յաջողութիւնը մեկնում էին տաելով թէ ։ Գէւուրք աղի ոսկիքը գիտ Քոհն էլ խելօքացրին։

Լուր էր տարածւել մինչև անդամ, թէ գետը ալլեւս չի կարողանում տանել պատերը այն պատճառով, որ Գէորգ աղան երբ թէ ըրջերի մէջ դարսել է ոսկով լի սրարկեր։ Պատճում են, որ քանի մի թեթևամիտներ զիշեր ժամանակ դիմացի Սաղի կողմից նաւորիկով անցել էին գետը և եկել՝ ծակծկել էին բուրգերը ոսկէ պարկերը գտնելու համար։ Արծրունին ինքն էր վերահսկում քարվանսարալի շինութեանը, բայց նա իրան օդնական ուներ մի կալատօգ (որմնադիր) կիկոլի՛ անունով, որի գիտութիւնը և ճարպիկութիւնը շատ յարգում էր։ Մի օր Գէորգ աղան և Կիկոլի՛ կուեցին. առաջինը հրամայում էր շինել ալսպէս, վերջինս—հակառակն էր պնդում և ուրիշ նախագիծ էր առաջարկում։ Քանի որ ասածս չես հաւանակ, գիտեցածդ արա, տեսնենք ինչ դուրս կըդար, ասեց Արծրունին, խռովեց ու գնաց տուն, բարկութիւնից հիւանդացաւ։ Կիկոլի՛ շարունակեց շինել իր գիտեցածի պէս։ Երկու ամիս շարունակ Գէորգ աղան տանից չէր դուրս գալիս և ոչինչ չէր ուզում լսել իր շինութեան մասին, թէև բոլոր ծախոր վճարում էր։ Երկու ամսւանից լետոյ եկաւ տեսաւ Կիկոլու շինածը, հաւանեց և պաշեց նրան ու խալայթ ընծալեց. բայց միւս օրը հրամակեց քանդել բոլորը և շինել ալսպէս, ինչպէս ինքն էր կամենում։ Ես տեսալ քո շինածը և հաւանեցի, հիմա կուզեմ որ դու տեսնես իմ շինածը, ասաց նա Կիկոլուն։

Ալր փորձը հազար ո.ու.բլիներ արժեցաւ։

1816 թւականի վերջերին Արծրունին առևետրական գործերով գնաց արտասահման։ Պտըտելով Եւրոպայի զանազան քաղաքները, նա իմացաւ որ Ամստերդամում Հալոց եկեղեցու շինութիւնների մէջ սկահւած է դեռ անցիալ դարում բանող (Ոսկանի և Վանանդեցու) հայ տպարանը իր բոլոր պարագաներով։ Եւ լուետ վասն սոյն տպարանի Հալոց լինելու

լԱմատերդամ քաղաքի ի ներքու կնքու նապօլէօն Բօնօ-  
փարթի՝ առ ուրումն Հոլանդացու՝ հասանէ (Արծրունին)  
անդը, և ոչ ինսալիալ զգին այնորիկ կամ զծախան ընդ  
ցամաքալին երկար ճանապարհորդութիւնսն, ինքնալորդոր  
սիրով ազգական բարերարութեանց գնեալ զայն զպաղո-  
վատիկ և զպզնձեալ նախազաղափարսն հայր և մայր կո-  
չեցեալ՝ հանդերձ բաւական կապարեալ ձուլեալ ձագուք,  
և ինչ ինչ պարագալիւք գործարանին և բերեալ ընդ իւր  
ի Տփիսիս ընծալէ նորակերտ (Ներսիսի) ուսումնարանին։  
(Տես. Քերականութիւն Միք. Զամշեան. Տփիսիս, 1826  
լիշտակարան),<sup>7)</sup>

Այս ընծալարերութիւնը սերտ կապով կապեց ներսէս  
Աշտարակեցուն Գէորգ աղայի հետ, որի անունը աւելի ևս  
հռչակեց տեղիս հայերի մէջ։ Արդ միջոցներում եկած էր Թիֆ-  
լիս վաճառականութիւնով Վանալ քաղաքացի ուն Մահտեսի  
Կատար Բարսզեան Զարտիչեանց։ Սա իր ամրողջ կեանքը  
պանդիստութեան մէջ անցկացնելով, բաւականի մեծ գումար  
էր վաստակած։ Ամուսնացած ցինելով և լափշտակւած ներ-

7) Այս տակարանը կոչւեցաւ „Տպարան Ուսումնաբանի Հայոց  
ընծալեցելու յազնւական Գէորգաւ Նըրեմեան Արծրունւոյ։ Եթէ չհաշ-  
ւել այն փոքրիկ տակարանը, որ կար զինւորական վարչութեան ձեռ-  
քում պաշտօնական թղթեր տպելու համար, այն ժամանակ սա պե-  
տի համարւի Թիֆլիսի անդքանիկ տպարանը Որովհետեւ Արծրունին  
տառերի և միւս պարագանեների հետ բերած էր միան մի փոքրիկ  
փարտեալ մամուլ, վասնորու Ներսէս առաջնորդը ձեռք բերեց մի  
մեծ մամուլ և միւս պակասորդ իրեղէնները Ապա Արծրունու օրինա-  
կին հետեւ հայազն իշխան Ազամալ Խօջամինասեանցը, ընծալելով  
ռուսերէն տառերի պղնձէն մալբերը, Ձեռք բերեցան նմանապէս վրա-  
ցերէն, պարսկերէն և լատիններէն տառերի Քանի որ Ներսիսեան  
գոլրանոցի շինութիւնը գեռ պատրաստ չէր, իշեալ տպարանը զետեղ-  
ւեցաւ նոյն դպրանոցի դիմացը վաճառպատկան գետնի վրա Ներսի-  
սի 1817 թւին կառուցած խանութիւններում Առաջին անգամ, որքան  
մեզ յաբանի է, տպեցաւ այդտեղ Ներսիսի մի շրջաբերականը 1819

սիսի և Արծրունու ազգասիրական գործերից, դեռ իր առողջ ժամանեալը, այն է նոյեմբերի 12, 1824, թւականի, մի կտակ շինեց ու կտակակատար նշանակեց նոյն Ներսէս առաջնորդին, Գէորգ Արծրունուն և Յարութիւն Ներմազան-Վարդանեանին։ Այդ կտակը, որ բատ ամենայնի Արծրունու ազգեցութեան տակ է գրւած և նրա յորդորանքով, մի առանձին ուշագրութեան է արժանի, որովհետեւ դա առիթ եղաւ Ներսէս Աշտարակեցու

---

թւին, ապա զտնազան մանր քարօզներ և նոյն Ներսիսի խթատական գրւածներու Ապա հետեւում են հետեւեալ մեզ յայտնի տպագրութիւնները՝

1823 թ. Խրատ բժշկութեան կալարամարապս հիւանդութեան (Խօլերայի), Գաւութեայ Կարրեցւոյ,

1825 թ. Հարահանդ քրիստոնէական Վարդապետութեան. Թարգ. Ալամդարեանի.

1826 թ. Յայտաբարութիւն քրիստոնէական պարտաւորութեանց հապատակաց Ռուսաց Ներսէս Ե. Քիրականութիւն Միք. Չամչեան,

1827 թ. Հռչակ ողորմութեան Նիկողայոս կայսեր,

1828 թ. Գերամբարձ յայտաբարութիւն Ռուսաց յաղագո պատերազմի ընդ Օսմանցիս

Նըմիսալըլիք Ներսիսեան դպրոցին

1830 թ. Դարաստան Խրատուց. Գէորգալ Արծրունւոյ,

Այս 1830 թւականին Գէորգ Արծրունին վախճանեցաւ, իսկ Ներսէս Ն-ը ուղարկւած էր Բեսարարիա. Կարբեցի Յովհաննէս առաջնորդը որպէս յայտնի է, Ներսիսին բարեկամ վիճելով հարւածեց նրա դպրոցը և սրա հետ տպարանն էլ դատապարտուեց յուութեան մենակի 1841 թիւը, այսինքն Կարբինցը Կարսապետ հավիկոպսի Ժամանակները Ալեւուհետեւ տպարանի գործունէութիւնը շարունակուում է երբեմն բաւ, երբեմն վատ, մինչեւ 1851 թիւը, Ներսէս Ն կալժողիկոսի հրաժանով դա վերանորոգւեցաւ, Սակայն Հայրապետի վախճանից յետոյ և մանաւանդ վախտունական թւականներում տպարանը նորից ընկաւ և եօթանամական թւականներին Ներսիսեան դպրանոցի հոգարարձութիւնը ծախեց այդ տպարանը պ. Հ. Էնֆիանջեանցին և ընկերութեանը.

և Երմոլովի Հինաւորց և մօտ բարեկամութիւնը սառնացնելու, ի թիւս զանազան ազգասիրական և մարդասիրական նըւիրաբերութիւնների, Զարուխչանցը կտակել էր Ներսէսի «Նորակառուց վարժարանին», 4600 ռ. և վասն լիշատակի իմոյ, ասած է կտակում, ի տպարանի նոյն վարժարանի տպել տացեն ի պէտո աշակերտացն զՔերականութիւն (Զամշեան), որքան և հարկաւոր իցէ՝ և զարտ կտակ իմ տպեցն ի նոյն քերականութեան, և զարդիւնս յառաջացնալս ի վաճառմանէ նոցա, յատկացուցեն ի մշտնջնական օգուտ նոյն տպարանին, և յամենալն զիրս տպեցնալս անդ անջինջ պահպանեցնեցն զլիշատակ անուտն իմոյ և ծնողաց իմոյ, (Քերակ. Մ. Զամշեան, Տփխիս 1826, եր. 592): Կտակը գրելուց չորս օր իւտոյ, այն է նոյն 1824 թ. նոյեմբերի 16-ին, Զարուխչեանը վախճանուեց Յարութիւն քահանալ Ալամդարեանի և Արծրունու Ներկայութեամբ: Ներսէսի թշնամիները իմաց տւին քաղաքիս ստոիկանապետ Մելնիկովին, թէ մեռել է մի օտարական շատ հարուստ հալ և թէ Ներսէսի ուղարկած մարդիկը յափշտակում են նրա կալքը: Մելնիկովը շտապ եկաւ մեռածի տուն և անպատճեց թէ Ալամդարեանին և թէ Արծրունուն, անուանելով նրանց գող և աւազակ: Միջամտւց գործիս մէջ Ներսէսը և շատ վիրաւորական գրութիւններ ունեցաւ Երմոլովի հետ, որոնց մասին տես ԱԿՏԵ. Կավказ. Արքօգր. Կօմ. թ VI. գ. 1-յ, ձօկում. 623, 624, 625: Քանի որ Ներսէսը Թիֆլիսի առաջնորդ էր, Զարուխչեանի կտակակատարութիւնը գնում էր իր կարգին և Գէորգ ազան հետզհետէ ժողովում էր հանգուցեալի ստանալիքները և կարդադրում. համաձայն կտակին: Բայց Ներսէր արդէն Բեսարարիս էր գտնուում, երբ տեղեկացաւ Արծրունու յանկարծակի մահւան մասին: Եւ ահա Ներսէսը 1831 թւի մարտի 20-ին զրում է Քիշնելից Թիֆլիսում գտնուող երրորդ կտակակատար Յարութիւն աղա Ներմազան-Կարդանեանին. Որովհետեւ սիրեցնալն ի մէնջ բարելիշատակ Մահտեսի

Կասպար աղայն Բարսղեան Զարուխցեանց, իւրով բարեկամական լուսովն որ առ մեզ, յանձն արար մեզ զկտակ իւր և հոգաբարձու այն կարգեաց առաջին զմեզ, երկրորդ—զազնւական Գէորգ Արծրունի իւր համաշխարհիկ, և երրորդ զձեր արժանանձնութիւն և այնու էութեամբ՝ զի և իւրաքանչիւր ոք ի մէնց երեցունց կամ ի մերում կենդանութեան և կամ յետ մահու մեր՝ ում և կամիցիմք, կարող իցեմք յանձնել զփոխանորդութիւն մեր նովին կատարեալ կարողութեամբ, որպէս և գտանի յանձնեցեալ մեզ։ Այլ մինչեւ ցալժմ չունիմ ծանօթութիւն, թէ երկրորդն ի մէնց հանգուցեալ ազնիւ Գէորգ Արծրունին առար նպատակ կտակակատարութեան իւրոյ բանիւ կամ գրով իւրով ունի նշանակեալ զաք փոխանորդ իւր թէ ոչ Բայց զի ցաւն այն խոյերամարտուս, որ Եհան ի կենաց աստի զհալիքնասէր անձն այն, չունէր առ բազումս ի հարուածելոց ինքեամբ երկարել զմիջոց ժամանակի, եթէ և նման այնօրինակ անագորոյն պատահմամբ իցէ զտեալ կենազրաւ, լոյժ համաձայն օրինաց ինձ թւի, թէ որպէս սմենայն հալիքնական ժառանգութիւնք նրա, ընդ այնոցիկ և այս իրաւունք կտակակատարութեան նորին, նովին թէութեամբ նշանակեցելով ի կտակազրի Մահտեսի Կասպարալ յատկասցին ժառանգի նորա՝ Երեմիա Գէորգեան Արծրունւոյ, եթէ և ձեր համաձայնութիւն կցորդեացի իմում ալսպիսի դատողութեանց։ Եւ վասն ոչ զիտելոյ իմոյ զտեղի (Երեմիա) Արծրունւոյն, մինչեւ ցալօր չունիմ տակաւին առ նա զգըրութիւնս և ցանկամ լսել թէ ուր արդեօք գտանի նա ալժմ յետ վերադարձին։

Սրանից էլ առաջ, այն է 1830 թւի հոկտեմբերի 15-ին ներսէս Աշտարակեցին գրում է նոյն Յարութիւն աղա Եերմազան-Վարդանեանին «...Ալսու ալժմ զալս հարիւոր համարիմ յարտնել ձեզ զի հարազատն հալիքնի աղջիկ և մեր աղա Գէորգ Երեմիա Արծրունի թէ զիտարդ

ունիցի կարգաւորեալ զամենալն զործս իւր և զտուն, և զիարդ լաղազս հաշուոց կտակի Մահտեսի Կասպարայ և փոխանորդութեան իւրոր Եւ թէ ուր ալժմ գտանիցի որբուկ նորա միակ՝ աղա Երեմիա Գէորգեան Արծրունի—զոլով իմ անգէտ ըստ ամենալնի՛ ցանկամ ընկալնուլ զծանօթութիւն՝ թէ ունիցիք դուք: Նորին ազնուականութիւնն (Գէորգ Արծրունի) ի Յ-ն Հոկտ. 1829 ամի գրէ տռիս թէ... տպարանն մինչև անցեալ ամսոյ 15 տպեց վեց հարիւր գիրք իմ Պարաստան Խրատուց, ալժմ տպէ օրացոյց հինգ հարիւր հատ. . . . : Ճուք ծանօթիւնս թէ լաղազս ծախուց և արդեանց ուսումնարանին և թէ լաղազս ամենայն տպեալ գրեանց վաճառեցելոց և վաճառելեաց, մասնաւանգ վասն քերականութեան, որ 1500 հատ տպեալ... Գէորգ աղայի համակրութիւնը ներսէսի ձգտումներին և նրա ձեռնարկած զործերին այնքան մեծ էր, որ երբ 1829 թւին ներսէսի Բեսարարիա ուղարկած ժամանակ, նրա դպրոցը մնաց բանկարծ անխնամ և անդաշտալան և պիտի գոցւէր դրամական նեղ դրութեան պատճառով, Արծրունին լանձն առաւ թէ ուսումնարանի կառավարութիւնը և թէ բոլոր ծախուը ուսուցիչների և միւս պաշտօնեանների: Մեր ձեռքում գտնուում է և մի գրաւթիւն Եփրեմ կաթողիկոսի և Էջմիածնի համօրէն միաբանութեան ստորագրութեամբ, որով սրանք իմաց են անում իթիւս ալլոց ներսիստականաց և Գէորգ Արծրունուն, թէ վերջիններիս Թիֆլիսում հանգանակած 10,000 ռուբլին ի վճարումն Աթոռի պարտուց ստացել են, գոհ են և խնդրում են շարունակել ժողովարարութիւնը: Սակայն Արծրունու ազգասիրական ասպարիզի վրայ, և այն ինպաստ ներսէսի, հանգէս գալլ գրգռում էր ներսէսի թշնամիններին, որոնց մէջ առաջին տեղն էր բանում նոյն միջոցին գեներալ իշխան Վասիլ Օսկիբէ Բէհրուդեանը, որ Արարատեան աշխարհի նահանգապեան էր: Բէհրուդեանի հակակրութիւնը դէպի ներսէսի տոհմալին էր և իր հետաքրքիր պատմութիւնն ունէ,

որ տեղը չէ արտեղ առաջ բերել: Կասենք միայն, որ այն օրից երբ հակառակ կուսակցութիւնը յաղթութիւն տարառ և Ներաշուը հեռացւեցաւ Թիֆլիսից, Ներսիսականները, որոնց մէջ նշանաւոր դեր էր խաղում նաև Արծրունին, հալածմունքների ենթարկւեցան: Յալտնի չէ թէ ինչ ելք կունենար արդ կուսակցական կոփւը Արծրունու համար, եթէ վրայ չհասնէր վերջինիս յանկարծական մահը: Գոնէ Ալամդարեանի կըրած տառապանքները յալտնի են: Երբ, օրինակ, 1830թւին Թիֆլիսի Հայք գիմեցին խնդրագրով Եփրեմ կաթողիկոսին, որ Ալամդարեանը եպիսկոպոս ձեռնադրւի և նրան յանձնուի Ներսիսեան ուսումնարանի վարչութիւնը, Իշ. Վ. Բէհրուդեանը, արդ մասին տեղեկանալով, 19 հոկտեմբերի 1830 թւի զրում է Երևանից կոմս Պատկեւիչին՝ Արդ խնդրագրի մէջ, հեգնօրէն ասում է իշխանը, ստորագրողները վճռաբար յալտնում են, որ Հայոց ազգի զարդը Թիֆլիսում կազմում էին միայն երկու անձինք՝ Դէորդ Արծրունին և Ալամդարեան վարդապետը: Եւ թէ առաջինի մահովը վերացան Թիֆլիսի Հայոց ապագայ բարօրութեան լուսերը և արդ Հայքը ընկզմեցան խորին արտօնութեան մէջ, իսկ երկրորդի մասին—թէ՝ եթէ չի ձեռնադրւիլ եպիսկոպոս և չի վալելի արժանաւոր մեծարանք, այն ժամանակ նրանք բոլորեքեանք (Թիֆլիսեցիք) յաւ ի սրտի պիտի շատ վատ հետևանքներ սպասեն Հայոց լուսաւորութեան վերաբերութեամբ, որովհետև պիտի ոչնչանայ Թիֆլիսի Հայոց ուսումնարանը, որին ոչ ոք, բացի Ալամդարեանից, կառավարել չի կարող<sup>8)</sup>:

Դառնալով Դէորդ աղայի մնացած գործունէութեանը, պարտք ենք համարում կանգնել նրա գրաւոր աշխատութիւնների առկիթով: Նատերին գուցէ յալտնի է նրա յօրինած և

8) Акты Кавказ. Арх. Ком. т. VII, докум. 241.

1830 թւին տպագրած «Դարաստան խրառուց», <sup>9)</sup> անւանեալ աշխատասիրութիւնը, որ այժմ հազւադիւտ է համարւում։ Արդարեւ, գրում է Արծրունին, յառաջաբանի մէջ, բազումք մարթացան զկարևոր ինչ թողուլ յառաքինութեան վասն հայրենեաց և ազգի իւրեանց ի պէտս զիտութեան և հրահանդութեան ազգաօգուտ իրաց. այլ ես նուաստ զի չունիմ զգրականական գիտութիւնս այնքան՝ զի արարից ինձէն զնորագոյն մտեանս գիտութեան, վասն որոյ ձեռնամուխ եղեալ ժողովեցի զգրուածս բարոյական խըրատուց և պատմութեանց հնոց փիլիսոփայից և ատենաբանից, զորս ընթերցալ և ընտրանսաւ քաղեցի զպիտանի օգտակարս բարուց մարդկան. . . .

Աղաչեմ կրկին, շարունակում է նա իր վերջաբանում, ներողամիտ գտանիլ ինձ յալս գործ, լոր ձեռնարկի ի վեր քան զծագ իմոց կարեաց. զի չէին ինձ կամք զանուն գրագիտի ստանձնել, այլ գրասիրի. և ոչ պարծանս նորացոյց գրատպութեան հոչակել զինէն, այլ նախանձեցուցանել նախանձու բարեաւ զամենալն զհամազգի ուսումնասէր մանկունս մեր յօրինակէ իմմէ քաջալերեալ կամ պատկառեալ՝ առ այսպիսի ազգաշահ իրողութիւնս ամենացանկալի հայրենեաց մերոց թեւակոխել։ Զի թէ այլ անցեալ զերիտասարդութեամբ և անուս ըոլորովին՝ այս չափ փոլթեռանգն բերի ծանօթանալ գիտութեան իմաստնոց, և ի լոյս ընծափէլ զառաքինութիւնս նոցա կամ զմոլութիւնս ի հրահանգ վարուց և բարուց մերասեր համբակաց, որչափ նոքա կարասցեն հմտանալ, իմաստանանալ և առաքինանալ, եթէ ծնողք նոցա ծանուցանել զճաշակ զրականութեան, լորդոր լիցին և վերակացու՝ անընդհատ առաջնորդել որդուց իւրեանց ի հանապազորդութիւն ուս-

9) «Դարաստան խրառուց», քաղեալ ի գրոց իմաստասիրաց չանիւք ազնւական Գէորգայ Արծրունոյ, ի վայելս մանկոնց հարաստանի, Տիկիս, 1830. թ. № 16 էր. 218.

ման, ապախտ արարեալ զարօրեալ վաստակս նոցաւ Թերեւս ակա իցէ պատճառ, զի նօսր է լոյժ թիւ ուսելոց լադգի մերում. զի ծնողք՝ խարեալք կոյր զկուրախն անիմաստ կարծեօք ի մասնաւոր շահուց՝ զորս որդիք իւրեանց ի ձեռքս բերեն ալժմ անարգ աշխատանօք զրկեն զինքեանս և զորդիս իւրեանց լեզուց ի մեծամեծաց լապագալ շահուց։ Աւաղ, թէ ոչ զգաստացին լարմհետէ . . . .

Յառաջաջարանից իւսոյ հեղինակը զետեղել է մի ուսանանաւոր „Բան առ վերծանոցս“ անունով, որի գլխատառերը կազմում են „ի Գէորգէ Արծրունոյ“։ Այսեղ Գէորգը պատմում է իր զիմի անցածները՝

. . . „Քսան ամենիւք երկու ընդ նմին (ասում է նա) Ելի լիմ երկրէ պանդխափիլ ինքնին . . .

Նրջել ընդ ոլսրս իւր հողագընտին Ըստով յանձ Ըստրել ինձ տեղի ընակիլ ի նմին։ Համար մասն ընդ Պարսկաստանին,

ի Պարսից ծովէ Մարմարականին,

ի Կասպից ծովէ ցվերջ Պոնտոսին,

Բարս և վարս ազգացն առի ի զննին։

Ռոպէ երգ երգոց նկարք իմ զրչին,

Վերառեալ տանին յԵւրոպ աշխարհին,

Համբաւ իմաստից որք հոչակեցին,

Կրթութիւն անձանց և Հանճարք նոցին։

Ծիր լայնածառալ ի Ռուսաստանին,

Իտալ Գերմանիա ընդ Գաղղիալին,

Անդղիա, Հոլանդիա ընդ Բօլոնիալին,

Շուէցիր Սլավն ընդ Աւստրիալին . . . ևալին։

Ահա որքան երկիրներ է պտըտել Գէորգ Արծրունին, ուր խոր խոցւել է նրա սիրտը, տեսներով որ արդ երկիրների ընակիչները մի օր բոլորովին տղէտ են եղած, իսկ ալժմ նրանք կրթւած և լուսաւորւած, այն ինչ մեր Հայք տակաւին տղի-

տութեան մէջ են Յանկանալով որ լուսաւորութիւն տարած-  
է և հայերի մէջ, հեղինակը ասում է՝

„Որում (լուսաւորութեան) ցանկալ աչք մարդուս  
իմ ներքին,

Վասն Հայաստանի և որդւոց նոցին,

Զոր թէ ոչ տեսցեն աչք իմ զցանկալին,

Ոսկերքս զուարճացցին ի գերեզմանին:“

և ապա վերջացնում է իր խօսքերը, հառաջելով,

„Յիշատակ կացցէ ալս ապագալին,

Նոգուվի իմ ցանկալս բարութեան ազգին . . .:“

„Դարաստան խրատուց“ զերքը թէև ըստ տպագրու-  
թեան անդրանիկ աշխատութիւնն է Գէորգ Արծրունու, բայց,  
ինչպէս երևում է, նա ունեցել է և ուրիշ գործեր: Վերոյի-  
շեալ գրքի լառաջաբանի մէջ հեղինակը ասում է՝ „Բաց յար-  
մանէ ձեռնարկեալ է իմ կազմել զերիս հատոր պատմու-  
թիւնս և ընդ նմին զաշխարհացոյցս մասին ինչ Հայաս-  
տանի և Վասպուրականի և ալլոց անծանօթ գաւառաց  
Ասորոց. նաև զամենայն ճանապարհորդութիւնս և շրջա-  
գալութիւնս իմ ընդ քաղաքս և ընդ բնակիչս ախոցիկ և  
ծանօթսւթիւնս ինչ վարուց և բարուց նոցա, զոր և  
փութամ ի լոյս ածել լոգուտ իմաստասէր հայրենակցաց  
իմոց, եթէ յաջողեսցի Տէր:“

Դժբախտաբար Արծրունու ալս աշխատութիւնները  
ոչ միայն չտպագրւեցան, այլ և անլայտ են մնացած մինչև  
ալժմ, գոնէ մեզ համար: Որքան գիտենք, „Դարաստան խրա-  
տուցը“ հազիւ լոյս էր տեսել, կամ գուցէ զեռ լոյս աշխարհ  
պիտի գար, որ Գէորգ աղան յանկարծակի վախճանեց 1830  
թւականի խօսերայից: Ալդ սարսափելի հիւանդութիւնը վրայ  
հասաւ Թիֆլիսում 1830 թւի ամառը և ալնալիսի մեծ ջարդ  
տւեց քաղաքումս, որ լետագալ սերունդները տւին դրան մեծ  
խօլերայի, տիտղօսը: Հիւանդութիւնը երևալուց լետով, քաղա-  
քացիք շտապեցին փախչել լեռնալին կողմերի գիւղօրաւէր և

զով տեղերը, իսկ Արծրունին չուզեց հեռանալ ոչ մի տեղ և  
ապահովութեան համար ընտրեց իր քարվանսարայի ներքին  
յարկի այն սենեակներից մէկը, որի պատուհանները բացւում  
են Կուր գետի վրայ: Ահա այստեղ, լանկարծակի, բռնւեց խօ-  
լերայից Գէորգ աղան և կարճատեւ հիւանդութիւնից լետոյ  
վախճանեց, անկարող լինելով մինչև անգամ որևէ կտակ ա-  
նելու: Իր ազգականներից ներկալ է եղել թաղմանը միմիայն  
պ: Սանասարեանը, իսկ իր միակ որդի Երեմիան նոյն միջոցում  
գտնւում էր Թէհրան՝ Ռուսաց իշխ: Դօլգօրուկով գեսպանի հետ և  
վերադարձաւ Թիֆլիս միմիայն նոյն 1830 թւականի վերջերում:

中原書局

Եղիշերա Արծունաթիթ:—Նյու ընտանիքը:—Գրիգոր և Անդրեա Արծունաթիթը:—Սրբաց Մամկութիւնը և պատաններն թիւմը:—1863 և 1864 թվականները:—Համարակամ:—1864—1865 թվակի Հայ ռասանդական ըրբանը Գևոտեղուրդում:—Մի ավճակի այս ժամանակայ Հայ Մամուլի եւ զրոյողների վրայ:—Գրիգոր Արծունա անդրանիկի յօդամքը „Մեղուխ“ մէջ 17 ապրիլ 1865 թ. (ԱՆ 18, 14):—Գերմանիա, Գրանիա, Վիեննա եւ Վիեննիկ ու հայերէսի մէջ կատարդաւորժութէր:—Գրիգոր Արծունա աշնացութիւնը „Մեղուխ“ և Հայկական աշխարհիմ:—Վերադարձ ի Թիֆլիս:

Գէսրգ ազա Արծրունու միայնակ արու զաւակը—Երեմիան՝ ծնաւ 1804 թւին Վան քաղաքում և մօտ իննը տարբեկան հասակում՝ ծնողների հետ եկաւ Թիֆլիս։ Զգիտենք՝ ուժազգեցութեամբ և կամ որի ճանապարհ ցոյց տալով՝ Գէսրգը տւեց իր որդուն ուսման նախ քաղաքիս „Ազնւականաց“ անւանեալ (յետոյ Գիմնազիա) ուսումնարանը, ապա ուղարկեց Պետերբուրգ մի զինւորական վարժարան։ Աւարտելով այստեղ իր ուսման ընթացքը, Երեմիան 1823 թւին, իր 19 տարեկան հասակում, մտաւ „Էջյու-Գևարդիայի Ռեզանսկի“ հեծելագունդը „ինձիկրի“ աստիճանով։ 1826 թւին նա ստացաւ „կոյսիկանի“ աստիճան և վերագրաձաւ Թիֆլիս։ 1827 թւին, Պարսից պատերազմի ժամանակ, նա մասնակցու էր Աբաս-աբագի, Սարգար-աբագի և Երևանի նւաճմանց գործում, իսկ հետագայ 1828 թւին Օսմանեան պատերազմի ժամանակ՝ Արծրունին գտնուում էր Գանուբեան Ռուսաց բանակում, ուր ստացաւ պօրուցիկի աստիճան։ Այնուհետեւ երբ իշխան Գօլ-

գօրուկովը 1829 թւին, առանձին յանձնարարութեամբ, ուղարկեցաւ Թէհրան, նա հետը տարտւ և երիտասարդ սպալ Արծրունուն: Դէյկարխանի և Թուրքմէնչալի դաշնագրութիւնների ժամանակ Երեմիան Ռուրաց կողմից նշանակւած էր կտնւել սպարսից Մահմէտ-Միրզա և Խոսրով-Միրզա արքալորդիների մօտ, և ապա Համադանում ներկայացաւ Շահին: Պարսկաստանից Երեմիան վերադարձաւ: 1830 թւի վերջերում, երբ արդէն վախճանած էր նրա հայր Գէորգը: 1831 թւին Արծրունին նշանակւեցաւ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեալ երկրիս կառավարչապետ կոմս Պասկեւիչի մօտ ու վարելով արդ պաշտօնը նաև Բարօն Յօգէնի ժամանակ, նա 1832 թւին մասնակցեց լեռնական Գալգալալեցիների գէմ եղած արշաւանքում: 1835 թւին Արծրունին ստացաւ „ուսումնառիչ“ առտիճան, իսկ 1836 թւին նա եղաւ պօզավոլիովնիկ ու տեղափոխւեցաւ Ելմատից նախարարութիւնը: Նախարար կօմս Կանկրինը յանձնեց նրան ուսումնասիրել Պարսկաստանի հետ ունեցած երկրիս վաճառականութիւնը և ապա մի առժամանակ Անդրկովկասեան մաքսատունների կառավարչապետը դարձաւ: 1839 թւին, արդէն պօլիովնիկի աստիճանով, Արծրունին նշանակւեց կառավարիչ ամբողջ Կովկասեան բանակի ինտենդանտութեան, բայց զինւորական նախարարութեան հետ պատահած տարակուսանքների պատճառով, 1844 թւին թողեց արդ պաշտօնը և հեռանալով ծառայութիւնից, անձնատուր եղաւ իր մասնաւոր գործերին: 1860 թւին նա նորից մտաւ ծառայութիւն և առանց որոշ պաշտօնի գտնւում էր երկրիս փոխարքալի տրամադրութեան ներքոյ: 1861 թւին ստացաւ գեներալ-մայորի աստիճան ու լիտոյ: 1864 թւին, բոլորավին հրաժարական տւեց ծառայութիւնից և հեռացաւ մասնաւոր կեանք վարելու:

Երեմիան զիտէր, բացի հայերէնից ու ռուսերէնից, նաև Քրանսերէն, պարսկերէն և թուրքերէն լեզուները: Նա շատ

սիրում էր կարդալ, բայց աւելի շատ սիրում էր ստեղծել որևէ է նշանաւոր ձեռնարկութիւնների նախազծեր, լայտնել սուրեւ և կտրուկ մտքեր և համարձակ առաջարկութիւններ անելը Արժանիք է ուշագրութեան այն իրողութիւնը, որ Երեմիան մի առանձին հակումն ունէր դէպի վաճառականութիւնը Արևելքի հետ Ահա այդ նպատակին էր ծառալեցնում Արծրունուն և կոմս Կանկրինը, որին յայտնի էին, որ Երեմիան Պարսկաստան գտնւած ժամանակն էլ բաւականին տեղեկութիւններ էր ժողոված այն տեղի վաճառականութեան մասին: 1836 թւին Արծրունին ներկալացրեց կոմս Կանկրինին մի տեղեկագիր, Անդրբօվկասի քանի մի տեղերում տօնավաճառներ կազմելու մասին», բայց այդ առաջարկութիւնը չընդունւեցաւ երկրիս կառավարչապետ Բարօն Ռոզէնից: Այս մասին եղած հետաքրքիր գրագրութիւնը տպւած է Ակտե Կավказ. Արք. Կոմ., տ. VIII, գօկմ. 100 և 101:

Նոյն նախարար կոմս Կանկրինը 1838 թւին հաղորդեց երկրիս կառավարչապետ Գօլուինին, թէ Երեմիա Արծրունին, աստիճանաւոր Արւազեանը, ազնւականները՝ Լօռու-Մելիքեան, Զանդէլի, Խէրօդինեան և Թիֆլիսի քաղաքացի Աբխազումեան, իրաւունք են խնդրել նախարարութիւնից կազմել 15 տարի ժամանակով մի ընկերութիւն «Պարսկական վաճառականութեան ընկերութիւն», անունով: Դրա նպատակը պիտի լինի մատակարարել Պարսկական սահմանակից գաւառներին Մուսաց ասլրանքներով, իսկ այնտեղից փոխարէնը դուրս բերած համ մթերքները կարելուն չափ մշակել Կասպից ծովի եղերքներում կազմելիք գործարաններումը: Ընկերութեան գըրամագլուխը պիտի լինի երկու միլիոն ռուբլի թղթագրամ, որ լիշեալ ընկերները պիտի ժողովնեն իրանց մէջ: Կենդրունատեղին կըլինի Թիֆլիսը, մասնաճիւղերը—Բագու և այլ տեղեր: Ընկերութիւնը խնդրում է որ տան իրան Կասպից ծովի եղերքում հազար գեսեատին հող, և Բագուի ու Շիրւանի նաւթի աղբիւրները և աղի լճերը նոյն վճարով, ինչ որ ստանում էր

տէրութիւնը վերջին ժամանակներում։ Աչքի առաջ ունենալով, զրում է կոմս Կանկրինը, որ Մուսասատանի մի այդպիսի առևտրական լարաբերութիւնը Ասիայի հետ ցանկալի է տէրութեանը, Թագաւոր Կայսրը 1838 թւի մարտի 8-ին բարեհաճեցաւ Հաստատել լիշեալ ընկերութեան կանոնադրութիւնը, իսկ հազար գետեատին հողի, ինչպէս նաև նաւթի և աղի կապալառութիւնների խնդիրների թողարկութիւնը՝ թողնել Կովկասի կոռավարչապետի տեսութեան (տես ԱԵՒ Կ. Ա. Կ., թ. IX. ՃՈԿՅ. 57)։ Գործից չի երևում, թէ ինչպէս վճռւեցին հողի, նաւթի և աղի խնդիրները, բայց լալոնի է, որ չնայելով քանի մի արած սկզբնական ծախսերին և նախապատրաստութիւններին, լիշեալ ընկերութիւնը չկալացաւ։

Անցաւ ալդ ժամանակից մօտ 34 տարի և ահա 1872 թւին Երեմիս Արծրունին նորից հանգէս է գալիս Պարսկա-Հնդկական վաճառականութեան խնդրով։ 1872 թւի ապրիլի 28-ին տեղւոս Մոռաց տեխնիկական ընկերութեան մէջ նա կարգաց „Հայկաստան գնայիր երկաթուղու իւնելիրը“ անունով զեկուցումը<sup>10)</sup>, որի մէջ Հեղինակն առաջարկում է Անդրկավկասեան երկաթուղին Պարսկաստանի վրայով հասցնել մինչև Հնդկաստանի սահմանները և այդպիսավ խլել Անդրկաստան նրանց առևտրական օգուտները։ Այս համարձակ գրածքով Արծրունին ցոյց տւեց, որ նա իր երկարատև լրութեան ժամանակ էլ միշտ հետաքրքրուում է եղել Համաշխարհական վաճառականութեան բռնած ընթացքովը։

---

Նարունակ զբաղւած լինելով իր ընտանեկան և մասնաւոր գործերով, Երեմիս Արծրունին, իր հօր՝ Գէորգի նման, շատ ուշ գուրս եկաւ Հանդէս ազգալին և Հասարակական գործունեութեան ասպարիզում և ամեն անգամ շտապեց շուտ հե-

10) „Вопросъ о желѣзной дорогѣ въ Индію“ Ի. Аргурии. Տես Сборникъ свѣдѣній о Кавказѣ. т. II. Тифлисъ. 1872 г. և առանձին տպագրւած։

ռանեալ այդ տապարիզից ու նորից առանձնացած մարդու կեանք  
վայելել:

Որքան մեզ յալտնի է, Երեմիան առաջին անգամ հանդէս է գալիս 1861 թւին, երբ Խրիմեան Հայրիկը Թիֆլիսի եկեղեցիներում, իր ազդու քարոզներով, հրաւիրում է Հայ հասարակութեան ուշադրութիւնը Ա.առավուրականի Հայոց նիւթական և բարոյական դրույթեան վրար: Քաղուքիս մէջ միտք է ծագում նիւթական օգնութիւն հասցնել Հայրիկի կառուցած Վարագար գալոցին, տպարանին և . Արծուի Ա.առավուրական, հանդիսին: Այդ միտքը իրագործելու պարագրաւի է կանգնուած գեներալ Արծրունին և, ինքը մի խոշոր գումար ստորագրելով, խոստանում է շարունակել ստորագրութիւնը և պէտք եղած դրամը ժողովել: Թէև, գժբաղդարար, կողմնակի ինչ ինչ հանգամանքների պատճառով Արծրունու ալս ճեռնարկութիւնը չաջողեց, բայց, եթէ չհաշւել ներսէս Ե-ի Զմիւռնիալի եկեղեցուն ուղարկած նպաստը, ալս առաջին անգամն էր, որ Թիֆլիսեցիք լոգուտ Տաճկահայոց դրամ էին նւիրում: Ալսէս թէ այնպէս, բայց Արծրունու միջամտութիւնը այդ բարի գործում քաղաքիս Հայոց ուշադրութեան առարկալ եղաւ:

Երբ այնուհետև առաջ եկաւ ներսիսեան դպրանոցի վերանորոգութեան խնդիրը և հարկ եղաւ մի նոր կանոնադրութիւն պատրաստել լիշեալ հիմնարկութեան համար, Երեմիան ժողովեց իր շուրջը Թիֆլիսի այն ժամանակւալ բոլոր հայ երիտասարդութիւնը, որ արդէն սաստիկ ոլտաերազմ էր մզում հին հոգաբարձուների և Թափիքեան անւանեալ կուսակցութեան հետ: Նատերը գուցէ կըլիշեն Արծրունու կտրուկ և ազդունաուերը արն ժամանակւայ Հայոց պատգամաւորների ժողովներում: Սակայն արդարութիւնը պահանջում է ասել, որ նա հասարակութեան սպասածից տռաջ հեռացաւ գործից: Հրաժարուելով միանգամայն ընտրուիլ հոգաբարձու լիշեալ դպրանոցի, Արծրունին կանոնադրութեան պատրաստելու գործի մէջ էլ անհամբերութիւն ցոյց տռեց և առիթ եղաւ քջապատող երի-

տասարգներին պազիլ իրանից . . . : Ալնուհետեւ ազգային գործերի մէջ այլևս չխառնւեց:

Անցան տարիք և ահա՝ երբ 1867 թւին գործադրւեց 1866 թւի օգոստոսի 11-ին Բարձրագոյն Հաստատած նոր կանոնադրութիւնը Թիֆլիսի քաղաքային գործերը կառավարելու մասին, գեներալ Արծրունին ընտրւեց քաղաքազլուխ: Սակայն և այս պաշտօնի մէջ նա երկար չմնաց և 1868 թւին, անձնական հիւանդութիւնը պատճառարանելով, հեռացաւ: Հետագայ եօթանասնական թւականներում նա իրքեւ իրաւասու քաղաքի, ունի առաջարկած քանի մի խնդիրներ, որոնց տեսութեան մէջ մենք այժմ չենք մտնում:

---

Երեմիա Արծրունին իր կեանքի մեծ մասը անց է կացրել իր կալւածների վերահսկողութեան մէջ և նրանց շինութեամբ: Սիօնի մօտ գտնուող Գէորգ աղալի շինած քարվանսարան թէ և երբեմն երբեմն փոփոխութիւններ էր կրում Երեմիալի ձեռքով, բայց 1855 թւին բոլորովին հրոյ ճարակ լինելուց լետով, ահազին վնաս տւեց տիրոջը և մեծածախս վերանորոգութեան կարեւորութիւն ունէր<sup>(1)</sup>: Այդ վերանորոգութիւնը վայելուչ կերպով կայացաւ և վաթունական թւականների սկզբում քարվանսարայի կապալառուն տալիս էր արդէն մօտ 8—10 հազար ռուբլի զուտ արդիւնք: Բայց տէրը ալդ գործողութիւնը կատարելու համար պարտաւորւած էր առժամանակ պարագի մէջ մտնելու, որի վճարումը կը լուսար Տէր-Ստեփանեանի հետ ունեցած գատից: Արծ-

---

11) Այս հըգեհը, որ Թիֆլիսի տարեգրութիւնների մէջ մի նշանաւոր տեղ է բռնում, ծագեց յունիսի 8-ին 1855 թւի առաւտօնեան ժամի 4-ին նոյն իսկ քարվանսարայի մէջ և կըսկը սարսափելի արագութեամբ բռնեց ամբողջ շինութիւնը և լավեց ամեն ինչ, հալելով մինչև անգամ երկաթեղինը, Ամենախիստ քննութիւնն անզամ չկարողացաւ պարզել կըսկը պատճառը: Քանի որ քարվանսարին մէջ կենդրանացած էին շատ նշանաւոր վաճառականներ, որոնց ոչ միայն

բունին ունէր և մի այլ նշանաւոր կարած։ Գէորգ աղան քսանական թւականներում ձեռք էր բերել Արացի Գաբակէւնքի ալգին և Արաց թագաւորազն իշխան Պետրոս Բագրատիոնի շինութիւնը, որի մէջ քսանական թւականներում գրեթէ առաջին անգամ խաղացեցաւ Ռուսաց Գրիբոեդօվ հոգակաւոր հեղինակի „Գօրե օրե յմա,, կօմէդիան։ Գէորգ աղան թէ լիշեալ շինութեանը և թէ նրա կից արդուն վճարեց, որպէս ասում են, 3600 ռուբլի։ Երբ մի օր այդ, այն ժամանակւալ Թիֆլիսեցիների համար ահազին գումար կարծւած, փողը Գէորգ աղան մասամբ արծաթով և մասամբ պղնձէ դրամ գարձուցած, շալակել է տւել 14 հատ մշակների ուսին և հանգիսաւոր կերպավ ուղարկել է կալածատէրերին, Արացիք, որպէս աւանդութիւն կալ մինչև այսօր, բացականչում են եղել „փառք Աստուծոյ, վերջապէս Արացիք էլ գտնւեցան, որ կարողացան խափինչ մի հալի ու ալդքան փող ստանալ մի

տաղբանքը, այլև հաշապրգերը և գրամարկներն անգամ ալրեհցին և որոնց ոչ մի կայքը, ըստ այն ժամանակւայ սովորութեան, ոչ մէ ընկերութեան մօս չէր սպահովացրած, — Թիֆլիսի առևտրական աշխարհի վնասը շատ մեծ էր և մօս Յ միլիոն ռուբլու էր հասնում։ Հրդեհի պատահած ժամանակ Արծըռւնին արտասահման էր և երբ վերապարձաւ Թիֆլիս, կը թնելով այն ընդհանրացած կարծիքի վրայ, թէ քարվանսարայի կրակ տուողը եղել է նոյն շինութեան մէջ նատող Դօրեցի Տէր-Ստեփանեան վաճառականը, որա գէտ դատ բաց արւա և մօս կէս միլիոն ռուբլու վնաս պահանջեց։ Դատը տասնեակ տարեք տևեց և վերջ ամենայնի, մեզագրանաց ոչինչ հաստատ պատցուցներ չգտնելու պատճառով, կառավարից Սենաթի վճռով Տէր-Ստեփանեանը ազատելով անքասանութիւնից, կը աւոնք ստացաւ Արծըռւնուց պահանջել իր վնասները։ Այս երկար տարիները դատը, որ երկու կողմերին էլ ահազին վնաս պատճառեց թէ նիւթապէս և թէ բարոյապէս, լիսունական թւականներից սկսած և մինչեւ գրեթէ իր մահը՝ միանգամայն գրաւած էր նրեմիայի ուշադրութիւնը և կաշկանդած նրա մնացած բոլոր գործունէութիւնը։

անօգուտ գետնի համար։ Ալդ անօգուտ գետինը այն է, ուր ալժմ „Դոլորդովլայս“ անւանեալ պողոտայի վրայ կառուցած է։ Արծրունու Գալքրեյնաւ“ կոչւած հորակապ և ընդարձակ շինութիւնը։ Խշան Բազրատիոնի միտյարկանի և ալիջէ ակուռից շինուած և ալժմեան պազոտայի վրայ գտնող տաւնը Գէորգ աղան վերափոխել է երկարկանի շինութեան։ Խակ Երեմիան, իր բոլոր մասնաւոր կեանքը նախելով լիշեալ կալածքին, նախ վերանորոգեց ալժմեան Գվօրցովայա փողոցի վրայ եղաղ ճակատը և աւելացրեց երրորդ լարկը, ապա փոքր առ փոքր և տարէցտարի տարածեց իր շինութիւնը գէպի ներս, տալով վերջնականապէս այն ձեւը, որով հրճւում և զւարճանում էր ալցէլուն։ Ալդ բոլորը Երեմիա Արծրունին կատարեց իր սեփական հանճարավ և առանց որևէ ճարտարապետի օգնութեան, որոց միջամտութիւնը, մի զարմանալի լամառութեամբ, նա արհամարում էր։ Երբ վերջապէս, ալդ իր ժամանակւան համար Թիֆլիսի ամենափառաւոր շինութիւնը պատրաստ էր, մօտակայ Թամամշեան քարւանսարայի բոլոր նշանաւոր վաճառականները խմբովին ցանկացան տեղափոխել այստեղ, բայց Արծրունին մի այնպիսի ծանր և բարուապէս անտանելի պայմաններ առաջարկեց նրանց, որ պատւելի վաճառականները անմիջապէս հրաժարւեցին իրանց գիտաւորութիւնից։ Հետեանքն այն եղաւ, որ լիշեալ Գալէրէլա, անւանեալ ընդարձակ շինութեան բազմաթիւ խանութները, զրեթէ մինչև Երեմիալի մահը, մեծ մասամբ մնում էին դտարկ։

Ալդ Գալէրէլայի, մէջտեղը շինուած էր մի լախն, երկաթէ կամարով կապւած և առաջը բոլորովին բաց, դահլիճ։ Թիֆլիսի քաղաքազլուխը պատւաւոր քաղաքացիների հետ, 1864 թւին ցանկանում էր լիշեալ ընդարձակ դահլիճը ծառայեցնել բիրդայի համար, որ միտք ունեին բանալ այստեղ, բայց Արծրունու առաջարկած պայմանները դարձեալ այնքան ծանր էին, որ քաղաքացիների ալդ գիտաւորութիւնն էլ մնաց անկատար։

Յիշեալ դահլիճից քարէ սանդուխը տանում էր շինութիւնների ետևը գտնուող սիրուն արդին, որ իր պատական ըռւսեղէնով մի դրախտ էր և տմեն կերպ օրինակելի այն ժամանակւայ Թիֆլիսի համար: Արդ ալգու մէջ բացւող ուղիղ ճանապարհը տանում էր դէպի մի հովանոց, որ ծածկւած էր մշտական կանանչեղէնով: Հովանոցի աջ կողմը երևում էին երկու ննջեցեալների շիրիմներ, որոնց մէկի տապանաքարից իմացւում էր՝ թէ արդտեղ է ննջում Գէորգ աղա Արծրունին: Միւսի մէջ ամփոփւում էր Երեմիայի վաղամեռիկ մի դուստրը:

Վաղ առաւօտից մինչև Երեկոյ արդ հովանոցում նստած էր գեներալ Երեմիան: Նա արդտեղ պարապում էր, մարդիկ ընդունում և ճաշում: Պարզ էր իր կեանքը: Առաւօտը վաղ արթնանալով, նա իջնում էր իր բնակարանից, որ ալգու ետևն էր շինուած, և զբաղւում էր ծաղիկներով և բոյսերով: Ապա հովանոցի մէջ նստում, Վանեցինների պէս մածնէ ըրթոշ էր անում և մեծ ախորժակով ուտում: Երբեմն մածնի տեղը ըռնում էր տաք-տաք մախոխը, որ շատ մարսողական և օգտակար կերակուր էր համարում: Ապա կարգում էր կամ գրում մինչև ճաշը: Ճաշին գրեթէ միշտ քանի մի հիւր էր ունենում, որոնց զիտէր ոչ միայն լաւ կերակրէլ, այլև զւարճացնել իր խելօք և սուր խօսակցութիւնովք: Բայց արդ հիւրերը մի փոքրիկ շրջան էին կազմում և Արծրունին շատ քիչ էր վերանսրուգում այդ շրջանը: Հաստակական կեանքից նա փախչում էր և ոչ մի ընկերութեան մէջ չէր խառնուում: Բնութիւնով իմաստ էր, խրոխտ և սպահանջող, բարկացոտ, եսասէր, կամակոր, կրքոտ և յամառ: Բայց այս բոլոր յատկութիւնների հետ շատ բարի էր և զթոտ, արդարասէր, ազնիւ, մեծահոգի, վեհանձն և ճշմարիտ:

Գեներալ Երեմիա Արծրունին վախճանեց իր 73 տարեկան հասակում 1877 թւի նոյեմբերի 15-ին և նոյն ամսի 17-ին թաղւեցաւ Վերայի Հայոց գերեզմանատանը: Թիֆլիսի գրեթէ ամբողջ Հայ հասարակութիւնը պատուց նրա յուղարկաւորութիւնը իր ներկայութեամբ:

Երեմիա Արծրունին Պարսկաստանից վերադառնալուց յետով, 1840 թէ 1841 թւականին, ճիշտը չգիտենք, ամուսնացաւ Թիֆլիսում հայտզգի իշխան Դաւիթ Նազարեանի դստեր օրիորդ Ագրիպինայի հետ<sup>12)</sup>: Այս ամուսնութիւնից մօտ ուժ թէ իննը գաւակներ են ծնել, որոնցից երկու երեքը վախճանել են դեռ մանկութեան հասակում: Խակապէս մեզ լարտնի են Երեմիայի երեք աղջիկները և չորս արու գաւակները: Վերջիններիս մէջ անդրանիկը եղել է Գէորգը, որ հասնելով երիտասարդութեան և արդէն գվարոյիայի սպալ լինելով, մեռել է: Նոյն

12) Հայագի իշխան Նազարեանների մասին մեր ունեցած տեղեկութիւնները շատ կցկուուր են: Վասարանի թաւադների (կը նեազների) ցուցակում, որ նեկայացրել է Վասար Հերակլ թագաւորը Ռուսաց տէրութեանը, նոցա ինեկազութեան պատւանունի մէջ հասաւածելու համար, Նազարեանները վկան նշանակուած: Բայց, քանի որ Պօղոս կայսեր և ապա Ազէքսանդր Ա, կայսեր ժամանակ Ռուսաց պատմութեան մէջ դեր է խաղում հայ ազգի գնդապետ (պօլկովնիկ) իշխան Նազարեանը, հաւանական է կարծել, որ այս տաճը Անդրկովկասից տեղափոխել է Ռուսաստան նոյն ժամանակներում, երբ գաղթել են օրինակ Մողովիկի կամ Ղղլարի Հայք, և այնուհեղ Ներկայացնելով Ռուսաց տէրութեանը իր սոհմալիին արտօնութիւնները, ձեռք է բերիլ կնեազութեան պատուանուն: Հայոց պատմութեան մէջ այս տոհմի վերաբերութեամբ ոչինչ վկայ, Ռուսաց պատմութեան մէջ հայ ազգի գնդապետ իշխան Նազարեանը լիշում է անցեալ զարու վերջերում և ներկայ գարուս սկզբներում (Տես և Սобр. актовъ, отиосищихся къ обозрѣнію исторіи Армянскаго народа. Москва. 1838, т. III.): Երեմի վշեալ գնդապետ իշխան Նազարեանի որդին էր այն կնեազ Դաւիթը, որ վերադառնալով Թիֆլիս, Երեսնոմիս թւականներում Մողնու թաղում ունէր իր սեփական տունը և որ զարձաւ Երեմիա Արծրունու աները, Մեր ունեցած տեղեկութիւններով՝ Դաւիթ իշխան Նազարեանը, բացի Արծրունու ամուսին Ագրիպինա աղջկան, ունէր նաև Երկու արու գաւակներ, որոնք ուուս աղջիկների հեա ամուսնանալով իրանց սերունդը դարձին ուուս ազգի իշխան Կազարովներ:

վախճանը ունեցել է և նրանից երկրորդը՝ Սարգիսը, Ապա 1845 թւի փետրվարի 27-ին ծնել է Գրիգորը և 1847 թւին Անդրէառը:

Երեմիա Արծրունու գերդաստունը մնում էր Թիֆլիսում մինչև 1855 թւականի սկիզբը, երբ վախճանեց ալստեղ նրա ամուսին տիկին Ագրիսպինան: Այդ տիսուր անցքից անմիջապէս լետոյ, Երեմիան առնում է իր որբ մնացած որդիքը և ճանապարհորդում Գերմանիա: Մի ամբողջ տարի այնտեղ մնալու հետևանքը այն է լինում, որ որդիքը բաւականաշափ ընտեղանում են գերմաներէն լեզվին: Գրիգորը սկսում է այնտեղ դասեր առնել նաև լատիներէնի: 1857 թւի սկզբներում Երեմիան բերում է որդիներին Թիֆլիս և սկսում է հօգս տանել Գրիգոր և Անդրէաս որդիներին հայերէն սովորացնելու: Հայոց թէ լեզվի և թէ կրօնի ուսուցիչ հրաւիրուում է նոյն ժամանակ արքունական դպրոցների ստորին դասատներում այդ առարկաները դասախոսող Տէր-Գրիգոր Տէր-Բարսեղեանը (այժմ առ. ք. Բէթղէհէմի եկեղեցու): 1860 թւից Տէր-Գրիգորի տեղը բռնում է պ. Պետրոս Սիմօնեանցը (լետոյ խմբագիր՝ Մելու Հայաստանի, լրագրի): Հաւանական է կարծել, որ սոյն Պ. Սիմօնեանցի խնդրանօք կամ լորդորագով էր, որ Երեմիա Արծրունին հանդէս եկաւ Թալիբեան և անտի-Թալիբեան կուսակցութիւնների պատերազմում ներսունեան դպրանոցի խնդրի վերաբերութեամբ, ինչպէս արդէն լիշտած է վերևուած: Սակայն պ. Սիմօնեանցի աւտոնդած հայերէնը պատանեակ Արծրունի եղբայրների համար, որպէս պիտի տեսնենք լետոյ, շատ սպտղաբեր չեղաւ:

Երեմիա Արծրունին, անկասկած, սիրում էր և գըգւում իր Գրիգոր և Անդրէաս որդիներին: Բայց այդ սէրը իր մնասկար կողմերն էլ ունէր: Երեխաները ծանրաբեռնաւած լինելով զանազան լեզուների և առարկաների դասերով, որանց համար, իդէալ է ասել, հայրը հրաւիրած ունէր զիսաւօրապէս տեղիս գիմնազիալի ամենալարնտիր ուսուցիչներին, ոչինչ ծախս չինալելով այդ մասին,—զրեթէ շարունակ կռպած կեանք էին

վարում։ Նրանց իրաւունք էր տալիս հայրը ազատ ժամերում պարտել իրանց ալգին, իսկ վախուռնուերկու թւականից սկսած՝ իջնել երեմն և . Գալէրէլալի, վերին յարկը։ Այդ զրօնանքի ժամանակ Քրիզորը, որպէս մեծ, առաջնորդում էր Անդրէասին և, ինչանիր աւագութեան, իրաւունք էր ստացել կրելու ձեռքում մի փոքրիկ գաւազան (ձեռափալու)։ Պատանեակների մօտ երեմն հիւր էին գալիս միասին ալդիի մէջ զրօններու երկու թէ երեք գերգաստանի երեխաններ, որոնց մէջ առաջին տեղն էին բրոնում և աւելի ընտանի էին համարում ալ. Ստեփան Ղամբարեանի որդիները Պօղոսը և Գէորգը (Եուրին) 13։ Բայց արդ կեանքը միատեսակ և ձանձրալի էր պատանեակների համար։ Առհասարակ մայր չունենալը շատ զգալի էր և մեծ հետեւանք պիտի ժողոնէր որդիկների բնաւորութեան վրայ, մանաւանդ որ հայրն էլ ամենեին յարմարութիւն չունէր արդ պակասը լրացնելու։ Գուրս եկաւ որ պատանեակները ապրում էին իրանց սահմանափակ առանձին աշխարհում, իսկ հայրը—իր որոշ, նմանապէս շատ սահմանափակ շրջանում։ Կամաց կամաց և աննկատելի կերպով որդիների և հօր յարարերութիւնները սպաշտոնական ձեւ էին բռնել՝ այս ինչ և այն ինչ ժամերին գալ՝ բարեւել հօրը և շուտով հեռանալ, զնալ իրանց գործին։ Այն ծնողական տաք կրակը, որ սովորաբար պիտի կապէ, մօտեցնէ հօրը և իր գաւակներին, ապարացի Երեմիալի մէջ շիջել էր, թէւոչ ոք կարող էր հերքել, որ նա սրտանց սիրում էր իր հարազատներին։ Այդ սառնութիւնը հետզհետէ ալնքան աւելանում էր, որ որդիները, օրինակ,

13) Պօղոս Ղամբարեանը, որ ընկեր եղաւ Արծրունի եղբայրներին նաև համալսարանում, սատցաւ մագիստրոսութեան սատիճան։ քանի մի տարի Թէֆլիսի առևտրական բանկի կառավարիչ էր, իսկ այժմ կրում է պարագոն գիրեկտորի Արքունական բանկի բաժանման (կոնտոր) Ռիգա քաղաքում։ Խոկ Եուրին այժմ Մոսկվայի համարանի պրոֆեսոր է իրաւաբանութեան։

տեսնելով իրանց հօրը ալգու ալսինչ կազմը զրօննելիս, իրանք փոխում էին ճանապարհը նրան չպատահելու համար, որպես պաշտօնական ներկաբանական ժամանակը չէր:

Հասկանալի է թէ որպիսի ուրախութիւն զգացին Արծրունի պատանեակները, երբ նրանց լայտնեցաւ, որ արժմ պիտի տեղիս գիմնազիան մտնեն: Վանդակից դուրս եկող թռչունի նման, նրանք ուրախ էին իրանց ազատութեան. նրանց շրջահայեցողութեան և աշխարհայեցողաւթեան հորիզոնը լայնացաւ, երբ զիմնազիալում լաջող քննութիւններից իտու երկուսն էլ ընդունեցան:

1863 թւի լունարից Արծրունու „Գալէրէլալի“ վերին լարկում պ. ի. Տէր-Միքելեանի և իմ ընկերութեամբ բացւեց մի գրավաճառանոց ամեն ազգի գրքերի: Հալերէն բաժինն էլ հարուստ էր և շատ նորութիւններ էր բովանդակում իր մէջ: Արծրունի եղբայրները, որ արգէն գիմնազիա էին լաճախում, իրանց ազատ ժամանակը անց էին կացնում մեր գրավաճառանոցում և արդարապէտ էս միջոց ունեցալ ի մօտոյ ծանօթանալ նրանց հետ: Դրիգորը մօտ 18 տարեկան էր, նիհար, բարկացու և շատ ջղալին. Անդրէասը մօտ 16 տարեկան էր՝ խարտեաշ գանգուր մազերով, երեխալական համարելի անմեղ պատկերով և հանդարա բնութեամբ: Կրտսեր եղբայրը միագամալն մեծի ազգեցութեան տակ էր գտնուում: Բայց չնայելով որ գրեթէ օրօրոցից սկսած սրանք միատեղ և միատեսակ էին սնւել ու զարգացել, երկուսի բնաւորութիւնները բոլորավին տարբեր էին: Դրիգորը սիրում էր սրախօսութիւններ անել, ծիծաղել և մինչև անգամ ծաղրել, Անդրէասը լոռութիւնով լսում էր, ժապում և մինչև ականջները կարմրում: Նրանք ռուսերէն էին խօսում միմեանց հետ, հօր հետ և մեզ հետ: Երբ հալերէնի վրայ խօսք էր լինում, նրանք հեգնական ժամփառ պատասխանում էին, որ թէև չեն խօսում, բայց փոքր ինչ հասկանում են ու այնքան, որքան գիմնազիալի համար

պէտք է—զիտեն։ Գրիգորը սիրում էր ծաղրել Պօլսից մեր բերած այնտեղի Հալոցդերասանական խմբի պատկերները։ „Հայք—թատրոն”, „Հայք—թատրոն”, բացականչելով և ծիծաղելով։ Ծիծաղում էր նա, երբ տեսնում էր մնը ձեռքին որևէ լրագիր։ Մեղուն, կամ Մասիս, շատպ կանչում էր նա Անդրէասին, հեգնական ժպիտով տալիս էր թերթը նրա ձեռքն ու տպա բարձրաձայն ծիծաղում՝ «տես հայք լրագիր էլ են ունեցել, երեակարում եմ թէ ինչեր են տպում . . .»։

Եկատ 1863 թւականի մայիս ամիսը և Արծրունի եղբայրները գիմնազիական ընթացքը յաջողութիւնով աւարտելու քըննութիւն տվին։ բայց արտօնութիւնով մի արգելք առաջ եկաւ, որ շատ վշտացրեց պատանիներին։ Անդրէասը կարող էր ստանալ իր վկայականը միայն տարիուկէսից իւտոր, երբ կըլլանար նրա 18 տարեկան հասակը։ Գրիգորը սլատրաստում էր գնալու բարձրագոյն ուսումն ստանալու համար, և եղբայրները առաջին անգամն է որ պիտի բաժանէին։ Գրիգորը ծաղրում էր Անդրէասի անչափահասութիւնը, Անդրէասի խոշոր աչքերը լրցում էին արտասուքով։ Գեներալ Երեմիան նախ կամենում էր ուղարկել Գրիգորին Ֆրանախա, առա փոխեց միտքը, և 1863 թւի ամառը ճանապարհեց նրան Մոսկվա։

Անդրէասը մնաց մենակ։ Եղօր բացակալութիւնը նրա համար շատ զգալի էր։ Գրիգորը նոյն 1863 թւի սեպտեմբերից մտաւ Մոսկվայի համալսարանի բնագիտական ֆակուլտէտը։ Այստեղ, ինչպէս երեւում էր, նա էլ կրում էր Անդրէասի կարօտը և շուտ-շուտ նամակներ էր գրում վերջինիս։ Բարի Անդրէասը, ստանալով եղօր գրութիւնները, ուրախութախ ներս էր վազում մեր գրավաճառանոցը և կարգում մեզ։ Գրիգորը հսկարտութեամբ նկարագրում էր համալսարանական կեանքը և իր պարապունքները։ Մի անգամ ևս, լաւ լիշում եմ, շատ հեգնօրէն զրել էր Մոսկվայի հայ ուսանողների «ժողովի», մասին։ Մի ինչ որ ժողով ունին, մօտաւորա-

պէս գրել էր նա, ուր կարդում, վիճում և խօսում են միմիայն հայերէն, կասես էլ ուրիշ լեզու չկալ աշխարհի վրայ. ինձ եւս հրաւիրեցին գնալ և մասնակցել, բայց ես հրաժարւեցի . . .

1864 թւի մայիսին Գրիգորը գրում էր հօրը, որ նա մտադիք է անցնել Պետերբուրգի համալսարանը և հրաւիրում էր գալ այնտեղ և իր եղբօրը—Անդրէասին:

1864 թւի ամառը ես գնում էի Պետերբուրգի Գեներալ Արծրունին առաջարկեց ինձ տանել հետո Անդրէասին: Օգոստոս ամիսն էր, երբ մենք հասանք Ռուսաստանի մալրաքաղաքը: Գրիգորը մի քանի օր առաջ տեղափոխւել էր Մոսկվից և արժմ մտնում էր Պետերբուրգի համալսարանը նոյն բնագիտական Փակուլտետի երկրորդ կուրսը: Բայց Անդրէասին ցաջողեց իսկոյն մտնել համալսարան. Նրան առաջարկեցին սպասել դարձեալ վեց ամիս, մինչեւ որ կըլլանալ իր 18 տարեկան հասակը: Եղբայրները բնակւեցին միասին և բաւականաչափ փող էին ստանում հօրից՝ չափաւոր, բայց առանց պակասութեան, կեանք վարելու: Նրանց առաջին սիրած զւարճութիւնը եղաւ մալրաքաղաքի Խտալացոց օպերան, ուր և բաճախում էին ստէպ-ստէպ: Արդ միջոցում Պետերբուրգի համալսարանում գտնուում էին բաւականաչափ հայ ուսանողներ, որոնք վերջին տարիքում եկած էին մեծ մասամբ Թիֆլիսի գիմնազիաից: Արծրունի եղբայրները կարծ ժամանակում մօտեցան դրանց հետ և մտան „Բայց ուսանողական“ անւանեալ շրջանը: Գրիգորի մէջ պատահած արդ փափոխութիւնը հասկանալու համար հարկաւոր է փոքր ինչ ընդհատել մեր պատմութիւնը:

---

Ռուսահայոց ձգտումը դէսի բարձրագոյն ուսումը զանազան ժամանակ տարրեր ուղղութիւն է ստացել: Անցեալ դարու վերջերում, օրինակ, հայ ազնւականների որդիքը սիրով մտնում էին զինուրական ուսումնարանները: 1802 թւին տէրութիւնը բացեց Թիֆլիսում „Ազնւականաց“ անւանեալ ու-

սումնարանը, որտեղից դուրս եկաղ հայ ուսանողները զբեթէ բոլորն էլ քաղաքական պաշտօնների մէջ մտան Հետազայ 1803 թւին երկրիս կառավարչափառ իշտ. Ցիցիանովը Կովկասի Հայերի համար ճանապարհ բացեց գէպի համալսարան։ 1803 թւի ապրիլի 14-ին թագաւոր կալորը բարեհաճեցաւ իրաւոնք տալ իշտ. Ցիցիանովին 12 հոգի հայ և վրացի տղաւոք ուղարկել Մոսկվայի համալսարանը, այնտեղ թագաւորական հաշւով բժշկականութիւն ուսանելու։ Առաջին թիֆլիսեցի հայը, որ արքունական ծախսով նոյն 1803 թւին մտաւ համալսարան բժշկէ գառնալու՝ էր հերիու թայժույլի որդին (ԱԵՒ Արք. Կօմ. թ. II, ձօկ. 475 և 477)։ Ունեցաւ արդեօք Թաթուովի որդին իրան հետեւողներ և կամ ովքեր էին Ռուսաց համալսարանների հայ ուսանողները մինչև քսանական թւականները, մեզ յարտնի չէ։ Բայց այդ միջոցում բացւեցին մեր նշանաւոր հիմնարկութիւնները՝ Աղարաբեան վարժարանը Աշտարիսանում 1810 թւին, Լազարեանը Մոսկվայում 1816 թ. և ապա Ներսիսեանը Թիֆլիսում 1824 թւին։ Այս միջնակարգ երեք ազգային դպրոցները, ինչպէս յարտնի է, բազմաթիւ օգտաւուշտ մարդիկ տւին ազգիս և հասարակութեանը։ Շատերը այս հիմնարկութիւնների մէջ սովորեցին հայերէն լեզուն և ազգային պատմութիւնը և շատերի մէջ եռանդ ծագեց շարունակել ուսաւմը աւելի բարձրագոյն հաստատութիւնների մէջ։ Ալպէս տհա՛ քսանական թւականներում Լազարեան ճեմարանի սաններից մտան Մոսկվայի համալսարանը և յաջողութեամբ վերջացրին ուսաւմը՝ Յակոբ և Դաւիթ Արգանեանները, Մակար Եարալեանը, Սիմէօն Սուլթան-Շահը, Սարգիս Տիգրաննեանը, Յովսէփ Աղէքսանդրեանը, լեռոյ Մկրտիչ Էմին և ալլք։ Սրանք ամենքն էլ համալսարանում աւարտելուց լեռոյ հանդէս են եկել մեր զբականութեան ասպարէզում քանի մի աշխատութիւն տպագրելով։ Տեսնելով հայ երիտասարդների Մոսկվայի համալսարանը մանելու մեծ եռանդը, մեծատոհմ Յովհաննէս Լազարեանը 1829 թւին խնդրեց լուսաւորու-

թետն նախարար իշխան Ալիքնին, որ Ա.ազգարեանց հաշւով լիշեալ համալսարանում Հայոց լեզու և գրականութեան կաթեդրը բացւի. բայց այդ առաջարկութիւնը չաջողեցաւ, որովհետեւ, նախարարի ասելով, նոյն միջոցում տէրութիւնը մտադիր էր Արևելեան լեզուների դասախոսութիւնը կենդրոնացնել Պետերբուրգում (Собр. актовъ относящихся къ обозр. Арм. народа. М. 1838. т. III. стр. 124—130):

Սոյն արս միջոցներում հայ երիտասարդութեան զարգացման համար մի այլ բուն էր հիւսւում հեռաւոր Գորպատում: Այստեղ համալսարանի պրօֆեսո Պարրօտը, որ առաջինը բարձրացաւ մեր նւիրական Մատիսի գագաթը և որ պտղաբելով Ա.րարատեան աշխարհը՝ տեղնուտեղն ուսումնասիրեց Հայոց ջանասիրութիւնը, համեստ կեանքը և նահատկետական բարք ու վարքը, կամեցաւ, երևի, լաւերժացնել իր լիշատակը մեր մէջ՝ հրաւիրելով, որպէս լույսի է, Քանաքեռցի Խաչատուր Արովեանցին գալ պատրաստուիլ, մտնել Գորպատի համալսարանը: Ա.րովեանցը ընդունուում է Գորպատի թէ ընտանիքներում և թէ ուսանողների մէջ մի առանձին համակրութեամբ և մտերմութեամբ: Վատահանալով իրան ցոյց տւած սիրով վրայ, Ա.րովեանցը քաշում, տանում է Թիֆլիսից նոյն Գորպատ Ստեփաննոս Նազարեանցին: Այս երկուսին հետագալ տարիքում հետևեցին Ասկարեանցը, Գէորգ Միրիմանեանցը, Քերոբէ Պատկանեանցը և այլք:

Թէև Մովկայի համալսարանը երեսնական և քառասնական թւականներում շարունակում էր տալ մեզ հայ բժիշկներ, իրաւաբաններ և ուրիշ մասնագէտներ, որոնցից մի քանիսը ազգիս համար շատ օգտաւէտ գտնեցան, բայց գրանց կատարածը համեմատութեամբ աւելի փոքր է, քան ինչ որ կարողացան դորձել Գորպատի հայ ուսանողները 1830—1860 թւականների միջոցում: Ո՞վ չգիտէ, որ գաւառական բարբառով ժողովրդական կեանք նկարազրովը և գորոցական դասատւութեան մէջ աշխարհաբարի ներմուծողը էր Գորպատի անդրանիկ հայ

ուսանող Արովիեանցը: Ումը չէ լարտնի նրա ընկեր Նազարեանցի գործունէութիւնը: Երկուսի զբաժների մէջն էլ երեւան է գալիս կրակոտ սէր դէպի իրանց ազգն ու Հայրենիքը. Երկուսի սիրտն էլ մորմոքւում է, որ Հայք տակաւին զուրկ են զիտութիւնից և լուսաւորութիւնից. և ահա երկուսն էլ թափում են իրանց որժը մեզ կրթելու և լուսաւորելու: Այս ազնիւ ձգտումը ժառանգարար անցաւ Արովիեանին և Նազարեանին յաջորդող Դորպատի հայ ուսանողների հետագալ սերունդներին:

Մոսկւայի համալսարանում հայ ուսանողների թիւը գրեթէ միշտ տասնեւակներով կարելի էր հաշւել: Սրանք միշտ միջոց ունեին տեսնութիւ հայրենիքից եկող անձնաւորութիւնների հետ, ընդունւոծ էին արտեղ բնակւող հայ ընտանիքների մէջ, ունեին հայ քահանեայ, տօն օրերը ներկալ էին լինում Հայոց եկեղեցում,—միով բանիւ միջոց ունեին յագեցնել իրանց հայրենիքի և բնատանիքի կարօտը: Բոլորովին հակառակ պարմանների մէջ էին գտնուած Դորպատի հայ ուսանողները, որոնց թիւը երբէք 4--8 հոգուց չէր անցնում: Տարիներով չէին տեսնում դրանք հայ մարգու երես և իրանց կարօտը, բնականապէս, առնում էին միմեանց ստէպ տեսնելով և մտերմանալով: Հետեւելով գերմանացի ուսանողների մէջ եղած սովորութեանը, Դորպատի հայ ուսանողներն էլ կազմեցին իրանց խումբը, որ ունէր իր ժողովները: Այդ ժողովների նշանաւոր արգասիքն էր Հայոց մուկայի նոր ուղղութիւնը: Երկար միջոցով ընտանիքից անջատած և օտարութեան մէջ ապրող արդ երիտասարդները, միասին ժողովւած ժամանակ, միսիթարում էին իրանց երգով և այն—հայ երգով: Եւ ահա ուսանողներից ամեն մէկը բարոյական պարտք է համարում յօրինել կամ թարգմանել մի երգ, շատ անգամ փոլիտ չտաներով բովանդակութեան յարմարութեան մասին: Անուշագիր լինելով այդ հեռաւոր երկրում հայկական ճաշակին և բնաւորութեանը, նրանք առանց դժւարութեան ընդունում էին իրանց լած

ալս կամ այն եղանակը: Սակայն լեզվի կողմից ալդ երգերը մեծ մասամբ յաջող էին, որովհետև հեղինակներից շատերը, որպէս Հազարեան ճեմարանի սանիկներ, բաւականաչափ վարժ էին հայերէնի մէջ: Եւ ահա քառասնական թւականների վերջերում ու լիսունականների սկզբում՝ հայ-Դորագատեցիքը իրանց ակտումբի մէջ մեծ աշխոլժով երգում էին՝ Քերոբէ և Մափայէլ Պատկանեանների, Համբարձում Փափաղեանի, Գրիգոր Աղափիրեանի, Ասկարեանի, Խաչատուր Աւագեանի, Գէորգ Միքիմաննեանի, Գէորգ Դոգոխեանի և ալլոց քանի մի տասնեակ երգերը, որոնք նւիրւած էին գինուն, կեանքի գւարճութւիններին և ուսանողութեան, և կամ հայրենիքի կարօտին, մեր անցեալին, ներկային և ապագային:

Երգող երիտասարդներից մի քանիսը, աւարտելով ուսումը Դորագատում, 1854 և 1855 թւին եկան Պետերբուրգ կեանքի ասսալարէզը մտնելու համար: Առօրեալ հոգսերը արգելք չեղան նրանց ծառալել ամտեղ ևս ազգիս շահերին: Պարագլուխ ունենալով իրանց Մափայէլ Պատկանեանին, լիշեալ երիտասարդները իրանց հաշով հայերէն տառեր ձուլել տալ տւին և ալդ տառերը գետեղեցին Պետերբուրգի Յակոբ Եօնսօնի տպարանում, որտեղից 1855 թւականի վերջներում դուրս եկաւ մի փոքրիկ տետրակ „Դամառ-Քաթիվալի արձակ և չափարերական աշխատութիւնները“ անունով: Տետրակը բովանդակում էր իր մէջ մի քանի ստանաւորներ և բանասիրական փոքրիկ պատմութիւններ՝ աշխարհաբար պարզ գրւած: Սիրով ձեռքէ ձեռք էր անցնում տետրակը և իրբե հայ ուսանողների առաջին արգասիք, մեծ բաւականութիւն էր պատճառում ամենքին: Կարճ միջոցից յետով, այն է՛ 1856 թւի սկզբում, երեաց նոյն հրատարակութեան երկրորդ տետրակը, ուր առաջին անգամ տեսանք „Արաքսի արտասուքը“ կամ „Մայր Արաքսի ափերով“ բանաստեղծութիւնը: Մեծ տպաւորութիւն արաւ ալդ երզը այն ժամանակւալ Հայերի վրայ և դրան անզիք էին անում ու երգում ոչ միայն Մուսահայք, ալև Բոսփորի եզերքներում:

Նոյն 1856թւին Գամառ-Քաթիպան լուս աշխարհ հանեց Աղգալին երգարան Հալոց, գիրքը, որ բովանդակում էր իր մէջ 139 երգ և 33 երգերի եւրոպական նօտաներ: Այս տեսակ հրատարակութիւնն էլ Հայերիս համար մի նոր երեսով էր և երգարանը գարմանալի արագութեամբ տարածւեցաւ: Տարածւեցան և երգերը, և հայ հասարակութիւնը սիրով լսում էր նորանոր եղանակները և ոգեսրւում իմաստով: Թէև սրանից յետոյ Գամառ-Քաթիպան դարձեալ հրատարակեց քանի մի տետրակներ, բայց լիշեալ երգարանը կարող է համարւիլ իր այն ժամանակալ աշխատութիւնների պատճեն:

Յայտնի է որ թէ ոռուսահպատակ և թէ տաճկահպատակ Հայերի համար Ղ.ըիմի պատերազմի վերջանալովը մի նոր դարագլուխ է սկսում: Մեր գոլոցների բացւիլը և եղածների բարեկարգւիլը, մամուլի բարգաւաճումը, ընկերութիւնների հիմնարկութիւնը, թատրոնի հաստատութիւնը և այլ շատ օգտաւէտ բաներ—թէ այստեղ և թէ այստեղ—բոլորն էլ սկիզբն են տռնում, կամ ընդարձակ ծաւալ են ստանում լիսունական թւականների վերջերում: Բայց լիշեալ ժամանակամիջոցը նամանաւանդ բազգաւոր եղաւ Ռուսահայոց համար, երբ Աղեքսանդր II Աղատիչ կալսը իր տէրութեանը լառաջադիմական զարկ տւաւ: Համեմատութեամբ մեր գրացիներին, Հայք կուրելոյն չափ աշխատեցան հետեւիլ տէրութեան բռնած ընթացքին և մինչդեռ ոռուսական մամուլը կանգնեց իր նոր ուղղութեան վրայ և սկսեց ծաղկիլ, մեր մէջ ևս հրատարակական խօսքի պահանջ ծագեց: Այս պահանջը բնածին էր և ոչ արհեստական, թէև, զուցէ, շատ սահմանափակ շրջանի համար և ոչ ընդհանրութեան: 1846 և 1847 թւերին հրատարակւեց Թիֆլիսում «Կովկաս» անդրանիկ հայ շաբաթաթերթը և իրանից անկախ պատճառով գագարեց: 1850 թւերին Թիֆլիսում հրատարակւեց „Արարատ“ շաբաթաթերթը և մի տարւալ մէջ նմանավես գագարեց: Անցնում է ժամանակ, գալիս է 1857 թւականը, պատերազմներից յետոյ առաջին խաղաղ տարին, և

ահա միւնոյն նւագում միտք է լրանում երեք՝ տեսակ-տեսակ զարգացման, կրթութեան և գիտութեան տէր անձերի մէջ պարզերական հրատարակութիւններ սկսելու։ Թիֆլիսում պատրաստում է հրատարակել Մեղու Հայաստանի, շարաթաթերթը—Տէր-Ստեփան քահանայ Մանդինեանը, Մոսկվայում ։ Հիւսիսափառ, ամսագիրը՝ պլոֆեսօր Ստեփաննոս Նազարեանցը և նայն տեղ՝ ճռաքաղ, նոյնալէս ամսագիրը Մսեր մագիստրոս Մսերեանցը։

Այդպիսի ընդհանուր շարժողութեան միջոցին ինչ է շինում Հայ ուսանողութիւնը։ Դորպատեցիների ոգեւորութեան մասին արգեն բաւականաչափ ասւեցաւ։ Կըմնայ Մոսկվայ համալսարանը։ Այստեղ թէև 1857 թիւն հայ ուսանողները բաւականին էին թւով, բայց նրանք իրանց հին սերունդների պէս չէին կապւած մինեանց հետ որևէ բարոյական կապով։ Ամենքը քաշւած մի կողմը և պարապելով ու մտածելով առանձնակի, օտարութեան մէջ գտնող արդ երիտասարդները բաւականանում էին տօն օրերին և այն շատ ուշուշ տեսնել միմեանց հետ Հայոց եկեղեցու գաւթում։ Դրանցից մի քանիսը, որսնք բաւականաչափ հայերէն գիտէին, համակրում էին մեր բարոյական վերակենդանութեան ոկզբնաւորութեանը, միւսներն անտարըեր էին գէպի հայութիւնը, բայց կալին և այնպիսիները, որ մայրենի լիզէի և կրօնի մէջ բոլորովին տգէտ լինելով, ծաղրում և արհամարում էին ամենալու ինչ որ Հայերի անուն էր կրօւմ։ Իրերի արդ դրութեան մէջ, Նազարեանցի և Մսերեանցի գրական ձեռնարկութիւնների համբաւէ հետ միասին, Մոսկվայիների ականջին հասաւ։ Արաքսի արտասութեանի ձորանմլիկ ձայնը։ Դորպատեցիների ընկերական և համերաշխ գործունէութեան համբաւը կասես թէ շարժեց Մոսկվայիցիների բարի նախանձը և ահա 1858 թիւն Ռուսաստանի հին մայրաքաղաքի Հայ ուսանողները՝ Գամառ-Քաթիալայի, Մայր—Արաքսի, երգով բացին իրանց ուսանողական ժողովը։ Սա մի պատւական և պատկառելի ընկերական միութիւն էր, որ

Նոյն միջոցներում մեծ ու փրկարար ազդեցութիւն ունեցաւ հայրենիքից անջատւած երիտասարդների վրայի Ով որ վերովիշեալ ժամանակներում պատկանում է և զեկը Մոսկվայի Հայ ուսանողների ժողովին, նա չէ կարող կարգալ այս քանի մի տողը չափշտակւելով ամենաքաղցր և ամենազրաւիչ անցեալի լիշոգութիւններով։ Ամեն մէկը նրանցից, գէթ իր սրտի մէջ, պիտի առէ՝ «այս, թուով փոքր էինք և ուժով թոյլ, բայց որքան կարողացանք՝ գործեցինք»։ Նատերը ժողովին են պարտական, որ նիւթապէս և բարոյապէս օգնութիւն են ստացել իրանց ուսումը վերջացնելու և կամ օտարութեան մէջ քաղցածութեան զոհ չգնալու։ Նատերը պատկառանք կրելով ժողովից և ընկերական բարոյական դատաստանից վախենալով, զսպել են իրանց երիտասարդական կրքերը և առհասարակ հեռու են մնացել այն խլրումներից, որոնց ենթարկւել են նոյն միջոցին Մոսկվայաբնակ միւս ազգութիւնների պատկանող ուսանողները։ Վերջապէս շատերը նոյն ժողովին են պարտական, որ այսօր օգտաւէտ են կացուցել իրանց անձը թէ ազգին և թէ ընդհանրապէս հասարակութեանը։ Աւելացնենք այդ բոլորին և այն նշանաւոր իրողութիւնը, որ Մոսկվայի Հայ ուսանողների «ժողովի» մէջ լուցաւ առաջին անգամ հայերէն թատերական ներկայացումն տալու միտքը։ Ժողովը իրագործեց այդ միտքը 1859 թւի յունւարի 27-ին, որով և սկզբնապատճառ եղաւ Հարոց «թատրոնի»<sup>14)</sup>։

14) 1859 թւի յունւարի 27-ին տւած հայերէն անգրանելի ներկայացումը տեղի ունեցաւ Մոսկվայաբնակ, այժմ՝ հանգուցեալ, Միքայէլ Ստուփաննեանի տանը և սրա հաշով պատրաստած մի փոքրիկ բայց լարմաբաւոր թէմի վրայի Այս գործի մէջ ուսանողներին օժանդակեցին դրամով նաև Յովհաննէս Յովհաննեան և Բաղդիլ—Խալտթեան հայազգի հարուստները, Խաղացին Կ. Պոլսում տպւած «Արիտակէս կամ Ներսէս Մեծն», Պապ թագաւորի օրերին վերաբերեալ պատմական խալք և Թիֆլիսեցի ուսանող Նիկողայոս Ալադաշեանի

Մի կողմը թաղնելով լիշեալ՝ «ժողովի», հետագալ տարիների պատմութիւնը, կը իշեցնենք որ դրա ամենածաղլեալ դրութիւնն էր 1858—1863 թւականներին: Սակայն և այդ ժամանակամիջոցին Մոսկւայի Հայուսանողների մէջ կալին ոմանք, որ ոչ միայն չէին մասնակցում այդ ընկերութեանը, այլև ծաղրում էին դրան: Նրանք պնդում էին, թէ «ժողովը» ոչ միայն օգտառէտ չէ, այլև կաշկանդող ու սահմանափակող հայ երիտասարդների զարգացումը և աշխարհահայեցողութիւնը, և, այսպէս խօսելով, իրանք անտարբեր էին մնում դէսպի մալլենի լեզուի ուսումը և տռհասարակ հայութիւնը: Արդեօք մալլենի լեզուն չգիտենալն էր պատճառը, թէ սկզբնական դաստիարակութեան սխալ ուղղութիւնը, թէ, վերջապէս, որևէ ընկերական օտար շրջանի ազգեցութիւնը,—միայն թէ արդ չհամակրողներն էլ ունէին իրանց շրջանը և այդ շրջանին էր պատկանում նաև Գրիգոր Արծրունին մինչև 1864 թւին Պետերբուրգ տեղափոխվելը:

Վաթսունական թւականների սկզբից՝ Պետերբուրգի համալսարանն էլ սկսեց զրաւել դէսպի իրան բարձրագոյն ուսումն ձգտող Հայ երիտասարդներին: Իրանք մեծ մասամբ Թիֆլիսի գիմնազիայի աշակերտներ էին, մանկութիւնից վարժ մալլենի լեզով խօսելում: Մի քանիսը գրանցից գեռ գիմնազիական հինգերորդ և վեցերորդ դասատանից սկսած՝ իրանց թարգմանական զրութիւնները տպացրում էին .Մեղու Հայաստանի, լրագրում, լաջողութիւնով մասնակցում էին Թիֆլիսում եղած առաջին թատրոնական Հայ ներկայացումների մէջ, և ունէին

---

ռուսեցէնից շտապ թարգմանած և կարելոյն շափ Թիֆլիսեցիների կեանքին յարմաքեցրած «Վայ ի՞ս կորած մխուն սակի» կտոսակերգութիւնը: Տպաւորութիւնը շատ մեծ էր, համբաւը և հուշակը գաւառներում աւելի մեծ: Մանրամասնութիւնները և խուզի քննութիւնը՝ տես «Հիւսխափառլ» 1859 թ. № 1, և «Մեղու Հայաստանի» 1859 թ. № 10:

իրանց որոշ ընկերական շրջանը, որի սրտին շատ մօտ էր ամեն մի ազգալին յառաջադիմական քալլ: Քանի մի բացառութիւնով, դրանք կամ միջնակարգ և չափաւոր կարողութեան տէր գերգաստանների որդիներ էին և կամ բոլորովին չքաւոր տներից: Մեծ մասամբ ծնողներից ստանում էին ամսական 20—30 ռուբլի. բայց կային և ալնպիխներ, որոնք վատահացել էին գալ համարական առանց որևէ կոպէկի և լոյս դնելով միայն ընկերների օգնութեան վրայ: Բարեբաղդաբար Պետերբուրգի Հայ ուսանողները շուտով միացան և կազմակերպեցին իրանց շրջանը: Այդ շրջանը 1864—1868 թւականներին և յետոյ իր չափաւոր դրամական միջոցներից շարունակ օգնում էր քանի մի բոլորովին չքաւոր ուսանողների՝ աւարտել իրանց ուսումը և վերադառնալ հայրենիք: Առհասարակ միմեանց օգնելը թէ դրամով և թէ խորհրդով լիշեալ շրջանի՝ կասես թէ նշանաբանն էր գարձել: Մի կրթիչ և բարոյական ազգեցութիւն ունէր նա (Զրջանը) հետզհետէ Պետերբուրգ եկող հայ երիտասարդների վրայ: Նա կարողացաւ շատերին յետ պահել այն նորագոյն ուղղութիւններից և խլրտումներից, որոնց ենթակայ եղան նոյն ժամանակւայ ուրիշ ազգութիւնների ուսանողները: Յետ չմնալով բոլորովին զիտութիւնից և ուրիշներից ոչ պակաս ծանօթ լինելով Բօկլի, Դարւինի, Բիւխների, Մոլիշոտի, և ալլոց, ինչպէս նաև Ռուսաց Պիտարէւի և հետևողների դրւածների հետ, Հայոց շրջանը կարողացաւ իրան զսպել որևէ լափաշտակութիւնից և հեռու մնաց այն ժամանակւայ տիրապետող շարժումներից: Միւնոյն ժամանակ նա համեստաբար շարունակում էր իր մայրենի լեզւի ուսումը և հետաքրքրութիւնով հսկում էր մեր ընդհանուր զարգացման ետևից:

Մայրաքաղաքի Հայ ուսանողների վաթուունական թւականներում բանած արդակիսի ընթացքը ամենայն իրաւամբ պէտք է վերաբերել զիտաւորապէս մի հայ ընտանիքի բարոյական ազգեցութեանը, որի տան գոները միշտ բաց էին ամենայն հայի համար: Դա երիտասարդ մագիստրոս Կարապետ Եղեանցի

գերդաստանն էր: Ալդտեղ նրա մայրը և քոլը իրանց սիրալիք և զթասիրաբար ընդունելութիւնով շատերին մռացնել են տւել ընտանիքի և բարեկամների կարօտը: Ալդտեղ շատերն են օգնութիւն ստացել, սփոփել և մխիթարւել: Ալդտեղ շատերն են բարի խորհուրդ լսել և պաշտպանութիւն գտել: Վերջապէս ալդտեղ շատերն են սովորել ճանաչել իրանց պարտականութիւնները դէպի ընկերը, դէպի ընտանիքը, հայրենիքը և հասարակութիւնը: Եւ ահա պ. Եզեանցի տունը դարձել էր մի զբաւիչ կենդրոն մայրաքաղաքի հայ ուսանողների համար:

Երբ 1864 թւի օգոստոս ամսին Գրիգոր Արծրունին Մոսկ-ւայից, իսկ նրա եղբայր Անդրէասը և ես Թիֆլիսից եկանք, հասանք Պետերբուրգ ու գտանք այնտեղ մեր առաջւալ ընկեր և ծանօթ հայ ուսանողներին, մենք շատ անզամ նրանց հետ միասին ժողովւում էինք պ. Եզեանցի հիւրընկալ տանը: Ալդտեղ երիտասարդները հերթով կարդում էին իրանց հայերէն աշխատասիրութիւնները, և այսպիսի պարապմունքը ամենքը ըարուական պարտաւորութիւն էին համարում իրանց համար: Ահա այդ շրջանի մէջ Գրիգորը փոքրառփոքը ընտելացաւ հայերէնին և յետոյ ինքը հանդէս գուրս եկաւ:

Խսկապէս մեծ չէր ուսանողների արդ շրջանը: Բայց 1865 թւի սկզբին ալդտեղ կար ուսանող Մարտիրոս Սիմօնեանցը, որ ուսած էր Ներսիսեան դպրանոցում և արդէն յարտնի էր որպէս Եղիշէի պատմութեան զբարքութիւն աշխարհաբար թարգմանող և տպագրող: Ալդտեղ էր Ռուբէն Զալալեանցը, որ համալսարանումն էլ ընտրած էր իր համար Արևելեան լեզուների և զիմաւորապէս հայկարանութեան մասնագիտութիւնը: Ալդտեղ էր Գէորգ Եւանգուլեանցը, որ իր հմտութիւնը հայերէնի մէջ ցոյց տւեց 1864 և 1866 թւականներին „Մեղւէ“ մէջ ապագրած յօդւածներով: Ալդտեղ էին նմանապէս Զաքարիա Գրիգորեանցը և Գէորգ Բարեանցը, որոնք դեռ Թիֆլիսում եղած ժամանակն էլ „Մեղւէ“ մէջ գրւածներ ունէին:

Սակայն այդ շրջանից դուրս ևս ուսանողները այնպիսի ծանօթ հայեր ունեին մայրաքաղաքիս մէջ, որոնց գործունեութիւնը և կենդանի օրինակը նոյնպէս պիտի ազգէր նրանց վըրար Երբ կիւրակէ օրերը ըստ սովորութեան, Պետերբուրգի հալ հասարակութիւնը ժողովում էր Հայոց եկեղեցում. ալդտեղ աչքի էին ընկնում ոչ միայն իշխան Արամէլիքեանը, Դէլեանեանը և այլ պաշտօնատար անձինք, այլև հետևեալ պատկառելի գործողները: Ահա եկեղեցու անկիւնում աղօթում է ծերունի Գարբիէլ Պատկանեանը, որ իշխալ թւականին շարունակում էր զրել և տպագրել մի շարք պատմական և բանաստեղծական գրւածներ: Ծերունու մօտ կանգնած է նրա որդին՝ Ռափայէլը—մեր Գամառ-Քաթիալան, որ 1864 թւականից սկսած հրատարակում էր „Հիւսիս“ անունով շաբաթաթերթը և շաբանակ լրաց էր ընծայում իր և իր տիկնոջ գըրաւոր աշխատութիւնները: Ռափայէլի տիկնոջ մօտ կանգնած է տեղիս քահանայի աղջիկը՝ օրինարդ Եւա Տէր-Գրիգորեանցը, որ քանի մի ամիս առաջ տպագրել է Գրիմմ եղբայրների Գերմանական ազգային առակների հայերէն թարգմանութիւնը: Ապա մի կողմը կանգնած են Բերոյեան և Բուդապեշտ արևելագէտները, Սիմէօն Սուլթան-Նահը, մագիստրոս Կարապէտ Եղեանցը, Մկրտիչ Սանասարեանը, Յովսէփի Իզմիրեանը, Միքայէլ Միանսարեանը, և այլք, որոնք բանով և գործով մասնակից են մեր ազգային կրթութեանը:

Բայց այդ միջոցին հալ ուսանողները մի առանձին պարծանքով ցայց են տալիս նաև իրանց համալսարանի երիտասարդ պրօֆեսօր Քերոբէ Պատկանեանի վրայ, որ անցեալ 1864 թւին այնքան հանդիսաւոր կերպով ձեւք բերեց հայկարանութեան գօքտօրի աստիճան: Մենք այսակ գեռ շմեցինք այն բոլոր անձնաւորութիւնները, որոնք 1865 թւին Պետերբուրգի հալ հասարակութեան օգտաւէտ անդամներն էին:

Սակայն, որքան որ պատկառելի էր մայրաքաղաքի հալ հասարակութիւնը, այնքան անմիտիթարական պիտի երևաը

լիշեալ ուսանողների աչքում նոյն 1865 թւի սկիզբին հայ մամուլի գրութիւնը և իրերի ընթացքը Թուսահայերի մէջ: Առնենք, օրինակ, Մոսկվան, ուր 1858—1861 թւերին ալնքան եռանդ երեաց Հայոց մէջ: Բայց ահա 1864 թւի վերջն է՛ Մսեր մագիստրոսի՝ ճռաքաղը, վազուց է որ չկալ, Ստեփաննոս Նազարեանցի՝ Հիւսիսափայլը, վերջնական կերպով դադարում է ստորագրուող չունենալու համար. սրան նոյն պատճառով հետեւում է և Զարմալը Մսերեանցի, Ռուսիոյ համբաւաբերը: Գրեթէ նոյն վիճակին պիտի ենթարկւին վաղը կամ միւս օրը՝ որպէս Պետերբուրգում հրատարակւող՝ Հիւսիսը, նոյնպէս և Թէոդոսիալի՝ Ծիածանը, (Մասեաց Աղաւնին): «Մօտենանք մեր երկրին և գանք Թիֆլիս: Այսաեղ ունէինք մի պատւական ամսագիր՝ Կոռունկ Հայոց աշխարհի», որ չնախերով իր բովանդակութեան արժանաւորութեանը, հազիւ չորս տարի դիմացաւ և թէ ստորագրողների սակաւութեան ու թէ ընտանեկան դժբաղդութեան պատճառով նրա խմբագիր Մարկոս Աղաբեգեանը 1864 թւի սկզբին թողեց ամսագիրը և գնաց Կ. Պօլիս: Սրա հրատարակութիւնը լանձն առաւ վերականգնացնել 1865 թւից Մոսկվալի համալսարանի կանդիտատ Ստեփաննոս Ստեփանէն, որի մասին—իւսոյ: Կոռունկից, աւելի ծաւալ պիտի ունենար 1858 թւականից Թիֆլիսում հրատարակւող՝ Մելու Հայաստանի. շաբաթաթերթը, որպէս լրագիր: Սա առաջի տարին ունեցաւ մօտ 700 ստորագրուող, իւսագալ 1859 թւին աւելի պակաս, ապա 1862 թւին նրա խմբագիր Ստեփաննոս քահանալ Մանդինեանցը խոշոր տառերով տաեց իր թերթի մէջ հետեւեալ ժամանեցումը: որ ըերում ենք բառ առ բառ՝ Ահա տարին վերջանում է և լրագրի փողն գեռ շատերից չենք աստացած, և այս քանի շաբաթ է, որ տպագրութիւնը իւս է ընկնում, և պատճառը ծախսի փող չունենալն է որ գոնէ տպարանի և թէ թղթի փողը տալ Դեռ տարեկան փողը չտուզներին թէ Թիֆլիս և թէ գուրսը թուղթ գրելով դադրե-

ցալ, Թիֆլիզումը մարդ ուղարկելով բեղարկեցալ, և չստացալ չվճարագներից: Ահա այս է խմբագիրներին նոցաօգնական լինելը, ահա երևում է մեր ազգի եռանդի սպառած լինելն, որ ոչինչ ազգային գործ առաջ չէ գընում: Խտալեանսկի օպերա սկետք է, որ լօժեր առնեն, և ոչ թէ լրագիր կամ օրագիր ազգային լառաջադիմութեան: 1858 թւից սկսել եմ մինչի ալսօր, որ է հինգ տարի, և հինգ տարւան էլ նիսիէք կան, մանաւանդ 1861 և էս 1862 թուերումը: Տեսալ ազգի սէրն ու եռանդը և ձեռք քաշեցի, միայն կրխնդրեմ, կազաշեմ, կրտաղատեմ, որ ինչպէս Թիֆլիզումը, նոյնպէս և դրսի քաղաքներումը մնացած նիսիէքը ուղարկեն, որ ես էլ զաւակների տէր եմ, պարտքի տակ զմնամ: Թիֆլիզումը՝ լրագիր բաժանողին տան, իսկ դրսի քաղաքներից ուղարկեն իմ վերալ: Ս. Ք. Մանդինեանց (Մեղու Հասաստանի, 1862 թ. №49):

Այս հատւածից շատ լաւ հասկացւում է որպէս խըմբագրի հմտութիւնը և զրելու ձեւը, նոյնպէս և լրագրի բարոյական ու նիւթական գրութիւնը: Իմեծ բաւականութիւն կարգացող հասարակութեան, Մանգինեանց քահանան 1862 թւի վերջին ծախեց իր թերթի հրատարակութեան իրաւունքը Համբարձում Ենթիաճեանցի վրար Վերջինս հրատարակիչ դառնալով՝ Մեղուի, խմբագրի պաշտօնը լանձնեց Պետրոս Սիմեոնեանցին: Սա նոր-նախիջևանցի մի երիտասարդ էր, որ եղել էր Դորագատի համարարանում, բայց դեռ ուսումը չաւարտած, վերադարձել էր Թիֆլիս և ասլտեղ մասնաւոր տներում գասատութիւնով էր պարապում: Եթին 1861 թւին Թիֆլիսի մէջ սկսւեցին կռիւները Զալալեան Սարգիս արքեստիսկոպոսի և Թալիբեան անւանեալ հոգաբարձուների դէմ, Սիմեոնեանցը ոչ միայն շարժողութեան պարագլուխներից մէկը դարձաւ, այլ և զրաւեց կռւող երիտասարդութեան սիրոր և մի տռանձին ընդունակութիւն ցոլց տւեց թէ Զալալեանին թաւալելում և

թէ սրա լաջորդի ընտրութեան մէջ: Եւ թէև Ներախեան դրանոցի զեկավարութիւնը նոր հոգաբարձուների ձեռքն անցնելովը ամեն ինչ, ըստ երեւոյթին, հանդարտւեց, բայց Սիմէօնեանցը գեռ չէր վերջացրել իր կուսակցական հաշիները հակառակորդների հետ և ահա երկրիս միայնակ հայ լրագրի տէրը դառնալով նա մի սարսափելի գէնք էր ձեռք բերում անպայման լաղթութիւն տանելու համար: Ակսելով Մեղուի, խմբագրութիւնը 1863 թւի սկզբից, Սիմէօնեանցը իրան մշտական աշխատակից ընտրեց Ստեփաննոս Պալասանեանին և Գէորգ Տէր-Աղէքսանդրեանին: Առաջինը մի Մոլդավիացի հայ երիտասանդ էր, որ ուսել էր Ալվազովսկու Փարիզի կոլէժում, ապա դասատու էր եղել նոյն վարդապետի Թէոդոսիայում բացած ուսումնարանում, լետոյ եկած էր Թիֆլիս և մտած Ներսիսեան գոլրանոցը դասատուի պաշտօնով: Նա բաւականին ծանօթ էր Հայոց լեզուի և գրականութեան հետ, գիտէր Փրանսերէն և արդէն լայտնի էր հայ պարբերական հրատարակութիւնների մէջ քանի մի աչքի ընկնող յօդւածներով: Գէօրգ Տէր-Աղէքսանդրեանցը աւարտած էր իր ուսումը Թիֆլիսի գիմնազիայում և որպէս նախկին աշակերտ Ներսիսեան դալրանոցի գիտէր թէ գրաբարը և թէ աշխարհաբարը, բայց մասնաւորապէս մի առանձին սէր ունէր դէպի Թիֆլիսեցիների բարբառը, որի ուսումնասիրութեանը նւիրած ունէր իր բոլոր կեանքը:

Սիմէօնեանցի խմբագրութիւնով 1863 թւին սկսած Մեղուն, մի առանձին փոփոխութիւնների չենթարկեցաւ: Խմբագրական յօդւածները մութը և անորոշ լարձակումներ էին անյալու և անանուն անձնաւորութիւնների դէմ ու գուցէ հասկանալի միմիայն խմբագրութեանը շատ մօտիկ մարդկանց համար: Պալասանեանի գրւածները շատ սակաւ էին երեւում և միայն Տէր-Աղէքսանդրեանն էր առանձին եռանդ ցոյց տալիս, լրագրի գրեթէ ամեն համարում գետեղելով Թիֆլիսի բարբառով գրած ֆէլիէտօններ, որոնց նիւթերն էլ վերցրած էր միմիայն Թիֆլիսի Հայոց կեանքից: Քաղաքիցս դուրս, գա-

ւառները խորին լրութիւն էին սլահում և 1863 թւին .Մեղուի, մէջ տպւեցաւ ընդամենը մի աննշան թղթակցութիւն, իսկ 1864 թւին—չորս նամակի:

Բայց աւելի լաւ հասկանալու համար թէ ինչպէս էր ընթանում Սիմէօնեանցի „Մեղուն“ և ինչ համակրութիւն էր վայելում դա հասարակութեան կողմից, բերում ենք նոյն իսկ .Մեղուի, մէջ հրատարակւած տեղեկութիւնները: 1864 թւին լիշեալ լրագիրը ունէր 237 բաժանորդ, բայց սրանցից վճարած էին ստորագրութեան փողը միայն 183 հոգի: Տարեկան մուտքն էր 1098 ռ., ծախսը 1245 ռ., որից խմբագրատան ծախս 60 ռ., յօդւածների համար 50 ռ., իսկ մնացածը տպարանին, թղթին, ցրւիչին և փոստային: (Տես. „Մեղու. 1864 թ. № 50): Այս 127 ուղարկի պակասով Սիմէօնեանցը մտաւ 1865 թւի շրջանը և շարունակում էր ուղարկել իր լրագիրը այնպիսի անձանց, որոնք ոչ ստորագրւած էին, ոչ վճարած: Վերջիններս քանի մի ամիս ակամայ ստանալուց յետոյ, վերջապէս սաստում էին ցրւիչին ավես լրերել իրանց լիշեալ լրագիրը: Այդ երեսովիցը Սիմէօնեանցը վերաբերում էր իր գրչի սրութեանը, յարձակողական ուղղութեանը և թշնամինների չարութեանը: „Մեր յարգոյ բաժանորդագիրներից ոմանք, գրում է Սիմէօնեանցը, երկու կամ երեք ամիս „Մեղու Հայաստանի“ լրագրի համարները ստանալից յետ, յայտնում են, որ էլ չեն կամենում ստանալ, գուցէ դժգոհ լինելով որ և իցէ յօդուածից . . . (Մեղու, 1865 թ. № 11): Ինչևիցէ 1865 թւի վերջերում լրագրի մէջ տպած „Մեղու հաշիւ, յօդւածից երեսում է, որ այս անդամ էլ 270 բաժանորդներից վճարած են միայն 150-ը: Մուտքը եղել է 1000 ռ., ծախսը 1250 ռ., և բացը 250 ռ.: (Մեղու 1865 թիւ № 49):

Խսկապէս Սիմէօնեանցը ինքը շատ լաւ էր հասկանում, որ իր լրագրի անլաջողութեան պատճառը ամեննեին թշնամինների յարած չարութիւնները չեն: Երբ մի Մոսկվայեցի պարոն, իր նամակի մէջ դէպի „Մեղու“ խմբագրութիւնը, գան-

գատւում էր, որ լրագրի մէջ ոչ մի տեղեկութիւն չկայ դաւառների ազգայինների մասին և թէ հարկ է հայաբնակ քաղաքներում թղթակիցներ ունենալ, որից լեռոյ ստորագրութեամբ թիւն էլ կը շատանալ, Սիմէօնեանցը շփոթւած հետեւեալ խորհրդածութիւններն է անում. „Մինչև ցարժմ, գրում է նա, գեռ. ևս ճշդութեամբ չենք կարողանում որոշել, թէ ինչ է պատճառը, որ մեր մէջ լրագիրները ու օրագիրները ամենաին ընթացք և բառաջադիմութիւն չունին. արդեօք ժողովրդեան անընթերցասիրութիւնն է պատճառը, թէ օրագիրների նորա ճաշակին անյարմար և անհետաքրքրական լինելը: Բայց երբ մի լրագիր կամ օրագիր կ'ունենալ իրան բատկացեալ կատարելութիւններից գոնէ մեծ մասը, այն ժամանակ հեշտ կ'լինի արև հարցը վճռելը: Կյուսանք որ առաջիկայ տարին օգնական կլինի մեզ արև հարցի վճռման մօտենալուն, աղնւամիտ և անձնանւէր ազգայնոց նպաստաւորութեամբը (Մեղա. 1864 թ. № 41):” Եւ այդ պարզ հարցը Սիմէօնեանցը դարձեալ վճռած չհամարեց, երբ 1865 թւի վերջին տեսաւ, որ այդ “ազնուամիտ և անձնանութեալ ազգայնոց” թիւը մէկ տարւայ մէջ 183-ից հասաւ 150-ի, և նրանց „նպաստաւորութիւնն“ էլ 1098 ռուբլու տեղ դարձաւ, որպէս ատացինք, 1000 ռուբլի:

Հիմա տեսնենք թէ Սիմէօնեանցի Մեղաւն, ինչ աշխարհահայեցաղութիւն անէր երկրի հայերի կենցաղավարութեան և գործունէութեան վրայ:

1865 թւի Մեղաւի, առաջին համարաւմ, նոր տարւայ շնորհաւորութիւն, անունով յօդւածի մէջ նա գրում է՝ „Մի հայեցուացք զցենք ամեն հայսքնակ տեղերի վրայ, տեսնենք ինչ է կատարուել անցեալ 1864 տարի և ինչ լուս կայ արև տարուալ համար . . . : Իջնածիւն ազօթում է, տպարանը լուս է, թէեւ նիւթը բանելու խիստ շատ. իսկ ուսումնարանը հին գրութեան մէջ է: Երեւանը երևելի պէտք է լինէր, ըստ որում ազգի կենդրունումն է, միայն քաղաք է ծածկել իրան,

որ ոչ ոք չտեսնէ նորա պակասութիւնը. մի ուսումնարան ունի, ինքն էլ չգիտէ բնչ անէ նորա հետ: Հիմ նախիջեռանք, կարծես, հնացել է, հիւանդ ծեր մարդու պէս գողինքումը պակած, հառաջում է ու օխ քաշում ազգային բարոյական կըրթութեան մասին Արույիս, ճոխ գիւղաքաղաքը, փող է գիգում և գանձ ժողովում. բնչ նախակով ինքն էլ չգիտէ. մեղրաճանճի պէս. մեղր շինում է, հալբաժ ուտող կը գտնիլի: Շուշեցիր մի մեծ լապտեր էին վառել, որ իրանց երկրի միգապատ ընութեանը առաջն առնեն, որ մարդիկ մթնում մանգալիս չփեր ընկնեն ու զլուխները չկոտր'ն, միայն թշնամիք փշեցին հանգցրին մոնը ու ալնուհետեւ խաւարի մէջ մէկ մէկու խփում են, վիրաւորում են, հալածում են, առանց ճանաչելու, թէ ով է իրանց բարեկամը և ով թշնամին: Բաւրուն ծովեզերեալ է, զբուստ ծովի ընութիւն ունի. երբեմն ալեկոծում է ու սաստիկ շարժում և երբեմն հանդարտվում է՝ ազգային լառաջադիմութեան նշով չէ ցոյց տալիս: Շամայիմի երկրաշարժից քանդած է, պէտք է բոլորովին նորից շինվի: Դանձակը անգանձ գանձարան է: Գորին, կարծես, կարած էր ու գտնվելու վրալ է: Մուսկվան մի Հիւսիսափառ ունի, որնոր փայտում է. միայն սորա վիճակն էլ ցաւալի է և անորոշ, բատ որում նորա լուսատու լապտերին ձէթ չեն տալիս և մէկ էլ Ռուսիոյ Համբաւարեր ունի, որ Ռուսիոյ համբաւներ է բերում, իսկ ազգային լուրեր շատ քիչ, որովհետեւ հեռու է ազգից: Պետարքուրդ հոյակապ է, առողջ և գեղեցիկ. «Հիւսիս» մի ունի, որնոր կենդանի սպատկերն է նորա. Նոր-նախիջեռանք դեռ ոչինչ չունի, նոր պէտք է սկսէ գործել ու ամեն բան նոր պէտք է կանգնէ: Թէկողույսա մի մեծ հոյակապ շինուած ունի, որնոր կոչվում է Խալբաքեան ուսումնարան և մի Ծիածան, որնոր երբեմն ամպերումը երևում է գոյնզգոյն և մարդոց տալիս է գուշակել, թէ այն տարի ինչ աւելի կլինի, հացը թէ գինին: Թիվյուզ մեծ, հարուստ, ճոխ և ամենից բազմահալ քաղաքն է: Սա Ռուսա-

տանի Հայոց բարոյական կրթութեան և լուսաւորութեան աղքիւրն է, մեծ աւազանն է, որտեղից պէտք է խողովակներով ջուր երթալ ամեն հայաբնակ քաղաքները, որոնք գրեթէ ամենքն էլ ծարաւ են: Այս աւազանի ջուրը շատ պղտոր է, որովհետեւ զանազան մեծ և փոքր կենդանիներ լուզում են անդադար նորա ջուրը և չեն թողնում պարզվելու: Մի ուսումնաբան ունի, որնոր ոչ շէն է և ոչ անշէն. մէկը ծեփում է նորա պատը, որ ցուրտ ցմտնէ ներս, միւսը քանդում է ծեփը, այնպէս որ նա ալսօր գեղեցիկ է, էգուց տգեղ, ալսօր բառաջազէմ է, էգուց լետագէմ, ալսօր բարեկարգ է, էգուց անկանոն, միշտ տատանման վիճակի մէջ է, թիֆլիզը ունէր մի „Կոռունկ“ էլ, որնոր երեսմն աշունքին և դարուքին թէ և շատ բարձրից, կռկռում էր և ստիպում մարդոց իրանց հայեցուածքը դէպի երկինք դարձներու ու Աստուած լիշելու, բայց 1864-ին նա էլ աներեւութացաւ. ասացին՝ մեռաւ, բայց սուտ է եղել, միայն հիւանդ է եղել ու կազդուրվելու վրա է. ահա երեք ամիս է թևերը թափ է տախս, որ թռչի, բայց չէ կարանում. երանի թէ շատ բարձր չթռչի, որ ձայնը լսելի լինի մարդոց: Թիֆլիզ մի „Մեղու“ էլ ունի, որնոր բըզզում է ու խալթում, որովհետեւ չար է. շատերը սրերով և բիրերով, հրացանով ու թնդանօթով լարձակում են վրան, որ սատկեցնեն. միայն նորա բաղդն է, որ պգտիկ է, լաւ նշան չեն կարողանում դնել թշնամիք, ու նա գեռ կենդանի է, առատվելով թշնամիների հարուածներից. ոմանք էլ չեն լսում նորա բզզոցի ձայնը, որովհետեւ խուլ են, սրանց ագռաւի զրզրալ է հարկաւոր:

Այսպէս ահա զցեցինք մեր հայեցուածքը ազգի բարոյական վիճակի վրայ. ալժմ շնորհաւորենք տեսածներս. երանի հարկ լինէր ար ծէսը կատարելու: Շնորհաւոր նոր տարի, շնորհաւոր լետագիմութիւն, շնորհաւոր երկպառակութիւն, շնորհաւոր խաւար, և շնորհաւոր խեղճութիւն ամէն կողմանէ» (Մեղու 1865 № 1):

Ահա արագէս էր Պետրոս Սիմօնէանցի դրելու ձեր, արագէս էր նրա լեզուն, արագէս էր նրա շրջահայեցողութիւնը:

Գործիս ծրագրից շատ շեղւած կը լինէինք, եթէ խօսէինք Պետերուրդի հայ ուսանողների հետագալ փալլուն շրջանի մասին, երբ վերև լիշտած խմբին աւելացան դարձեալ մի քանի հալաղէտ, ջանասէր և վառվուուն երիտասարդներ: Նրանք ընկերական ջանքով թարգմանեցին և տպագրեցին մի քանի դասագրքեր և օգտագութ աշխատութիւններ, իսկ մեր պարբերական թերթերի մէջ համդէս դուրս գալու միտքը մալրաքաղաքի հայ ուսանողների մէջ ծագեց գեռ 1864—1865 թւերին: Արդնաբառակի համար կամայ թէ ակտմայ ընտրւեցաւ այն ժամանակ Թիֆլիսում հրատարակող Պ. Սիմէօննեանցի „Մեզուն“: Առաջին քայլ անողը և հանդէս դուրս եկալը եղաւ Գէորգ Եւանգուլեանցը գեռ 1864 թւին: Նրան հետեւց Գրիգոր Արծրունին, որի անդրանիկ լոդւածը, որպէս կը տեսնենք, տպւեցաւ 1865 թւի «Մեզուն»: 13 և 14 համարներում:

1865—1866 թւի ձմեռը Գ. Արծրունին հիւանդացաւ և ալիս չէր կարողանում զիմանալ Պետերուրդի կլիմային: Բժիշկների խորհուրդով, նա ստիպւած եղաւ թողնել Ռուսիայի մալրաքաղաքում իր եղբօրք՝ Անդրէասին և ինքը շտապեց գնալ Ֆրանսիայի Նիցցա քաղաքը տառողջութիւնը վերակազդուրելու համար: Նիցցայից մի առժամանակ գնաց նա Խնաէրլակէն զիւղը, երեխ կումբութ բժշկւելու համար: Մօտ մի տարի մնալով Ֆրանսիայի լիշտալ վալրերում և տպատ լինելով համարարանական պարագմանքից, Արծրունին նոյն 1866 թւին շարունակում էր գրել լոդւածներ մեր պարբերական թերթերի համար:

1867 թւի սկզբից Գրիգոր Արծրունին դանաւած է Շւէլցարիա, ուր որպէս ազատ անկնդիր մի քանի դասախոսաւթիւններ է բառմ նախ Ցիւրիխի, ապա Ժընէվի համարարաններում: Եթէ ճիշդ են Արծրունու «Հալկական աշխարհում»

տպագրւած թոդւածների տակ նշանակած թւերը և քաղաք-ները, ապա 1868 թւել փետրվարին նա դարձեալ դանւում է Նիցցա և յետոյ Վենետիկ։ Այսուհետեւ անցնում է, մտնում Հերցիլերգի համալսարանը, ուր Փիլիսոփայական ֆակուլտէ-տում մասնագիտութիւն է ընտրում իր համար քաղաքա-անտեսութեան պատմութիւնը և առհասարակ սօցիալական գիտութիւնները։ Արածել լսում է նա նշանաւոր Բառ, <sup>(15)</sup> Բլունցի<sup>(16)</sup> և Տրէչկի<sup>(17)</sup> պրօֆէսօրներին։ Բնագիտական բաժնի մէջ նա լսում է Հերմհօլցի<sup>(18)</sup> Բնական գիտութիւնների ընդհանուր հետեւանքները<sup>(19)</sup> և Վունդի<sup>(20)</sup> Համեմատական անարօպօլոգիա<sup>(21)</sup> դասախոսութիւնները։ Մաս երկու տարի առանողութեան հետեւանքը այն եղաւ որ հարցաքննութիւնից յետոյ, 1869 թւի

15) Կարլ Հէնրիխ Բառ, Եշանսուոր գերմանացի աճանաւագէտ, ծն. 1792 թ., 1822 թւեց գասախօսում էր Հերցիլերգում, ուր † 1870 թ. բարոնի են առելի նրա „քաղաքա-անտեսութիւնն զասագիրքը“ և 1834—1853 թւերին հըասարակութան քաղաքա-անտեսական արևիւը։

16) Յովհան Գասպար Բլունցի, ծն. 1808 թ., գերմանական աճանաւագէտ, պարագլուխ աղասամիս կրուսկութեան, պետական գիտութիւնների գասախօս Հերցիլերգում, նշանաւոր է իր գիտական գլուածներով։

17) Հէնրիխ Տրէչկի, պատմաբան և հրասարակախօս, ծն. 1834 թ., պրօֆէսօր նախ Ֆրէցիուրգում և կիրում, իսկ 1867 թւեց Հերցիլերգում, ապա 1874 թւեց Բէրլինում։ 1871 թւեց գերմանական թէյսատի անդամ էր և եռանդ աղասամիս աղդային-ազատական կուսակցութեան։ 1866 թւեց խթրագում էր „Պրուսացոց տարեգուռթիւնները“, Անգլիացման գրւածներ։

18) Հ. Լ. Հերմհօլց, նշանաւոր փիզիկոս և ֆիզիոլոգ, ծն. 1821 թ., պրօֆէսօր էր նախ Հերցիլերգում, ապա 1870 թւեց Բէրլինում։ Նաև նշանաւոր գիւտեր ունի արած փիզիկովի և փիզիոլոգիայի վերաբերութեամբ, մանաւանդ աշքի և ականջի մասին։

19) Վունդը, ժամանակակից գերմանացի փիզիոլոգ և անարօպօլոգ, յարանի է իր քանի մի նշանաւոր գրւածներով, որպէս „մարդու Փիզիոլոգիայի ձեռնարկ“, և ապնի

Հոկտեմբեր ամսին նա ստացաւ վկալական (դիպլօմ) Ներդրէրգի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտէտի գօքտորութեան։ Այս աստիճանին արժանանալուց իւսոյ, 1869 թւի նոյեմբերի սկզբին Գ. Արծրունին գնաց Փարիզ, ուր սկսեց հասալսարանումը լսել քաղաքատնտեսական գասեր, բայց երկար չմնաց, որովհետև հետագայ 1870 թւի յունեարին նա արդէն Վիեննա է։ Այստեղ անցկանցնելով նոյն ձմեռը, Գ. Արծրունին Վիեննայի Մխիթարեանների մօտ պարապում էր հայերէնը ուսանելով, իսկ համալսարանում լսում էր Լորէնց Շաէն<sup>(20)</sup> և ուրիշների քաղաքա-տնտեսական գասախօսութիւնները։

1870 թւի մարտ ամսին Գ. Արծրունին արդէն գտնուում է Վենետիկ, ուր քանի մի ամիս մնալով՝ Մխիթարեանն միարան Հ. Իգնատիաս Կիւրեղեանի մօտ հայերէն է ուսանում։ Նոյն 1870 թւի յունիսի վերջերում նա գարձեալ գալիս է Ներդրէրգի, ուր կրկին լսում է քաղաքա-տնտեսական գասեր, բայց այստեղ էլ երկար չմնալով, սեպտեմբերին արդէն վերադառնում է է Թիֆլիս—հօր մօտ։

Այդպէս ահա 1863—1870 թւերին, ալիսինքն եօթը տարւու մէջ, Գ. Արծրունին փոխում է հետեւեալ եօթը համալսարաններ՝ Սոսկալի (1863), Պետերբուրգի (1865), Ցիւրիխի (1867), Ֆրնէվի (1867), Ներդրէրգի (1868, 1869, 1870), Փարիզի (1869), Վիեննայի (1870) և միւնիոն ժամանակ ուսանում է հայերէնը Մխիթարեանների մօտ նախ Վիեննայում, ասդա Վենետիկում։ Թէ որ աստիճանի օգտառէտ պիտի լինէր այդպիսի շարժուն կեանքը հիմնական գիտութիւններ ձեռք բերելու նկատմամբ — զգիտեմ, միայն ակնյալու է, որ շարունակ ճանապարհորդութիւնը և Եւրոպակի բազմաթիւ քաղաքներ անցնելը, ինչպէս առհասարակ ամենայն ճանապարհոր-

(20) Լորէնց Շաէն, ծն. 1815 թւին, իսկ 1855 թւին նշանակվեց պիտուկան գիտութիւնների ոլորժէսոր Վիեննայում։ Ունի բազմաթիւ նշանաւոր գրւածներ։

դութիւն, նպաստեց ճանասլարհորդի մտաւոր զարգացման և բաւականաչափ վերականգնացրեց նրա մարմնական առողջութիւնը։ Այդ մտաւոր զարգացման արդասիքը քայլառքայլ և հետեւարար երեւում է Գ. Արծրունու Հայոց պարբերական հրատարակութիւնների մէջ զետեղած յօդւածներում։

Որպէս զի այդ գրութիւնների ուղղութիւնը և նրա զարգացման քայլերը լաւ հասկացւին, հարկ եմ համարում կրկին լիշեցնել այն իրողութիւնը, որ Գրիգորը, շատ կանուխ զրկւելով մօրից, իր մանկութեան ժամանակ զուրկ է եղել մայրական բնածին սիրուց և գղւանքից։ Նրա ալրի մնացած հայրը թէեւ ոչինչ չէ խնայել այնուհետեւ իր որդիններին բարի կրթութիւն տալու համար, բայց որդիքը հօր մէջ տեսել են միշտ մի խիստ պահանջող, կամակոր և բռնացող ոյժ, որ ամեն կերպ սահմանափակած է որդոց կենսական ազատութեան պարմանները։ Երբ 1861—1862 թ. Գրիգոր և Անդրէաս պատանի եղբայրները իրաւունք ստացան իրանց ալղիից վար իջնել իրանց զալէրէ-ալի վերին լարկում պտըտէլու—այդ նրանց աչք բաց անելու առաջին քայլն էր, իսկ Թիֆլիսի գիմնազիա մտնելը—երկրորդը՝ 1863 թւին գնալով Մոսկվա, Գրիգորը որքան որ ազատ զգար իրան, այնուամենալինեւ ազատ չէր, քանի որ հայրը զիմած էր իր Մոսկվալի բարեկամներին հսկողութիւն ունենալ իր որդու—այս անփորձ երիտասարդի վրայ 1864 թւի կէսին տեղափոխւելով Պետերբուրգ, ուր եկած էր և Անդրէասը, Գրիգորը զարձեալ մի որոշ շրջանի բարոյական վերահսկողութեան տակ էր և չունէր այն ինքնազդվխութիւնը և կամքի ազատութիւնը, որ այնքան կարեւոր է մարդու զարգացման համար։ Բայց ահա 1866 թւի սկզբին նա թողնում է Ռուսիակի մայրաքաղաքում իր եղբօրը, ընկերներին և ամենայն ծանօթութիւնու վստահելով միմիայն իր ոյժի վրայ, անցնում, գնում է հեռաւոր Նիցցա։ Որպէս զերութիւնից փախած մի երիտասարդ, նա միայնակ նստում է նաւ, բացում է առագաստը և խնձնում է բաղդը հողմերին։ Հրապարարիչ է թւում նրան առաջը բացուղ կեն-

սովան ծռվի ընդարձակ ծաւալը և առաջին ազատ քաշած շունչը լիշեցնում է նրան երեկության կրածը, կաշկանդւած գրութիւնը: Եւ ահա հեռաւոր վայրերից նու բողոք է բառնում իր հալլենիքում եղած մեր ծնողների բռնակալ խնամատարութեան դէմ, ընտանեկան և հասարակական յարաբերութիւնների դէմ . . . :

Այսքանը բաւական է, որ անցնենք Գրիգոր Արծրունու ոկզմական գրւածներին: Նշանաբան առնելով Գէօտէի ֆառստից այն խօսքերը թէ՝ «Դու շնու կարող մի միժ բան շինէլ՝ ու ամսա սկսում ես փորր բանից», Գ. Արծրունին 1865 թւի ապրիլի 17-ին տպում է: Մեզու Հաստատանիք, լրագրում (№№ 13 և 14) Պետերբուրգում գրած իր անգրանիկ յօդւածը՝ «Ռուսական գիտութիւնների նշումակութիւննը դաստիարակութեան մէջ» վերտառութիւնով: Հաստատելով այն միտքը, թէ գաստիարակութեան նալատակը պիտի լինի դարգացնել երեխայի միտքը բնական գիտութիւնների միջոցով և ոչ թէ լյնել նրա գլուխը չոր գիտութիւններով, Արծրունին տառում է՝ «մենք ել ունինք լատիններէն լեզուի նման մի լեզու՝ մեր գրաբառը, ունինք նաև Աստուածաշոնչ, քրիստոնէական հրահանգ և այլն, որոնք թէպէտ շատ հետաքրքիր և օգտաւէտ առարկաներ են, բայց երեխերանց համար անհանկանալի և ուրեմն վերացնեալ: Եւ ճշմարիտ, ամենին մեզանից լալտնի է, ինչ գժուալը է և ձանձրալի երեխի համար գրաբառի հոլովմունքներ և խռովարհմունք սովորել, կամ թէ Մսերի գրքով Աստուած բառի նշանակութիւն մեկնել»:

Սրանից լետու նոյն 1865 թւի Մեզուի № 23ում տպւեց Գ. Արծրունու երկրորդ յօդւածը՝ «Երկու խօսք ուղղիկրանց դաստիարակութեան վրայ», որ նմանապէս դրած է Պետերբուրգում: Առաջ բերելով Բոկի, Կ. Ֆօխտի, Ա. Կոլաչէկի և ուրիշների գրւածներից հատւածներ յօդւած կանաց գաստիարակութեան, հեղինակը, որ մի քանի հայ ըն-

տանիքների հետ առաջին անգամ ծանօթացել էր միմիալն Մոսկվայում և Պետերբուրգում, և այն էլ այնպիսի ընտանիքների հետ, ուր մալբերը որդիների հետ օտար լեզով են խօսում, հեղինակը, ասում ենք, զայրանալով գրում է՝ «մալբաքազաքներումը մեր տնալին կրթութեան մէջ կալ մի ուրիշ անպիտան կողմն էլ: Եթեխերք մոռանում են իրանց լեզուն, ուրեմն և զրկվում են իրանց զարգացման բնական միջոցից. կորցնում են սէրը դէպի իրանց ազգը և շատ անգամ էլ ատում են իրանց հալքնակիցներին: Եւ միենոյն ժամանակը ինչպէս հալբերը, նոյնպէս և որդիքը, չափազանց հպարտ են և ինքնահաւան, երեք էնդուր, որ չունին ոչ ազգ, ոչ կրօն, ոչ լեզու, ոչ էլ առողջ միտք. . . :

1866 թւին գնալով Նիցցա համալսարանական պարագամունքներից հանգստանալու և առողջութիւնը վերակազմելու մտքով, Գ. Արծրունին շարունակում է զրել Եւ որովհետեւ ալդ միջոցում Թիֆլիսում հրատարակուում էին որպէս Պ. Սիմէօնեանցի «Մեղու. շարաթաթերթը, նմանապէս և Ս. Ստեփանէի «Հայկական աշխարհ», ամսագիրը—Երկուսն էլ տարբեր ուղղութիւններով և միմեանց հետ միշտ բանակութի մէջ—Արծրունին հեռու պահելով իրան կուսակցական ձգտումներից շարունակում է միաժամանակ մասնակցել երկու հրատարակութիւնների մէջ էլ Ալդպէս ահա տպելով 1867 թւի «Մեղուի. №49-րորդում «Ազգային գրասառութեան վերտառութեամբ» Նիցցայում գրած յօդապահը, նա նոյն ժամանակ ուղարկեց «Հայկական աշխարհին» (1867 թ. №4—5, եր. 177—182) Եգմօնդ Արու «Le Progrés», յարտնի աշխատութիւնից քաղլած «Աշխատեանք», գրութիւնը: Այս գեղեցիկ յօդապահը, ասում է իր կողմից «Հայկական աշխարհի», խմբագրութիւնը, մենք հեռու տեղից, ժէնէվից, ստացանք վերջին օրերում մի հայկական ազնիւ երիտասարդից, որը ինչպէս լսել էինք, գնացել էր Նվելցարիա իւր առողջութիւնը վերականգնելու: Հասկանալի է, որ յօդապահ

առանձին նշանակութիւն ունէ մեզ համար և շտապեցինք նը-  
րան հրատարակելու, մանաւանդ սրա գեղեցիկ մտքերը շուտ  
հաղորդելու ընթերցողներիս:

Իոլոր վերոյիշեալ յօդւածները նկատելով իրեւ թարգմա-  
նական գրածներ, թէև հեղինակը ըստ իր ոյժին աշխատել  
է նրանց հայացնել, մենք կանգ ենք առնում Խնտէրլակէն  
գիւղում յօրինուած և Հայկ. աշխարհի. 1867 թ. №9-ի մէջ  
տպած „Գերդաստանի ազդեցութիւնն եւ համարտաւան՝  
գրութեան վրայ Բնաբան ընտրելով իրան Աէրշէլի խօսքերը,  
թէ Առաջադիմութեան համար հարկաւոր է մարդիս ոչ թէ  
միայն շատ բաներ սովորել, այլև հարկաւոր է նրան շատ բա-  
ներ մոռանալ, Գ. Արծրունին աշխատում է հաստատել որ  
Թիֆլիսի մէջ համալսարան հաստատելը, որպէս ցանկանում են  
ծնողներից շատերը, ոչ թէ օգտաւէտ կըլինի, այլ վնասակար:  
Մեր ծնողները, ասում է նա, կարծում են բազգաւորեցներու  
և բարերարութիւն անելու իրանց երեխաններին, պահելով նո-  
ցաւ անդադար հնագանգութեան տակ իրանց գերդաստանում:  
Ասենք Թիֆլիսում համալսարան կար Ասենք ես երեկ գիմնա-  
զիստ էի Թիֆլիսի գիմնազիայում և արօր միենոյն քաղաքի  
մէջ ուսանող գարձար: Փօխվեցաւ արդեօք իմ դրութիւնս: Ամե-  
նեին ոչ: Արօր երեկվան նման ես դասերից իտոյ տուն եմ  
զալիս, նոյնպէս տեսնում եմ իմ գերդաստանի կեանքը, նոյն-  
պէս լուսմ եմ իմ ծնողների խօսակցութիւնը, նոյնպէս երե-  
խալ եմ: Երիտասարդի համար աւելի հեշտ է իւր խելքը զար-  
գացնել իւր գերդաստանից հեռու ալլելով, քան թէ իւր ծնող-  
ների մօտ մնալով: Հարկաւոր է մոռանալ գերդաստանի մէջ  
ստացած թիւր և ցուրտ մտքերը, բարքերի և վարքի կոպի-  
տութիւնը և երեխայութիւնից գլուխ մէջ արմատացած նախա-  
պաշարմունքը: Որքան շատ կերթան մեր երիտասարդներ Թու-  
ստատան կամ արտաահման, ալնքան լաւ կըլինի Ես չէի  
կոմինալ, որ համալսարան լինէր մեզանում, որովհետեւ մեր  
հասարակութիւրը բացված չէ ամենեին: Եթէ Թիֆլիսում լի-

նէր համալսարան, երիտասարդ ուսանողները բացված չէին կարող լինել, որովհետև ծնողները չզարգացած և տղետ լինելով, պահում են միշտ երիտասարդներին մտաւորական ստրկութեան մէջ։ Այսուհետև հեղինակը խորհուրդ է տալիս՝ համալսարանի տեղ՝ բանալ երկրիս մէջ ամենուրեք հրապարակական դասախոսութիւններ։

Այս լօդւածը իր ժամանակին ձեռքէ ձեռք անցաւ և որքան որ տարօրինակ թւաց՝ ոչ ոք եղաւ լրագրութեան մէջ հերքող կամ վիճող ու միմիայն նոյն Հայկ. աշխարհի, 1867 թ. № 10-ի մէջ (եր. 436) վկարեցաւ, որ Արծրունու արդ գրութիւնը «առանձին քաղցր տպաւորութիւն է գործել ընթերցողների վրա»։

Սակայն հեղինակը, ինչպէս երևում է, մասնաւոր կերպով տեղեկացաւ, որ իր հետ ոմանք համաձայն չեն։ Եւ ահա Հայկ. աշխարհի, 1868 թւի № 5—6 մէջ տպւած է Գ. Արծրունու Կրկին համալսարանի մասին, լոդւածը, որ վերուիշշեալի շարունակութիւնը կարող է համարւել Հեղինակն առում է՝ «շատերը արդ լոդւածի մէջ լայտնած մտքերի հետ չհամաձայնեցան։ Մի քանիսը ասում էին թէ որ գիւղական ուսումնարանները ազգեցաւթիւն ունին ժողովրդի վերա, միթէ համալսարանը չի ունենալ . . .»։ Միւսները ասում էին թէ լոդւածը թէպէտև քանի մի տեղ ուղղ մտքեր է պարանակում իւր մէջ, բայց խօսում եմ համեմատարար, արմինքն որ իմ կարծիքով եթէ Թիֆլիսում հիմնուէր էլ համալսարան, նա թէպէտև օգուտ կըրերէր հասարակութեանը, բայց մինչև այն աստիճանին օգտաւէտ չէր կարող լինել, ինչպէս օրինակ Պետերբուրգի համալսարանը։

Ըստ իր կարողութեան հերքելով Թիֆլիսի մէջ հիմնելիք համալսարանի օգուտանները, Գ. Արծրունին գալիս է հետեւեալ եղրակացութեանը։ Աւրեմն, ասում է նա, եթէ հիմնվել էր համալսարան Թիֆլիսում, նորա հիմնելու հետեւանքները կըմնէին առաջին, որ երիտասարդներ չէին կարողանալ հիմնաւորապէս պարագել խրեանց ուսմամբ, որովհետև գործնական

միջոցներ չկան, երկրորդ՝ որ նոքա բացված չէին կարող լինել, որովհետև միջոց չէին ունենալ, ինչպէս օտար քաղաքներում, զարգացած հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալ, և վերջապէս երիտասարդներ չէին կարողանալ ազատվել նախարաշարմունքից, այնոր համար, որ ստիսպիս կըլինէին տգէտ, կամակոր և նախապաշարված ծնողների ազգեցութեան տակ մնար. Օգուտը ուրեմն—ոչինչ, իսկ վնաս այն կլինէր, որ մի ամբողջ սերունդը կսպանվէր մտաւորապէս և միևնորդ ժամանակ ուսման առարկաներն ևս երիտասարդները հիմնաւորապէս չէին իմանար:

„Հին սերունդի և մեր սերունդի զանազանութիւն այն է միտյն, որ նոքա չեն կամենում և հասկանում ևս չեն իւրեանց պակասութիւնները, իսկ մենք հասկանում ենք մեր պակասութիւններ. Մեր մէջ վաս վարքի և բարքի օրինակները, նախապաշտրմունքը, կամակորութեան և բռնաւորութեան սովորութիւնները այնքան արմատացած են, որ մենք, նոր սերունդն ևս, այն բան հասկանալով և մեր բնաւորութեան գորութիւնից բաւական լոյս չունենալով, պէտք է աշխատենք հեռացնել մեզանից մեր երեխաներ, ազատել նոցա մեր ազգեցութիւնից, նոցա հնար տալ ազատվելու անպիտան, կոսկիտ ատրկութիւնից, նոցա հնար տալ մեր ընդդէմ կռւելու(!!)“:

Պէտք է նկատել, որ այդ միջոցին Գ. Արծրունու գիտութիւնը հայերենի մէջ այնքան թոյլ էր, որ թէ „Մեզուի“ և թէ „Հայկական աշխարհի“. Խմբագրութիւնները ստիպւած էին ուղղել նրա ոճը: Բայց որովհետև Պ. Սիմոնեանցը և Ս. Ստեփանէն շատ տարբեր հայեացք ունէին ուզզազրութեան վրա, այդ պատճառով Արծրունու լոգւածները „Մեզուի“ մէջ ուրիշ լեզուվ էին տպւում իսկ „Հայկական աշխարհում“—ուրիշ: Այս տարերութիւնների մասին Ս. Ստեփանէն հարցըել էր Գ. Արծրունու կարծիքը և, ահա վերջինս նիցցալից 1868 թւի փետրուարին պատասխանում է՝ „Ես շատ շնորհակալ եմ“ Հայկական աշխարհ, օրագրի խմբագրութիւնից, որ նա ալսպէս

գեղեցիկ կերպով ուղղում է իմ ոճը: Բայց միևնույն ժամանակ ես ամենեւին արգելք չեմ դնի, եթէ ուրիշ օրագրի խմբագրութիւնը, „Մեղու Հայոստանի”, խմբագրութիւնը, իւր կարծիքների և իւր կանոնների համեմատ կուղղի: իմ ոճը: Թող ամէն օրագիր ուղղէ ոճը ինչպէս որ կամենալ. . . . ես սրան մեծ զին չեմ դնում: Ո՞րն է արդ երկու ոճերից առաւել կանոնաւորը . . . ծշմարիտ ձեզ ասեմ—ես չեմ համարձակի դատաւոր լինել արդպիսի բաներում, մանտուանդ որ, կրկնում եմ, ես ոճին մեծ զին չեն դնում, լեզուին մեծ նշանակութիւն չեմ տալիս յօդվածի մէջ: Թող լեզուն հասկանալի լինի—արդ բաւական է: Առհասարակ կասեմ, ոճը և լեզուն մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ, երբոր ազգի զիսաւոր պակասութիւնը— արդիտութիւն է: Երբ որ ձեր նպատակն է ազգին ինչ և իցէ միտք հասկացել, ազգին մտածել տալ—միթէ միևնույն չէ, ձեր ոճը, թէ „Մեղուի”, ոճը կլինի: Միթէ միևնույն չէ դուք ձեր յօդուածում „մարդուն” կասէք թէ „մարդին”:

Ես հայկական լեզուի վերա չեմ նարում որպէս նպատակի վերա, բայց ինչպէս միջոցի վերա: Ոչ թէ „կարդանք հայերէն, որովհետև „Հայեր ենք”,՝ այլ կարդանք հայերէն, որովհետև հայերէն առաւել լաւ ենք հասկանում, քան թէ ուրիշ լեզու: Օրոգիր հրատարակեցէք ոչ թէ այն նպատակով, որ ընթրեցողներից „հարաւէրներ”, և „ազգաւէրներ”, շինէք, — բայց այն նպատակով, որ Հայերից „մարդիկ, շինէք:

Հասարակութիւնը չէ մտածում, ժողովրդի մէջ հասարակական կարծիք չկայ: Գոնէ օրագիրը պէտք է ուղղութիւն էր տուել հասարակութեան կարծիքին: Բայց ինչ ուղղութիւն են տալիս մեր օրագիրները: Գրեցէք մի յօդվածը, օրագիրը կատէ՝ արժէ կարդալ արդ յօդվածը: Միթէ սա կրիտիկա է: Ի՞նչի արժէ կարդալ արդ յօդվածը: Ասում է նմանապէս ։ իմաստուն յօդված է: Ինչ է նշանակում “իմաստուն”: Միթէ արդ բառը հասարակութեանը կը հասկացնէ յօդվածի ինչ լինելը. . . . Օրինակ—իմ ։ համարական, յօդվածի մասին պ. Հայաւէրը ։ Հար-

կակ. աշխարհ 1867 № 9) ասաց թէ նա քաղցր տպաւորութիւն ունեցաւ Հասարակութեան վերա, և ննչի քաղցր տպաւորութիւն ունեցաւ նա Հասարակութեան վերա, նորա Համար, որ ես հայ եմ և Հայերէն լոդված գրեցի, կամ նորա Համար, որ ես ասացի թէ Համալսարանի Հիմնելը առաւել վնաս կրերէ քան թէ օգուտ, որովհետեւ այն ժամանակ երիտասարդներ ստիպած կլինին քաղաքում և տգէտ գերգաստանի ազգեցութեան տակ մնալ: Կամ թէ նորա Համար, որ ես Հասարակական դասախոսութիւնների միտք տուի . . . Կամ թէ նորա Համար, որ ես ասացի թէ որքան հեռու փախչենք մեր տգէտ ծնողներից, այնքան լաւ կլինի: Յայտնի չէ ինչի նա քաղցր տպաւորութիւն» ունեցաւ: Միթէ արդակիսի խօսքերը կտրոգ են ինչ և իցէ օգուտ բերել կարդացողին: Միթէ կարող են մարդին ինչ և իցէ միտք մենել, լոդված հասկացնել, ուղել Հասարակութեան կարծիք: Ժողովուրդը չէ մտածում, և օրագիրը պիտի սովորեցնէ մտածել, . . . (Հայ. աշխարհ, 1868 № 2, 3):

Իբրև լաւելած այս գրութեան, Գ. Արծրունին ուղարկել է Ս. Ստեփանէն նաև երկու լոգւածներ՝ «Դրականութիւնն չկայ», և «Իդեալիստներ», անունով: Ստանալով այդ գրածները գեռ 1868 թւի լունար տմսին, երկար ժամանակ Ս. Ստեփանէն չէր վատահանում տպել դրանց և հրատարակեց միայն տարւալ վերջը Հետագայ ծանօթութիւնով: Գրականութիւն չկաւ, լոգւածը ստացել ենք լունվար ամսմին: Բայց ցանկանալով օրագրում աւելի այնպիսի լոդուածներ հրատարակել, որոնց Համար պատասխանատու կարող էինք մենք ևս դառնալ և օրան այնպիսի լոգւածներից չհամարելով, դժվարանում էինք մտածող ընթերցողներիս մասնակից կացուցանելու այն խելացի և միանգամայն օգտական մտքերին, որոնք գտնվում են այս լոդուածում: Ուստի մենք ահա հրատարակեցինք այս

թօդուածը, պատասխանափութիւնը նոյն ինքն հեղինակին թաղնելով։

„Գրականութիւն շկայ” գրածի մէջ (Հայկ. աշխարհ, 1868 № 9) բովանդակւած մտքերը, քաղաքացին հետագայքն են։

Խնչի էք սովորում որ և իցէ լեզու», հարցնում է Գ. Արծրունին։ Երեք նպատակով, պատասխանում է նա, առաջինը, որ կարողանաք մի հասարակութեան հետ լարաբերութիւններ ունենալ, — երկրորդը, որ ծանօթանաք այն հասարակութեան գրականութեան հետ, — և երրորդը, որ կարողանաք ինքններդ այն հասարակութեանը նորա լեզուի միջոցով ձեր միտքը լարտնել, շարադրութիւններ գրելով։ Խնչի ենք սովորում հայկական լեզու, Միկնոյն երեք նպատակով։ Առաջինը, որ կարողանանք հայկական հասարակութեան հետ լարաբերութիւններ ունենալու բայց դորա համար հարկաւոր չէ անպատճառ հայերէն իմանալ։ Վրաստանի հայերը վրացերէն առաւել լու են խօսում քան թէ հայերէն։ Հայաստանի կողմերի, օրիսակ Երևանի, հայերը ոչ թէ միայն հայերէն են իմանում, բայց ամենքը նմանապէս և թուրքերէն են խօսում։ Վերջապէս, առհասարակ Ռուսաստանի հայերը ռուսերէն են իմանում։ Ուրեմն . . . հայերի հետ լարաբերութիւններ ունենալու համար հարկաւոր չէ անշուշտ հայերէն իմանալ։

„Երկրորդ նպատակը հայերէն լեզու սովորելու է՝ կարողանալ հասարակութեան գրականութեան հետ ծանօթանալ, նորանից ինչ և իցէ օգուտ քաղելու նպատակով։ Հայկական գրականութիւն . . . Խնչ հայկական գրականութիւն . . . Կայ արդեօք հայկական գրականութիւն։ Եւ եթէ կայ, ինչ օգուտ կարող ենք նորանից քաղեր նոր հայկական գրականութիւն չկար չին հայկական գրականութիւն կայ, շատ հարուստ է և ուղղութիւն ունի։ Բայց ինչ ուղղութիւն։ Ցարմար է նա արդեօք մեր այժմեան հարկաւորութիւններին։ Կարող ենք մենք արդեօք մեր հին գրականութիւնից այնպիսի մտքեր քաղեւ

օրոնք կարողանալին մեր ազգի բարքը ու վարքը նորոգել և մեր կեանքին ու մեր խելքի ընդունակութիւններին մի նոր օգտաւէտ ուղղութիւն տալին . . . Ոչ . . . Ուրեմն մենք հայկական լեզու այն նպատակով չենք սովորում, որ մեր գրականութեան հետ ծանօթանանք և նորանից օգուտ քաղենք... որովհետեւ գրականութիւն չկար:

„Երիտրի նպատակը հայերէն սովորելու պէտք է լինի նոյն լեզով հասարակութեանը իւր միտքը յայտնել ինչ և իցէ յօդուածներ կամ գրքեր գրելով, Բայց մեր հասարակութիւնը հարկաւորութիւն չէ զգում դէպի ընթերցանութիւնը: Եւ ապացոյց որ այդ պահանջմունք չկան հասարակութեան մէջ, այն է, որ մեր մէջ ոչ ոք չէ կարող ապրել ու իւրեան կերակրել ոչ հայկական գրքեր գրելով կամ թարգմանելով, և ոչ ևս հայկական օրագիր հրատարակելով:

„Ուրեմն Բնշի ենք սովորում հայկական լեզու . . .

„Վալ . . . Այդ էր պակաս . . . Հայեր ենք ու հայերէն չը սովորենք . . .

— Ես ձեզ չեմ ասում թէ հայերէն մի սովորէք, բայց ես ձեզ հարցնում եմ Բնշ նպատակով էք սովորում հայկական լեզու, կամ Բնշ օգուտ էք քաղում այդ լեզու սովորելուց . . . Բնշ է ասում . . . օգուտը ո՞րն է . . . Հալ ես, պէտք է հայերէն սովորես”:

„Սա պատասխան չէ”:

„Այ՛, սա պատասխան չէ,—կամ աւելի լաւ ասեմ, սա պատասխան է, բայց սա իդէալիստների պատասխան է”:  
Այսպէս է շարունակում իր գրւածքը Գ. Արծրունին իր հետազալ իդէալիստներ յօդւածում (Հայկ.-աշխ. 1868 № 10).<sup>4</sup> Գիտէք իդէալիստ ինչ է նշանակում, հարցնում է նա և պատասխանում՝ „Ով արհեստով պարապում է ոչ թէ այն նպատակով, որ ստիպէ հասարակութիւնը մտածելու, այլ լոկ իր սիրած արհեստի համար, նա իդէալիստ է, Ով կարդում է ոչ թէ իրան զարգացնելու, այլ լոկ կարդալու համար—նա իդէ-

աղիստ է, Ով գրում է ոչ թէ որ և իցէ մտքեր լարնելու նը-  
պատակով, այլ միայն որ ձեզ սիրուն լինի, թէև միտք չունե-  
նալ նորա գրածը — նա իդեալիստ է.

Ով խօսում է ոչ թէ մտքեր լարնելու համար, այլ  
միայն խօսելու համար — նա իդեալիստ է.

Ով թատրոն է գնում ոչ իւրեան զարգացնելու համար,  
այլ լոկ գիշերը թատրոնում անցկացնելու համար — նա իդե-  
ալիստ է, և այն և այն:

„Մենք հայերս ամէնքս ոյիդեալիստներ, Ենք:

„Մենք իդեալիստներ չենք միթէ, երբ մեր սեփական  
լեզուն այն նպատակով չենք սովորում, որ նորանից օգուտ  
քաղենք, որ նորա միջոցով մտքեր լարնենք, լարաբերութիւն-  
ներ ունենանք, նորա միջոցավ ուսուցանենք, նորա միջացավ  
զարգացնենք մեր խելքը: Մենք իդեալիստներ չենք միթէ,  
եթէ մենք մեր սեփական լեզու սովորելուց ոչինչ օգուտ չենք  
քաղում, բայց այնու ամենայնիւ սովորում ենք նորան: Մենք  
իդեալիստներ չենք միթէ, թէ մենք մեր լեզու միայն այն  
նպատակով ենք սովորում, որ սովորենք մեր լեզու:

Աչ, մենք ազգասիրութեան պատճառով ենք սովորում  
մեր լեզու:

Հասկանում էք դուք արգեօք ինչ է ազգասիրութիւնը:

Ազգասիրութիւնը այնպիսի զգացումն է, որով մարդը  
պարտաւորվում է «օգտաւէտ» լինել իւր հասարակութեան: Ու-  
րեմն, սա ամէննեին ազգասիրութիւն չէ, երբ որ մարդը իւր  
ազգի լեզու իմանալով, ոչինչ «օգուտ» չէ քաղում արդ լեզուի  
ուսումից և ոչ օգուտ է ըերում ու օգտաւէտ լինում իւր հա-  
սարակութեանը:

Այն հայն, որ հայերի մէջ ապրելով, երկիր է փորում, —  
թէ և նա անեննեին հայերէն չէր իմացել, — առաւել մեծ ազ-  
գասէր է (այնոր համար, որ երկիրը փորելով նա օգտաւէտ է  
լինում իւր հասարակութեանը), առում եմ, առաւել մեծ ազ-  
գասէր է, քան թէ այն հայն, որ հայերէն իմանալով, ոչինչ  
օգուտ չէ քաղում իւր հայերէն գիտենալուց:

Ալս երկու, միմեանց հետ կապ ունեցող յօդւածները ան-  
նշան չանցան։ Որքան որ սովորութիւն չկար այն ժամանակ-  
ներում տպագրութեամբ այս կամ այն գրւածի մասին ձայն  
տալ և իրանց կարծիքներ լայտնելը, այնուամենայնիւ գըտ-  
նըւեցաւ մինը «Ռուսաստանում գաստիարակւած հայ երիտա-  
սարդ՝ ստորագրութեամբ, որ, սոյն միջոցում Ագուլիս լինե-  
լով, ուղարկում է Ստեփանէին մի բռղոքող յօդւած հետազալ  
նամակով հանգերձ (Հայկ. աշխ. 1869 №№ 1, 2)։

Պ. խմբագրող, ասում է նա, տպագրութեան համար  
ուղարկելով իմ ալս յօդուածը, աւելորդ չեմ համարում մի քա-  
նի խօսք լիշել թէ ձեզ և թէ պ. Գր. Արծրունուն նրա «Գրա-  
կանութիւն չկայ», յօդուածի պատճառով։ Քանի որ չէի կար-  
դացել «Հայկական աշխարհի», մէջ տպագրված պ. Արծրունու  
«Խտէախստները», ես հիմնվելով առաջին յօդուածի վրայ, հա-  
մարում էի գրա հեղինակին ևս իւր նկարագրած իդէալիստ-  
ներից, և անտարակութ ալլապէս չէր կարող եղափակել քիչ ու  
շատ հասկացող ընթերցողը։ Եւ որովհետեւ նրա ալնպիսի հա-  
մոզմուքը տարածվելով կարող են վնաս պատճառել մեր ամեն  
տեսակ տարրերից գոյացած հասարակութիւններին, որոնց մեծ  
մասը գիտութիւնները միան կուպիտ նիւթականի համար  
են սիրում, առանց հասկանալու մանկավարժութեան բնական  
և պարզ ճշմարտութիւնները, այս պատճառով հարկաւոր հա-  
մարեցինք դրան անպատճախան չըթողների Մենք կարծիք ենք  
տանում, պ. խմբագրող, որ գուք ևս նոյն իսկ պատճառով  
էիք իստաձգել դրա տպագրութիւնը, բայց, ստանալով «Խոչա-  
լիստները», վստահացել էք մինչև անգամ նրա առաջին յօ-  
դուածին ածականներ տալ։ Առանց «Խոչալիստները» «Գրա-  
կանութիւն չկայ», յօդուածը գովասանքով տպագրելը կընշա-  
նակէր կարճատես լինել, կընշանակէր ուղղութիւն չունենալ  
իբրև խմբագրող։

Երբ որ իմ պատասխանը պատրաստ էր, ստացալ և երկ-  
րորդը, որի մտքերից հասկացալ, որ պ. Գր. Արծրունին, ինչ-

պէս հասարակօրէն ասում են, ձեռք է առնել մեր իդէալիստ երիտասարդներին։ Հարցը արագէս կերպանափոխութելոց իւտոյ ինձ պարագաւոր եմ Համարում իստ առնել այն կծու խօսքերը, որոնք վերաբերում են միայն իդէալիստ Արծրունուն և ոչ մեր պատւական ընկերին (?) և խնդրում եմ ընդունել իմ այս յօդուածը իբրև սրարգոյ և լուսցնոյ նրա Իդէալիստները։ Այս նամակով ես չեմ կարող չուղարկել արտասահման իմ անկեղծ շնորհակալութիւնը պ. Գր. Արծրունուն, որ արագիսի հետաքրքիր և կենդանի հարցեր է յարուցանում մեր աղքատիկ հասարակական կեանքին վերաբերված։

Խամակիս հետեւում է խմբագրութեան հետեւեալ ծանօթութիւնը „Իսկ յօդուածը միւս №-ում կտպենք։ Բայց „Հալերիտասարդը“ կարծես նոյնութեամբ չէ հասկացել պ. Արծրունու յօդուածին վերաբերված մեր ծանօթութիւնը“։

Այս խօստացած յօդուածը չտպւեց։ Երևի Ս. Ստեփանէն վախում էր վիճարանութեան տեղիք տալ և կամ զգուշանում էր վշտացնել Գ. Արծրունուն նրա գրուածի հակառակ բան տագելով։ Իզուր էր արդ զգուշութիւնը Գ. Արծրունին ինքը շտապում էր մի բանակոխ բանալ իր յարտնած մտքերի վերաբերութեամբ։ Ալդակէս ահա Հերթլերգից 1868թ. գեկա. 10-ին գրած նամակում (Հայկ. աշխ.՝ 1869 № 1 և 2) նա ասում է՝ „Հայկական աշխարհ, օրագրի խըմբագրութիւն յարտնեց թէ նա համաձայն չէ իմ յօդուածների ուղղութեանը, ինձ թողեց իմ յօդուածների պատասխանատութիւնը։ Բայց Բնշով է զանազանվում իմ ուղղութիւնը ալդ օրագրի ուղղութիւնից—զանազանութիւնը խօսքերի մէջ է միայն և ոչ թէ իրողութեան մէջ...“։ Բացատրելով ասլա իր ասածները, Գ. Արծրունին նամակի վերջում ասում է՝ „Հայերին հարկաւոր է այժմ միայն երկու ուղղութեան գրւածներ՝ նախ ալնապիսի ուղղութեան գրականութիւն, որն որ ժաղովը գին առաջարկէր գիտութեան ֆաստեր, երկրորդ—որ քննէր հասարակութեան կեանքի երևոյթները...։ Իսկ ալնապիսի գըր-

վածները, որտեղ բարոյականութիւն, կարգ և ազդասիրութիւն է քարոզվում, այնպիսի գրվածները թող գրողը տանէ... Բաւական են մեզ քարոզները, մանաւանդ ազդասիրութեան... Ներիք է այն հնացած, մաշված ուղղութիւնը...: Մեզ հարկաւոր է ալժմ աշխատանք,—իսկ աշխատանքին կարող է օդնել գրականաւթիւնը միայն արդ երկու ճանապարհներ ընտրելով՝ դիտութիւնն եւ բանութիւնն:

Ժամանակագրական կարդը պահելով, մենք պիտի վերադառնանք Գ. Արծրունու „Շարունակներ յժէ ոչ“ թոդւածին, որ տպեցաւ 1868 թւի Մեղուի, № 35 մէջ: „Զորս տարի առաջ, զրում է նա, մենք ուսանողներս հաւաքված էինք մի փոքր սենեակում. խօսակցութիւնը մեր հայկական օրագիրների վերա էր:—Ոչ պարոններ, ասաց ուսանողներից մինը, ևս ալժմ տեսնում եմ, որ մենք սխալիցանք սկսելով յօդուածներ հրատարակել հայկական օրագիրների մէջ. միայն այն մարդն իրաւունք ունի յօդվածներ զրելու, որը վստահ լինելով իր զարգացման վերա, կարող է ժողովրդի հասկացողութեան լարմար յօդուածներ առաջարկել“:

Բայց ինչով իմանալ զարգացման չափը... , Ես չեմ ընդունում իմ համալսարանական ուսումի աւարտելը, շարունակում է հեղինակը, ինչովէս իմ զարգացման աղացոց. ես չեմ կարծում նոյնպէս, որ ուսումս աւարտելով ես անպատճառ կհամոզվեմ, որ բաւական զարգացել եմ, որ հասել եմ վերջապէս այն բաղեին, երբ իրաւունք ունիմ զրականական գործունելութիւն սկսել...: Մենք իրազութիւններ ենք տեսնում, որ հայրենիք վերադարձած ուսումնաւարտ երիտասարդներից շատերը, թէ բժիշկներ, թէ իրաւաբաններ, թէ բնագէտներ՝ այնքան թոյլ, երեխաբական զարգացում ունին, որ ոչ թէ միայն գրել չեն կարող մի օրինաւոր յօդուած, այլ խօսակցութեան մէջ ևս չեն կարող որոշ մէկ միաք լալտներ: Կոցա սովորական խօսակցութեան պարունակութիւնը անվայելուչ բաներ են կամ հայութանք: Դուք ինքներդ շատ անդամ տեսած

կլինէք, ինչպէս մեր Թիֆլիսի լուսաւորեալ մարդիկ, ուստի աւարտածներից կամ չաւարտածներից, երբ որ դուք նոցա հետ ծանր խօսակցութիւն էք սկսում, դարձնում են իրանց խօսքը թեթև և կեղոսու բաների վերա Ռւբեմն Բնչ անենք... Դրենք և թող դատէ հասարակութիւնը: Հասարակութէւն. Բնչ հասարակութիւն. կայ արդեօք հայկական հասարակութիւն: Հասարակութիւն, որ կազմված է ուսում չաւարտած ուսանողներից, նիւթապաշտ, տհաս, անհոգ մարդերից և անուս կնամարդերից, որոնք կարծել են թէ եւրոպական կրթված կին կոչվելու համար՝ բաւական է միայն եւրոպական զգեստներ հագներ, և նշ հասարակութիւնն... Երբ ես տեսել, որ մի տպած յօդուածի վերա հայն իր միտքը յայտնէ, դատողութիւն անէ, մտքի մէջ պակասութիւններ և արժանաւորութիւններ տեսնէ: Փոխանակ կրթավեճի նա կարող է հայհոյել,—ալդ նորաբանն է: :

Քննելով ապա մէկ առ. մէկ հասարակութեան ամեն դասակարգերը, հեղինակը այն համոզմունքի է գալիս, որ մեր եկեղեցականները, եթէ նրանք աւելի զարգացած լինէին և աւելի հաստատ ուսում ստանալին, „միակ դասն են հասարակութեան մէջ, որի անդամների վերա զրոյը իրաւունք կունենար նայել, որպէս իւր գրուածների բնական դատաւորների վրայ“:

Անցնենք Գ. Արծրունու „Խնչի չէնը հիմնում“ յօդւածին, որ տպւեցաւ 1868 թւի Հայի, աշխարհի. № 11-ում: „Սովորութիւն կայ հայերի մէջ, ասում է հեղինակը, մի գործ սկսելու համար, իւրեանց մէջ ստորագրութիւն հաւաքելու Ստորագրութիւնների գլխաւոր անդամներն են հարուստները. հասարակութիւնը մի գործ սկսելու համար դառնում է գէպի հարուստերը և արդարէսով հասարակութիւնը ստվրում է հարուստների վերա նայել, ինչպէս հասարակութեան ամենահարկաւոր անդամների վերա Ռվէ է, ուրեմն, հասարակութեան աւելի հարկաւոր և օգատէտ անդամը, —յայտնի բան է այն

մարդը, որ կարողութիւն ունի փող տալու... Հարուստները փքվում են, հասկանալով, որ հասարակութիւնը ոչինչ չէ կարող, կամ ոչինչ չէ իմանում անել առանց նոցա օգնութեան, իսկ անհոգ հասարակութիւնը ոչինչ բանի տեղ չգնելով իր սեփական հասկացողութիւնը և զօրութիւնները—նալում է հարուստների վերա, ինչպէս իր փրկիչների, իր աստուծների վերա, նոցանից է սպասում ամէն կարելի և անկարելի գործեր.... Կայ վերջապէս մի օր, երբ հարուստները կդառնան դէպի հասարակութիւնը ասելով՝ բաւական տուել ենք ձեզ, կրկին մի խռաք մեր օգնութեան վերա...

”Մենք հայերա ոչ մի բանից օգուտ չենք իմանում քաղել. Մեր մասին ասում են, որ մենք վաճառական ազգ ենք—բայց դա ուղիղ չէ: Մբթէ այնպիսի ազգին, որ միայն առնում է և ծախում է, իսկ ինքը ոչինչ չէ արդիւնաբերում, կարելի է վաճառական ազգ անվանել... Կովկասի բոլոր հարստութիւններից մենք շատ քիչ օգուտ ենք քաղում. և այն և ալին“:

Դալով այն վերջնական համոզմունքին, որ „Հարկաւոր է աշխատել հայերի մէջ գիտութիւն տարածելու, գործնական աշխատանքին ընդունակ մարդիկ պատրաստելու“, Հեղինակը առաջարկում է ալդ նպատակին հասնելու համար „գումարներ կազմել, ընկերութիւններ հիմնելով“:

Այս յօդւածը արձագանգ գտաւ Ագուլիսում, սրտեղից Մեսրոպ քահանալ Փափազեանը սպատասիանեց „Եկեր հիմ-աննը“ զրւածով (Համկ. աշխ. 1869 № 1 և 2), որի մէջ կրկնում է Գ. Արծրունու առաջարկութեան կարելութիւնը:

Առհասարակ Արծրունի եղբայրների զրւածների ազգեցութիւնը օրէցօր մեծանում էր և համակրողների թիւը շատանում: Երբ, օրինակ, Թիֆլիսում գտնւող Մոսկվաի համալսարանում աւարտած ուսանողները 1869 թ. լունարի 12-ին տօնեցին իրանց համալսարանի տարեգարձը, մի առանձին համակրութեամբ և բուռն „կեցցէններով“ ընդունեցին Արծրունի

եղբայրների կենաց թասը (մանրամասնութիւնները՝ Հայկ. աշխ. 1869 թ. № 1, 2, եր. 41—42):

Ոչ պակաս ազդեցութիւն ունեցաւ նաև Գր. Արծրունու „Բարոյականութեամ արտօնութիւնն“ անունով և „Հայկական կանանց նուիրված“ յօդւածը (Հայկ. աշխ. 1869 թ. № 6): Առաջ բերերով կանանց դաստիարակութեան կարևորութեան մասին եւրոպական գրականութեան մէջ ընդհանրացած մտքերը և գալով այն եղբակացութեանը, թէ «մինչև որ կինը չմասնակցէ կրթութեան զործին—ժողովուրդը տգէտ կմնար, հեղինակը աւելացնում է» Աւելորդ է աւելի բացատրել մտքերը, —որովհետեւ հայերէն գրած յօդւածները բացի օրագրի խըմբագրութիւնից ոչ ոքից չեն կարդվում: Թէ և հայկական կանանց են վերաբերվում այս տողերը, ես հաւաստի եմ, որ ոչ մի հայ կինը երբէք ցի կարդալ այս գրվածը . . . որովհետեւ հայկական կինը հայերէն կարդալ չէ իմանում»:

Աերջին տողերին պատասխանեց մի կին «Եռշանիկ» ստորագրութեամբ (Հայկ. աշխ. 1869 № 9): Թէ և դա մի բողոք էր, որ Գ. Արծրունին, չճանաչելով հայ կանանց, իրը թէ սիսալել է կարծելով որ հայ կինը հայերէն կարդալ չգիտէ, բայց լի էր և այնպիսի գովեստներով ի պատիւ հեղինակի, որ սորան շատ հրագուրիչ պիտի թւար:

Առհասարակ Հայկական աշխարհի «Խմբագրութիւնը գիտէր գրգռել Արծրունի եղբայրներին ստէպ-ստէպ հանդէս դուրս գալու: Օրինակ, Թիֆլիսի հայոց թատրոնի մասին խօսալով, լիշեալ ամսագրի Ֆէլիչտօնիսար (Հայասէր) գանգատւել էր որ իր գրածների վրայ ուշք չեն դարձնում և թէ քաղաքումն տարէնը մի երկու ներկալացում տարով գեռ չենք կարող ասել թէ հայկական թատրոն ունինք, և վերջը ասում է՝ «պ. Արծրունուց կամ անաշառապէս մտածող հայից կսպասեմ—ինչ կամ ամսն այս իմ խօսքի մասին»:

Եւ ահա Գ. Արծրունին Հէլլիքէրգից պատասխանում է՝ «Եթէ ուշք չեն դարձնում մեր խօսքերին, սա չէ նշանակում

որ չպէտք է շարունակենք քննել, խօսել և գրել: Թող ուշք չդարձնեն, մենք դարձեալ կշարունակենք գրել, խօսել և քըն-նադատել... ով զիտէ, կարելի է ժամանակով ուշք կը դարձնեն... Ազգային թատրօնի անբնական դրութիւնը բացառութիւն չէ հայերի ազգային հիմնարկութիւնների թւում: Ազգային թատրօն չկալ, բայց կան միթէ ազգային ուսումնարաններ, կալ ազգային գրականութիւն, կան ազգային օրագիրներ: Տարին երկու ներկայացմունքը ազգային թատրօն չէ կարելի անվանել—ալդ ճշմարիտ է: Բայց միթէ ազգի մէջ երկու երեք ուսումնարանները ազգային կրթութիւն են ներկայացնում: Միթէ օրագիրը, որ երկու կամ երեք ամիսը մի անգամ է երևում, կարելի է ազգային օրագրականութիւն անվանել: Միթէ ժողովրդի վերա մի որևէ ազգեցութիւն կարելի է ունենալ օրագրի միջոցով, երբ որ օրագրի տետրակները կանոնաւոր կերպով ամսէ ամիս անգամ չեն կարող հրատարակել: Ժողովուրդը միշտ և ամէն տեղ երեխալ է: Եթէ գուք նրան յաճախ չէք կրկնի միևնույն մտքերը, եթէ գուք նրան ամէն օր ազգային լեզուով գրած թերթը չէք առաջարկի— նա մտածել կդադարէ, նա կմոռանալ իր ազգային լեզուն: Ցաւալի է ասել, որ քնած մի ժողովուրդի մէջ մասնաւոր մարդիկներից է կախված գրգռել և ծնել պահանջմունքը: Ժողովուրդը ալնքան տգէտ և մտաւորապէս ստրկացած է, որ ինքն չէ հասկանում իր պահանջմունքը: Նա բաւական է իւր մտաւոր ստրկութեամբ, նա բաւական է իր կեղուով և և թերութեամբ, նա բազգաւոր է իր տգիտութեամբ, կամ աւելի լաւ ասեմ նա անզգայ է: Խոկ հարուստները...: Ուստի ոչ գերասանական խումբը պէտք է մեզադրենք, որ ազգային թատրօն չկալ, ոչ խմբագրութիւնը պէտք է մեղադրենք, որ օրագիր չկալ, ոչ ուսուցիչներ պէտք է մեղադրենք, որ ազգային կրթութիւն չկալ, ոչ ևս ժողովուրդը պէտք է մեղադրենք որ եղանդ, հոգս չկալ: (Հայկ. աշխ. 1869 № 9):

Ալբակս ահա Գ. Արծրունու գրւածներն օրբստորէ հռչակ էին ստանում և սիրով կարդացւում: Երևանցի պ. Գէորգ Շահնազարեան դէ-Նափուրը, օրինակ, Դերայէնտից զրում է Ս. Ստեփանէին Հետեեալը՝ «վերջերումս շատ քիչ է պատահել ինձ, որ մեր օրագրերը այնպէս գրաւեն իմ սիրու և պահանջեն իրանց լիովին կարդալ, ինչպէս ձեր օրագրի № 6—9, մանաւանդ ազնւամիտ պ. Գրիգոր Արծրունու փափկաշունչ և նիւթաւոր լոգւածները: Դորս հեռաստանից հաղորդած ամէն մէկ համբաւը, ամէն մէկ տող զրուածը ունեցան ինձ վերա մէկ առանձին կենսատու և սփոփիչ ազգեցութիւն: Զգիտեմ ինչ է պատճառը, բայց Հելլուերգը ինձ Աթէնք թուեց” . . . (Հայկ. աշխ. 1869թ. № 10, 11 և 12):

Լաւ լիշում եմ, թէ որքան մեծ տպաւորութիւն ունեցաւ տեղիս երիտասարդների վրայ և ոգևորեց նրան, երբ Ս. Ստեփանէի ամսագրի մէջ տպւեցաւ Հետեեալը՝ „Հայկ. աշխարհի” աշխատակից և մեր սիրելի բարեկամ Գրիգոր Արծրունին հոկտեմբեր ամսին Հելլուերգի համարսարանում ուսումնական քննութիւնից և շարադրութիւն պաշտպանելուց յետ՝ ստացաւ քաղաքական տնտեսութեան և իմաստասիրութեան դօկտորի բարձր աստիճան: Ամեն մտածող հայի աչքում սա մեծ նշանակութիւն ունի իհարկէ: Գերմանիայում դօկտորի աստիճան արժանանալ—Հեշտ գործ չէ արա<sup>21)</sup>: Եւ պ. Արծրունին առաջինն է, որ արժանացաւ այս աստիճանին: Ես որպէս հայ պարծենում եմ սորանով: (Հայկ. աշխ. 1869թ. № 10, 11, 12):

21) Աշխարտութիւնը պահանջում է յիշեցնել մեզ և հետեւեալ իրողութիւնը, Երբ մի տարի առելի անցած, պ. Ստեփանէի վերեւ բերւած գրութիւնից լիսոյ, Գրիգոր Արծրունին արդէն Թիֆլիս էր և անձամբ ծանօթացած „Հայկ. աշխարհի”, Խմբագրի հետ, վերջինս գրում է իր օրագրում . . . „Ես շատ ցաւում եմ, որ ռուսաստանցի հայկական երիտասարդների համար ընտրվում է Գերմանիա, որպէս ուսման և կըթութեան տեղ (խօսքը Էֆէնդիամի որդեգիրների առի-

Վերադառնալով Գ. Արծրունու փոքրիշտոէ ինքնուրոյն ընաւորութիւն ունեցող զբւածներին, թէև պիտի փոքր կանգ առնէինք նրա „Նոր տարիի“ յօդւածի վրայ, որ ուղարկւած է 1870 թ. լունարին Վիէննայից, բայց մի կողմ դնելով հեղինակի սովորական բարձակմունքները „Հին սերունդի“ դէմ, բաւականանում ենք առաջ բերելով նրա հետեւեալ եզրակացութիւնները և նոր տարւայ պատճառով արտայարտած ցանկութիւնները: „Թող նոր սերունդը, ասում է նա, չ'անիծէ հին սերունդը նորա անիրաւութիւնների համար, այլ խստութեամբ քննադատէ նոր սկիզբները, առանց նորա հետ թշնամարաններու: Հաճելի կինքը մեզ միթէ, որ ապագայ սերունդը մեզ անիծէր այն անիրաւութիւնների և սխալների համար, որ մենք ևս անշուշտ կդործենք: Ժամանակ կինքի, երբ մենք ևս հիմ սերունդի կդառնանք . . . ուստի բոաէ մի չ'կորցնելով աշխատենք անդադար բարվոքել մեր կեանքը, որ ինչքան կարելի է մաքուր խղճմտանքով ներկալանանք ապագայ սե-

(թով է): Եթէ Հայկական աշխարհի<sup>ւ</sup> խմբագրողը, բարգելով Գերմանիայի մէջ ուստի իր աշխատակցի (Գ. Արծրունու) կարծիքը, հըսատրակում էր նրա յօդւածները, որտեղ Գերմանիային առաւելութիւն էր տվիված «ողորմելի» ածականը նուիրելով միհցւե տնգառ մեր թիւրբարնակ խմաստուն հայերին, որոնք Ֆրանսիայի մէջ են սովորում, ես ընդհակառակն բազգաւար ի՞մ համարում նոցա, որոնք Ֆրանսիա են ընտրում իրանց կրթութեան անդ Պրուսական կրթութեան մեծ պակասութիւններ չեն մթթէ անմերձենալի մինել, մեծամտութիւն (որ կարձամատութեան նշան ևս է), միայն անձնական օգուտներ պատեհէ, զօրութիւն ստացածին պէս հարստահարել առուստքամածներին ևայլու Խակ Ֆրանսիական կրթութիւնը մանկութիւնց կրկնում է անդադար աշակերտին, թէ նա ծնվել է իր ազգին և մարդկութեանը ազնւաբար ծառայելու, ընկերը սիրելու, արդարութիւն և . . . իրաւունքներ պաշտպանելու ևալլու:

Եթէ հայերը ցանկանում են օտար սահմաններում ուսում առնել, ցանկալի կինէր, որ Ֆրանսիա կամ Զվլիցէրիա ընտրէին իրանց ուսման տեղ, թէև Փրանսիական կրթութիւնը բաւական թանգ է... Ապա

ըռունդի հաստարակական դատաստանին<sup>ա</sup> (Հայկ. աշխ. 1870 № 1):

Այս տեսակ ընդհանութ մտքեր է բովանդակում իր մէջ Գ. Արծրունու և միւս խղւածը՝ „Հասականամք մերջաւպէս” անունով, որի մէջ հեղինակը նորից ցոյց է տալիս մեր երկրի բնական հարստութիւններից օգուտ քաղելու կարևորութիւնը (Հայկ. աշխ. 1870թ. № 5—6):

1870 թւի ապրիլի 27-ին Գ. Արծրունին ներկայ է լինում Վենետիկի Ս. Պազարի վանքումը, ուր այդ օրը Միկթարեան հայրերը Մեծ Միհիթարի մահւան տարեդարձն են եղել կատարում: «Հանդէսը սկսվեցաւ զրաբառ լեզուով զրված մի երկար ճառով Միհիթարի վերա . . . : Երկար, երկար, մօտ մի ժամ տևում էր արդ ճառը. իրզին զրաբառով, բարձր ոճով էր զրված նա . . . : Ես շատ քիչ հասկացալ . . . :

Ես լաւ համարում եմ ռուսական կըթութիւն, մանսուանդ որ Ռուսիայի մէջ շատ գժուարութեամբ կարողանում են ռուսումնական աստիճանն մի ստանալու Մի հասարակ կանդիսատի աստիճան ստանալու համար Ռուսիայի մէջ հարկաւոր է, բայց գիմնազիական ութամեալ հիմնաւոր ուսումից, 4 կամ 6 տարի խիստ կերպով պարագն գիտութիւններին համալսարանում, իտոյ ռուսումնական քննութիւն մի գրել, և ապա կարժանացնեն գուցէ կանդիսատի աստիճանին: Ցետոյ գալիս է մագիստրը, ցետոյ գոկտօր, այնպէս որ 20—25 տարի աշխատում է մարդը Ռուսիայում և չէ կարողանում գոկտօրի աստիճան ստանալու Այն ինչ Գերմանիայում բաւական է 2—4 տարի ալս կամ ալն պլրոֆէսօրի գասերին գրիել, մի օր բանախօսութիւն անել պլրօֆէսօրների հետ, և գոկտօրի աստիճանը պատրաստ է պտուօզին առանց որ և իցէ ուրիշ աստիճաններ ստանալու (Բոլորոքին տարբեր քննութիւն է մինում, երբ գիտնական աստիճան պտուօզը տէրութենական ծառայութեանն է պատրաստվում): Բայց և այնպէս առաջին կերպով վաստակած գիտնականութիւնը չէ կարող իհարկէ հիմնաւոր և պտղաւէտ լինել» (Հայկ. աշխ. 1871թ. № 4 և 5): Այսպէս էր խօսում և ակնարկում Գ. Արծրունու գիտութեան աստիճանի վրայ Ս. Ստեփանէն, եղր սև նրան անձամբ ճանաչեց Թիվլիս վերագարձած ժամանակի խոկ թէ ինքը Գ. Արծրունին ինչ կարծիքների տէր էր գերմանական զիալօմների և հայ ռուսանողների մասին—կըխօսի իր տեղու

Ես ինձ հայ զգալով նմանապէս ցանկանում էի ամբողջապէս հասկանալ Մխիթարի կեանքի և նորա հիմնարկութեան պատմութիւնը, ազգի համար ար կենսատութիւնը . . . : Խնչի մի կենդանարար երեսյթը պատմվում է մեռած լեզով: Կարելի է Մխիթարեան հայրերը իւրեանք չգիտեն մինչեւ ինչ աստիճանի նորա մեր տղջի հաւատարիմ պատկեր են, — կարելի է նորա իւրեանք չեն հասկանում մինչեւ ինչ աստիճանի նորա մեր ազգային կեանքի ճիշտ արտարարութիւն են: Ա. Գէորգ արքեպիսկ. Հիւրմիւզեան արքահայրը պատասխանեց ճառախօսութեանը մի փոքրիկ և ազգու ճառով, աշխարհաբար լեզով: Այս փոքր ճառի մէջ արտայալովեցաւ բոլոր միաբանութեան ողի, բոլոր հիմնարկութեան ուղութիւնը: Նշանաւոր էր մանաւանդ նորա խօսքի հետագալ միտքը. — Հիմնողից տուած էր այս միաբանութեանը Աստուածային և կրօնական ուղղութիւնը. մենք կարող ենք ընդարձակել, զարգացնել նորանից մեր մէջ դրած ողին, բայց պակասացնել երբէք չենք կարող: Այս խօսքերը լսելով ինձ թւում էր, թէ պատւական ծերտնու ըերանից ես լսում էի ոչ թէ միան Մխիթարեան հիմնարկութեան, այլ և բոլոր ազգի ուղղութեան նկարագրութիւնը . . . Աստուածային և կրօնական ողի . . . : Այս օրվան բոլոր հանդէսը ընդունակ էր մի խորին և անջնչելի տպաւորութիւն թողնել մարդի սրտի վերա: Այս հանդէսի մէջ կերպարանաւորվում էր բոլոր ազգի կեանքի ողին . . . : Մեռած լեզով նկարագրված մեր պատմութեան միակ կենդանարար երեսյթը, որը արքահօր ճառի ողին, երեխանների (աշակերտների) ծանր երեսները, որոնց վերա ամեններին չէր նշմարվում երեխարկան զգացմոնքը և կեանքը, — այս բոլորը վկալութիւն էր տալիս ծերացած մի ազգութեան իրողութեանը, Ախալվել չէր կարելի. — դուք ուշք գարձնելով ար բոլոր երեսյթներին, կհամոզվէիք որ ունիք ձեր առաջ ոչ թէ իւր մանկական հասակում զանգող ազգը, այլ բազմափորձ, հնասէր, ծերացած

ազգութեան ներկալացուցիչները . . . : Ակամայ իմ աչքս ընկաւ գահինի մի անկիւնի վերա . . . այնուեղ, աշակերտների մէջ տեղը կանգնած էր Նգիպտոսոսից բերած և վանքին ընծալ ված մի շատ հին եղիպտական զմռաված մարմինը (մումիա) . . . : Հազար և հազար տարիները այն մարմինը, կենդանի ես ցինելով, չե՞ ոչնչանում, մենոյն դրութեան մէջ պահպանվում է . . . :

Վանքից դուրս եկած . . . ես ազահութեամբ ծծում էի խստակ օդը . . . : Տալրախեղ զգացմունքը կռւում էին իմ մէջ. — մի կողմից ես չէի կարող զգալ ջերմ շնորհակալութեան զգացմունքը գէպի Մեծ Միթիթարի լիշտակը և նորա հիմնարկութիւնը, — իսկ միևս կողմից տիրութիւն . . . : Զգիտեմ ինչի ես լիշտելի Գէօտէի օրհաստական տղաղակը, — լուս, լուս . . . Այն բոպէում ես կամենում էի կանչել, — կեանք, կեանք . . . (Հայկ. աշխ. 1870, № 5—6):

Գ. Արծրունու հետագալ տպւած լոգուածն է՝ «Հաստրակական կրթութիւն» (Հայկ. աշխ. 1870, № 5—6): Սրա մէջ հեղինակը հաստատում է, որ «հարկաւոր է ընդհանուր կրթութիւնն, որ տարածվէր բոլոր ժողովրդի վերա» և թէ «ընդհանուր կրթութիւնն զվասւոր միջոցը — օրագրութիւնն» է (ժուռնալիզմ):

Այս զբանական ակութիւն կարող է համարուիլ Գ. Արծրունու «Բահաւական շէ» (Հայկ. աշխ. 1870, № 7—8) լոգւածը: Եթբ մենք թողինք գրաբար գրելու սովորութիւնը, ասում է նա, եթբ որ ազատվեցանք մեր հասարակութեան մէջ արմատացած նախապաշարմունքից, որը մեզ արգելում էր մեր ժողովրդական լեզուագրականութեան մէջ գործածելու, — այս առաջին քայլ էր գէպի նոր ազգալին գրականութեան հիմն: Այն ժամանակից սկսած մենք մեծ առաջադիմութիւն արինք: Մեզանում հիմնվեցան օրագիրներ, պարբերական հրատարակութիւններ. . . : Աշխարհաբար լեզու մեր հասարակութեան մէջ մտցնելու առաջի և ամենածանր փորձերից մէկը արէլ է «Հիւմիսափալ» ամսագրի հրատարակողը: Այն ժամանակից սկսած

շարժումը դէպի ազգային նոր լեզվի մշակութիւնը չ'իտաղի-  
մեց . . . անկարելի է ալժմ վերադառնալ մեռած լեզվի գոր-  
ծածութեանը. Ալո՞, անկարելի է . . . բայց գրականութեան  
ալժմեան զարգացման աստիճանին և ուղղութեանը հասնե-  
լուց քատոյ, անկարելի է նմանապէս մի և նորն կէտի վերա  
մնալ:

\*Մեր օրագրութեան և գրականութեան ալժմեան դրու-  
թիւնը բնչ է, և համապատասխան է նա արդեօք մեր պա-  
հանջմունքին. Գրականութիւնը պէտք է գաստիարակիչ ազ-  
գեցութիւն ունենալ ժողովրդի վերա. Նա կարող է այս ազ-  
գեցութեանը հասնել կամ ընդհանուր մարդկային զիտութեան  
մտքերը, սկիզբները և գտղափարները ժողովրդի մէջ տարա-  
ծելով, — կամ ազգին իւր կեանքի երևոյթները վիստասանութեան  
ձեռվ ներկայացնելով. Առաջին գէպքում նա դրսից պէտք է  
մտցնվի, — որովհետեւ մենք հայերս զիտութեան ինքնակալ մը-  
շակութեանը դեռ չենք հասել, և այս տեսակ գրականուկան  
գործունէութեան իրագործութիւնը մենք Եւրոպայում գաս-  
տիարակված երիտասարդների միջնորդութեամբ կարող ենք  
հասնել, — երկրորդ գէպքում մեզ մնում է ինքնուրոյն տա-  
ղանգների ծննդին սպասելու. Բայց մեր հասարակութեանը ըն-  
թերցման դեռ շընտելանալու պատճառով, մեզ չէ կարելի մեր  
միամիտ, ծոյլ և տգէտ ընթերցողին զիտնական աշխատանք-  
ների թարգմանութիւնները գրքի ձեռվ առաջարկել. Հարկաւոր  
է գիտնական յօդվածներ առաջարկել և ոչ թէ գրքերը. Այս  
է պատճառը որ օրագրութիւննը մինչև ալժմ միակ ձեն  
է, որ ընդունելութիւն կարող է գտնել մեր ժողովրդի մէջ. :

\*Բայց կարելի է արդեօք բաւականանալ օրագրութեան  
մէջ օտար ազգերի զիտնական յօդվածների թարգմանութեամբ. Օրագրութիւնը պէտք է մի կողմից ժողովրդի կեանքի ար-  
տարայտութիւնն գառնայ, իսկ ուրիշ կողմից պէտք է դաս-  
տիարակիչ կրթող ազգեցութիւն ունենալ ընթեցողի վերա. . .  
Մեր օրագիրների և լրագիրների խմբագրողները կարծում էին

թէ իւրեանց պատաւորութիւնը կատարեցին, երբ մի թերթ կամ տեսրակ առաջին երեսից սկսած մինչև վարչինը թարգմանութիւններով լցրած ընթերցողին առաջարկել են . . . : Եւ այս է անվանվում ազգային օրիագրութիւնն . . . :

Օրագրութեան ալսպիսի ողորմելի դրութեան պատճառներից գլխաւորը ծագում է այն մեր պակասութիւնից, որը կարելի է մեր ժողովրդական կետանըի յատկանից պակասութիւնն անվանել. Կամենում եմ ասել թէ, հասարակական կեանքի բոլոր երևոյթները բարձրարարութեան ոկզրի վերա են հիմնված և ոչ ժաղովրդի ինքնաօգնութեան ոկզրի վերա ժողովրդը կարդալու պահանջմունքը չունի. . . : Նորան պէտք է սովորեցնել: Աղքատ մարդը, թէև զարգացած, կրթված և գը րելու ընդունակ լինէր, չէ կարող օրագրութիւնը իւր կեանքի միակ պարապմունքը ընտրել,—որովհետեւ արսպիսի աշխատանքը չէ փարձատրվում հասարակութենից. . . : ուստի միտկ աւելորդ ժամանակ ունեցող մարդք կարող է իւրեան արխիպիսի պարապմունքին նուիրել: Բնական է միթէ որ օրագրութեան մէջ ձայն ունեցող և հասարակական կարծիքին ուղղութիւն տվող մարդիկը,—միայն հարուստինը են: Այս է պատճառը, որ մեր մէջ օրագրութեան պարապմունքը ոչ թէ արվեստ և, այլ ժամանակառութիւն: Այս է պատճառը, որ մեր օրագրութիւնը ալսքան թոլ, անհամ, աննպատակ, և բոլորովին միակողմանի երևոյթ է: Բարեբարութեան սկզբին հաւատարիմ մեր հեղինակները հետեւելով երևի ուստական առածին, թէ ընծալած ձիու ատամներին չեն նարում, կարծում են թէ կարելի է ժողովրդին ամեն տեսակ անմարսելի գրածներ առաջարկել, և հեղինակ կամ թարգմանիչ դառնալ ոչ թէ միայն Մամաւառոյ մի գիտութեան հետ ծանօթ զինելով (որ անշուշտ հարկաւոր է օրագրութեանը իւրեան նվիրով անձին),—բայց և ընդհանուր կրթութեան պիզրները անդամ չունենալով: Այսպէս որ մեր զբականութեան ասպարէզում գործող մարդիկը, ոչ թէ միայն Շպատուասաված, այլ և

ջպատրաստովոյ գրողներ են: Եւ ազգային օրինաւոր օրագրութիւնը միայն այն ժամանակ կհիմնվի, երբ խմբագրութիւնը կազմող գրողներից ամեն մէկը գիտութեան մի որ և է ճիւղին մասնաւորապէս տեղեակ կլինի . . . . :

Գ. Արծրունու վերջին ինքնուրոյն գրուածը արտասահմանում՝ համարելու է «Աշխարհաբարի Առաձեռնութիւնների հասարաւեկան նշանակութիւն» լոդւածը (Հարկ. աշխ. 1870, № 12): Ցիշում էք ինչպէս Թիֆլիսի հայերը ման են գալիս փողոցներում . . . : Ահա երկու վաճառական անցնում են իրանց առևտրական գործերի վրայ խօսելով: Տեսէք ինչպէս նոքա ծանրաքայլ կերպով են գնում, ինչպէս բարձրաձայն կանչում են խօսելու ժամանակ, ինչ շարժմունքներ են անում ձեռներով, ոտներով, երեսով, և ամեն մի բռպէ քղանցքից քաշելով միմեանց կանգնեցնում են մի որ և իցէ ամենահասարակ միտք մեկնելու համար: Ցիշում եմ նմանապէս ինչպէս մեր ուսուցիչները չեն շտապում դաս տալու, ինչպէս գործ ունեցող մարդիկ չեն շտապում իրանց գործերը կատարելու, ինչպէս օրէցօր ձգում են նոցա: Ցիշում եմ ինչքան ժամանակ հարկաւոր է հային մի ամենահասարակ միտք մեկնելու—համար: Ինչքան դատարկախօսութիւն, աւելորդաբանութիւն հարկաւոր է նորան, օրինակ, իր ծառային մի որ և է ամենահասարակ հրաման տալու համար . . . : Ժաղավրդի բնաւորութեան այսպիսի արտարկախօսութիւնը մի կողմից յատուկ է ամեն հարաւային ազգերին, իսկ միւս կողմից դա մեկնվում է մեր հասարակական դրութեամբ . . . Կովկասի բնակիչները քիչ պահանջմունք ունին, նոքա աւելորդ ժամանակ ունին, կամ աւելի լաւ տաեմ, նոքա չեն գնահատում ժամանակը: Նոքա չեն շտապում գործել, գնալ, խօսել . . . նոքա խօսում են գրեթէ երգելով . . . :

„Հին հայկական լեզու արտարայտութիւն է հին հայկական կրթութեան: Ինչպէս և բարձր լինէր այն կրթութիւնը, նա դարձեալ միակողմանի էր, այն դարերի սույլ պահանջմունքին

Համապատասխան լինելով... Մեր աղքատ, անտաշ աշխարհաբարությունների արդիւնք է մեր աղքատ հասարակական կեանքի<sup>21)</sup>:

Յետու գառնալով Ա. Ստեփանէի՝ լեզուի մէջ մտցրած նորաձեռութիւններին, Գ. Արծրունին շարունակում է՝ „Երկուսից մէկը. կամ համբական լեզուն անընդունակ է զարգանալ հասարակական պահանջմունքի համեմատ և ուրեմն ժամանակով բոլորովին չի գործածվի երկրի մէջ,—կամ եթէ կշրունակէ գործածվել հայերի հասարակական յարաքերութիւններում, նա պարտաւորված կլինի մեծ փոփոխութիւններին ենթարկվել: Մի յեզրի գոյնիժեամ կույի համար հարկաւոր են աջողակ հանգամանքը և պարմանները: Մեր լեզու հարստացնելու առաջին պարմաններից մէկը պէտք է լինի գիտնական տացգածներով հարստացնելը: Բայց պակաս նշանակութիւն չունեած է ունենան նորա գործածութիւնը հեշտացնելու փորձերը: Այս կողմից նշանաւոր են պ. Ստեփանէի ջանքերը<sup>22)</sup>...

Նեկինակը վերջացնում է իր յօդւածը հետևեալ առաջարկութիւնով. „Աշխարհաբարը կարօտ է վերանորոգմանը. պատպիսի աշխատանքը վեր է մի անձի զօրութիւններից: Հասարակութիւնից ենք սպասում, որ նա, հասկանալով այս ճշմարտութիւնը, աշխատէ համբական յեզրագիտական պարբերական ժողովները հիմնել, որոնց միջոցով կարողանան մշակվել նոր լեզու ձեւերը: Ֆողովին կմասնակցեն համբական գիտնականները, աշխարհաբար կամ գրաբար լեզով գիրք հրատարակողները, ուսուցիչները, հայկական օրագիրների և լրագիրների ներկայացուցիչները՝ Աէնէցիացից սկսած մինչև Թիֆլիս, և այլն,

Գրեթէ այս յօդւածով վերջանում են Գ. Արծրունու արտասահմանում Հայոց վերաբերութեամբ և փոքրիշատէ աչքի ընկնող գրածները:<sup>22)</sup>

22) Աւելորդ չէ այսուեղ ներկայացնել Գ. Արծրունու 1865—1871 թ. տպագրւած յօդւածների ցանկը ժամանակագրական կարգով:

Կարելոյն չափ երկարօրէն քաղւածներ անելով Գ. Արծ-  
րունու աշխատասիրութիւններից, մեր միտքն էր ցոլց տալ նրա  
թէ ընտրած նիւթերը և թէ սրանց մշակներ ձեւը, թէ  
գրութեան ոճը և թէ լեզվի գիտութեան չափը. Մենք ցան-  
կացանք, որ ընթերրողը նոյն իսկ Գ. Արծրունու գրւածներով

- 1) 1865 թ. Մեղու, № 13, 14. Բնական գիտութիւնների նշա-  
նակութիւնը գաստիարակութեան մէջ:  
2) > Մեղու, № 23. Երկու խօսք աղջիկրանց դաստիա-  
րակութեան վերաբ:  
3) 1867 թ. Մեղու, № 49. Ազգային գրաստոններ:  
4) > Հայկ. աշխ. № 4, 5. Աշխատենք:  
5) > > № 9. Գերդաստանի ազգեցութիւն  
և համալսարան:  
6) 1868 թ. > > № 1. Ի՞նչ է կնամմարդ:  
7) > > № 2, 3. Երկուսից որն է լաւը:  
8) > > > Նամակ գէպի խմբագրող:  
9) > > > № 5, 6. Արկին համալսարանի մասին:  
10) > > > № 9. Գրականութիւն շկալ:  
11) > > > № 10. Խղէալսատներ:  
12) > > " Պելօդօ դաշլիճի ժողովներ:  
13) > Մեղու № 35. Շարունակենք թէ ոչ:  
14) > Հայկ. աշխ. № 11. Ի՞նչի չենք հիմնում:  
15) 1869 թ. > > № 1—2. Նամակ գէպի խմբագրու-  
թիւն:  
16) > > > № 3. Ցիւրիսի համալսարան:  
17) > > > " Հայկական Բնարք ասիթով:  
18) > > > № 4—5 Կանանց աշխատանք Ֆրան-  
սիայում:  
19) > > \* № 6—8 Բարոյականութեան արտօ-  
նութիւն:  
20) \* \* > № 9 Գերմանացի իրաւարանների  
ժողով:  
21) \* \* \* " Նամակ գէպի խմբագրութիւն:  
22) \* \* \* № 10—12. Խառն ուսումնարանների  
խնդիր Հէպլէրգում:  
23) \* \* \* \* " Նամակ Փարիզից:

ծանօթանալ նրա թէ հոգեկան տրամադրութեան և թէ մտաւոր զարգացման հետ։ Մենք կարելովն չափ նկարագրեցինք լիշեալ պարոնի թէ գերդաստանական և տոհմական վիճակը ու հանգամանքները, թէ մանկութիւնը, ծնողների ազդեցութիւնը և ընտանեկան ու ընկերական շրջանը, թէ պատանեկութիւնը և երիտասարդութիւնը, և թէ, վերջապէս, իրքեւ հասուն մարդու՝ նրա գրականական ասպարէզ դուրս գալլ՝ ուրիշներին սովորցնելու, ուրիշներին խրատելու... Քանի որ մենք հասցրեցինք Գ. Արծրունուն մինչև 1870 թւին Թիֆլիս վերադառնալլ, բոլոր

- |             |    |    |  |
|-------------|----|----|--|
| 24) 1870 թ. | >  | ,  | № 1. Երկրորդ նամակ Փարիզից:                                      |
| 25)         | "  | "  | " նոր տարը:  |
| 26)         | "  | "  | № 3, 4. Մարքը բախոնելու իրաւունքը:                               |
| 27)         | "  | "  | > նամակ դէպի խօսագրութիւն:                                       |
| 28)         | "  | >  | " Կոմս գը Մօնտալամբէրէր:   |
| 29)         | "  | "  | № 5, 6. Հասկանանք վերջապէս:                                      |
| 30)         | "  | "  | " Մեծ Միսիթարի մահի տարե-  |
|             |    |    | դարձած Ս. Ղազարի վանքում:  |
| 31)         | >  | "  | > Հասարակական կը թութիւն:  |
| 32)         | "  | >  | № 7, 8. Բաւական չէ:  |
| 33)         | "  | "  | " Ֆրանսիա և Գերմանիա (նմա-                                       |
|             |    |    | նապէս № 9, 10):  |
| 34)         | "  | "  | > Կ.-Պօլսի երեկոներ:   |
| 35)         | "  | "  | " " Յուշիկը Հայեննեաց Հայոց".                                    |
| 36)         | ,, | ,, | № 9, 10, 11. Նամակ դէպի խըմ-<br>բագրող:                          |
| 37)         | ,, | ,, | № 12. Աշխարհաբարի նորանեռ-<br>թիւնների հասարակական նշանակութիւն: |
| 38) 1871    | ,, | ,, | № 1, 2. Աշխատանքի բաժանու-<br>թիւն:                              |

Բացի այս յօդւածները Գ. Արծրունին արտասահմանից շարունակ հաղորդում էր „Հայկ. աշխարհին” Հայոց վերաբերեալ գրւածներից բազմաթիւ քաղաքներ, որոնք գետեղում էին օրագը և „Մեր ներքին գործեր” բաժնում։

վերոլիքերեալ մեր զրւածը պիտի նկատուի իրբեւ նախերգանք  
կամ յառաջաբան մեր ապագայ տեսութեան նրա հետազար  
գործունէութեանը, որ սկսում է իր հայրենիքում—Թիֆլի-  
սում։ Եւ քանի որ այդ տեսութիւնն էլ արդէն մօտ ժամա-  
նակներում լուս պիտի տեսնէ և հիմնած պիտի լինի ներկալ  
ներածութեան վրայ, մենք թաղինք աշխատութեանս երկրորդ  
մասին համար այն բոլոր կէտերի լուսաբանութիւնը, որ, բնա-  
կանապէս, կըպահանջւէր մեզանից։ Այնտեղ պարտք կըհամարենք  
լուծել Գ. Արծրունու մինչև արար ունեցած բաջողութիւն-  
ների և անբաջողութիւնների պատճառներն ու պարմանները,  
նրա արժանաւորութիւններն ու թերութիւնները, նրա լաւն  
ու վատը և այդպիսով երբ 1865—1871 թւերի հետ կըկա-  
պենք և հետազար 1872—1890 թւականները, մեզ աւելի յա-  
ջող կըդիմի միանգամից որոշեն Գ. Արծրունու գործու-  
ներութեան շափը։

## ՎԵՐԶ



Գործիս եր. 18, տող 2 տապած է „Աղէքսանդր Ա“, պէտք է  
կարդալ „Աղէքսանդր Ա“։



